


ԳՅՈՒՂԱՏՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

===== ԱՄԵՐԻԿԱԿԱՆ =====

ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ԳՐՈՅ. Մ. Պ. ԳՐԻԳՈՐՅԵՎԻ  
Ա. Ռ. Ա. Բ. Ա. Ն. Ո. Վ.



Դիմադրեց Գ. Մուրադյան

ՀՀԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1926

1 MAR 2010

№ 10 ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 10

371.4  
9-68

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

== ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ==

ԴՊԲՈՑՈՒՄ

15400

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ԴՊԲՈՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՊՐՈՖ. Մ. Պ. ԳՐԻԳՈՐՅԵՎԻ  
Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն. Պ. Վ.

Փոխադրեց Գ. Մուրադյան

ՊԵՏԱԿԱՆ ՀՅԱՍՏԱԿՁՈՒԹՅՈՒՆ

1926

29 03 2023

48 756

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Ներկայումս, յերբ մանկավարժական մտքի ուժ-  
գին հեղաշրջում (խմորում) և կատարվում և ամբողջ  
դպրոցական կյանքի և աշխատանքի խոր բնկոմն, ա-  
ռանձին մեծ նշանակություն ունի ուրիշ յերկիրների  
դպրոցական աշխատանքների հետ ծանոթանալն ու  
նրանց փորձից ոգուտ քաղելը՝ առանց նրանց սիստեմները կրկնելու,

Կասկած չկա, վոր մեր գյուղատնտեսական յերկրում, մեր աշխատանքի դպրոցում առանձնապես կարեոր տեղ պետք է տրվի գյուղատնտեսական արտադրության: Դրան ապացույց կարող են ծառայել նորերու միասնական աշխատանքի դպրոցի համար հրատարակած ծրագիրները և այն յեռանդուած աշխատանքը, վորով ձգուում են գյուղական մասսայական և գյուղական յերիտասարդության դպրոց ստեղծել: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգների փորձը գյուղատնտեսական կրթություն տարածելու գործում մեզ համար առանձին հետաքրքրություն և ներկայացնում, վորովնետե այդ ընդարձակ յերկիրը շատ նման և մեր յերկրին՝ թե յուր ընդարձակությամբ, և թե յուր ըլությամբ, վորոնք ուժեղ կերպով ազգում են գյուղատնտեսական արտադրության բնույթի վրա: Առաջարանիս կցված քաղվածորեն արած թարգմանությունը ե. Ն. Վավիլովա-Սախարովայի կողմից կատարված և բավական զգալի կրծատումներով, Այդ տեղի յետնեցել գլխավորապես նրա համար, վոր նյութը

37927.62

Դրանեալ. № 330 Պ. № 1100. Պետրաս. 361 Տիր. 4000

Պետրասի Խ տպարան (Ենթականում)

Եցուն չինի մեր բնության և պայմաններին անհամապատասխան, և հետեւապես մեծ հետաքրքրություն չւերկայացնող նյութով և յերկրորդ գիրքը հարավորության չափ եժանացնելու ցանկությամբ, վորովհետեւ զրբի նպատակը վոչ թե նյութի բազմազանության ծանոթացնելն է, այլ նրա վերամշակության, մանավանդ դպրոցական գյուղատնտեսական աշխատանքի ընդհանուր մեթոդներին:

Կարծում ենք, վոր իրական աշխատանքի մանրագննին ծրագիրներ բովանգակող այս զերքը՝ յուր զերը կունենա վոչ թե կենդրոնի մեթոդներ Շամկող կինդրոնական մանկավարժների համար, վորոնց չարժեր թարգմանել այն, այլ նա հարկավոր ե գլխավորապես մասսայական ուսուցչներ, վորը պարտավոր և մեր միության խուլ անկյուններում կազմել յուր ծըրագիրները տեղական իրական նյութերի շուրջը՝ ոգտիկով լուսավորության կոմիսարիատի ուրբագծերով։ Անդրովկիանյան ուսուցչության վորձն այդ աշխատանքի առաջարիգում քիչ ոգուտ չի տա նրան։

Մենք ուզում ենք կարծել, վոր սույն դրքում արժեքավոր շատ բան կը գտնեն իրենց աշխատանքների համար և այն մանկավարժներն ու ձեռնարկողները, վորով ցանկանում են գլուղական յերիտասարդության համար ապագա դպրոցներ ստեղծել։ Հետաքրքրութիւնի ստուգել այդ ծնունդ անող դպրոցներում այս զրբի մեջ առաջտրկված մեթոդներն ու մանկավարժական մոտեցումները մասսայական աշխատանքի ժամանակ։ Նրա առաջին քայլերին իսկ, ամերիկական գյուղական դպրոցը, ցուցադրելով յուր մտածված և կարգավորած մեթոդիկան, կընդունի ավելի հեշտու-

թյամբ սկարպելու և բյուրեղացնելու մեր սեփական մեթոդը, համաձայն տեղական պայմանների և մեր քաղաքական ու հասարակական կենցաղի։

Պրոֆես. Մ. Պ. Գրիգորյել

Դպրոցական աշխատանիքի  
մերոդների ինստիտուտ։

Մոսկվա, 7 հունիսի 1924 թվի։

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ

Ներկա աշխատանքը քաղվածորեն թարգմանություն և սոորկ առաջ բերած ամերիկական չորս ծըրագիրներից։

Գյուղատնտեսական արտադրության վերաբերյալ ամերիկական ծրագիրները խիստ կերպով հարմարեցրած են տեղական պայմաններին, բայց վորովհետեւ նրանք մշակվել են տեղերում՝ գյուղատնտեսական կոլլեջների, ժողովրդական լուսավորության բաժինների և Վաշինգտոնի հողբաժնի վարչության կողմից, այդ պատճառով նրանց մեջ պահպանված և պարագաներների ընդհանուր պլանը (Նախարդակը)։ Մեր ձեռքի տակ յեղած ծրագիրներից ամենամանրամասն մշակված և Հյուսիսային Կարոլինայի ծրագիրը, վորը և կազմել ե ներկա աշխատանքի հիմքը, բացի այն հասուկ մշակույթներից, վորոնք անհնարին են մեր կլիմայական պայմաններում։ (Հյուսիսային Կարոլի-

նան գտնվում և թուրքեստանի լայնության վրա):

Դպրոցական այդ ծրագիրների մեջ հատուկ ուշագրություն և դարձրած շարքային մշակույթների (յեղիպատճենի, չինական պնդուկի, գետնափառքի) և լորիաձեկ բույսերի վրա (լորու, սոյա, գյուլուկի, յոնջայի և կորնկանի վրա): Մեր պայմաններում կարտոֆիլը շնորհիվ յուր բազմատեսակ գործածության, ամենահասութաբեր շարքաբույն և հանգիսանում, վորովհետև նա հարկավոր և թե մարդկանց և թե անասուններին, Ծրագիրը լրացնելու նպատակով սույն հրատարակության մեջ մացրինք հողագիտության ու պարարտացման վերաբերյալ դասեր, քաղելով այն հարավային նահանգների գյուղական դպրոցներին հարմարեցրած ծրագրից: Այս ծրագիրները ի նկատի յեն առնված յերկու տարվա համար՝ գյուղական յութնամյա գպրցներում գյուղատնտեսություն դասավանդելու 12-14 տարեկան մանուկներին վերջին յերկու խմբակներում:

Առաջին տարին սովորաբար նվիրվում և բուսաբանության ուսումնասիրության՝ այդում, պարտիզում, բանջարանոցում և գաշտում, իսկ յերկրորդը՝ անասնապահության:

Ուսումնասիրելիք նյութի ներկայությունը բնականորեն ցույց է տալիս, վոր բուսաբանություն և բույսերի մշակույթյան աշխատանքները պետք է կատարել աշնանն ու գարնանը, իսկ անասնապահության՝ ձմռան արիմսատրին: Այս ձևով մանուկների տնային աշխատանքները, վրանք տարվում են ձրագիրներ կազմելու համար, միացնում են ամբողջ տարվա դասավանդությունը:

Ներկա աշխատության համար մենք ոգտագործեցինք հետեւյալ հրատարակությունները:

1. A Manual for Teachers giving a first years course in Elementary Agriculture for 6-th and 7-th grandes, № 31.
2. Courses of Study in Agriculture. Commonwealth of Pennsylvania Department of Public Instruction 1923.
3. Lessont in plan Production for Southern Schools by the federal Board for Vocational Education, Washington, Bull № 53, 1920.
4. Lessons in Animal Production for Southern Schools. Bull № 56, 1920.

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Յերկարամյա ուսուցչությանս և այլ պաշտոններ վարած միջոցին միշտ յեղել եմ այն խորին համոզման, վոր գյուղատնտեսական աշխատանքն ու գիտելիքները գպրցական աշխատանքների հիմքը պետք է կազմեն: Դեռ 1880 թվին, լինելով Զաքաթալա, գըպրցին կից ունեցել եմ ծաղկանոց և բանջարանոց, վորտեղ աշակերտները լծվել են աշխատանքի ամենայն սիրով, սովորել և աշխատել, աշխատել և սովորել, ստեղծելով մի չքնաղ անկյուն: Նույնպիսի աշխատանքի ջատագով ու պաշտպան եմ յեղել և ճիմարանում 1893 թվին և գաշտային կեցի: շախմաթ և այլ խաղալիքների հետ զնել եմ գյուղատնտեսական ձեռքի գործիքներ և խրախուսել աշխատանքը՝ անձնա-

կան որինակով: Նույն մտագրությամբ հիմնարկել եմ կարսի դպրոցական շենքը և կից արհեստանոցները, վորոնք կիսակատար մնացին շնորհիվ ցարական բըռնապետության: Նույն նպատակով եմ կատարել թափրիզի կենդրոնական դպրոցի շենքի ու պարտեզի գնումը, վորը բացվեց ինձանից հետո: Նույն միտքն եմ պաշտպանել և՝ մամուլի եջերում, և 1921 թվի գյուղատնտեսական դասընթացներում (Ղարաքիլիսա), և 1921 թվի ուսուցչական դասընթացներում (Դիլիջան), և 1922, 23, 24 և 25 թվականների ուսուցիչների վերապարաստության ժամանակ՝ Բայողեղում: Տաէ ամարային կուրսերին գյուղատնտեսական-մանկավարժական թեքումն, վերապարաստել ուսուցիչներին գործնականապես, իսկ աշակերտներին վարակել աշխատասիրությամբ: Կապել նրանց տեղական կյանքի աշխատանքի հետ, ուսումնասիրելով տեղական կյանքի կլիմայական պայմաններով մեղ ընձեռած բոլոր հնարավորությունները, ահա այս և յեղել գլխավոր նպատակս: Յերբ դպրոցական հողամասերը վորոշում եյին հանձնել շրջորդկոմիսերի իրավասության և զրկում ուսուցիչներին և աշակերտներին նրանց վրա ազատ աշխատելու իրավունքից, յես դառն կսկիծով բողոքում եյի այդ սխալանքի դեմ, վորովհետեւ տեսնում եյի աշխատանքի դպրոց ստեղծելու մեր բոլորիս ջանքերի խորտակումը: Յես խորին վիշտ եյի զբում, յերբ հայ մանուկները հարկադրվում եյին սովորել վերացական ծակ փիլիսոփայություն, յերկրաչափական առաջատարություն և սրանց նման բաներ, բայց տեղեկություն չունեցին հողից ու ջրից, ծառից չգիշեյին, վոր ծառը կորիզից, սերմից, շենք և բուսնում:

Մեր փոքրիկ սիրուն յերկիրը զուտ գյուղատնտեսական է: Գյուղատնտեսությունն ե նրա ապրուստի և բարեկեցության աղբյուրը: Գյուղատնտեսությունն ե նրա կյանքի հիմքը:

Ժամանակակից դպրոցը պետք ե լինի այդ կեանքի հայելին, նրա մի մասը, նրա հետ անբաժան կապված ամբողջությունը, նրա աստիճանական բարելավության նախաձեռնողն ու առաջնորդը:

Թե փոքրահասակների և թե գյուղական յերիտասարդների համար բացվող դպրոցները միակող կլինեն, նպատակին չեն ծառայի, յեթե կապված չլինեն տեղական կյանքի, հողի ու հողագործական աշխատանքի հետ չուսուցանեն գործնական աշխատանքի լավագույն գրագիտություն:

Մենք պետք ե ունենանք անպայման աշխատանքի դպրոց տեղական կյանքից անբաժան: Մենք պետք ե վերադարձնենք դպրոցական հողերն ուսումնարաններին: Ուսուցչական վերապարաստության դասընթացներն ունենանք ձմեռը, իսկ գյուղատնտեսական աշխատանքների համար յուրաքանչյուր գավառի և ուսուրամնին կից ունենալ հարկավոր թվով հրահանգիչներ՝ առանց բարդելու ներկա վարչակազմը:

Մեր յերկիրը՝ թեև փոքր, բայց ունի չորս կլիմայական գոտիներ, ա գաշտային—բամբակի, խալողի և բրնձի գոտի, բ լեռնակողեր՝ պտղաբուծության, շերամապահության և հացաբույսերի գոտի:

գ. Լեռնային—հացաբույսերի, պտղատու ծառերի, խոտաբույսերի և բանջարաբուծության գոտի, դ. Ալպյան արոտատեղիների—զուտ անասնապահության գոտի:

Ինչպես վոր ոռւս թարգմանչունին կը ճատումներ և արել ըստ իր յերկրի կլիմայական պայմանների, այնպես ել յես կաշխատեմ լրացումներ անել ըստ մեր յերկրի կլիմայական պայմանների:

Մի կարեւը հարց բաց ե մնում .—իսկ վորտեղից, Բնչպես և Բնչ նյութերով պետք ե ոգտվի ուսուցչությունը սույն ծրագրով պահանջված աշխատանքները դպրոցում և կից տնտեսությունների մեջ անցկացնելու համար:

Այս նպատակով պետք ե դպրոցներին մատակարարել զյուղատնտեսական, հայերեն հրատարակված վողջ կը ականությունը:

Մատադրություն ունեմ մոտ ապագայում տար «Գյուղատնտեսի որացույց», վորի մեջ մանրամասն կանգ կառնեմ մեր այդ չորս գոտում յուրաքանչյուր ամսին պահանջվող աշխատանքների և նրանց լավագույն ձեռերի վրա և հնարավորության չափ բավարարություն կը տամ աշխատելու ծարավ ուսուցչությանն ու զյուղացությանը:

Ծրագրի առաջաբանում շեշտված ե, վոր նա 12—14 տարեկան մանուկների համար ե: Նշանակում ե, վոր մեր դպրոցների գ և դ խմբակներում հնարավոր ե զործադրել այս: Մեր զյուղական միջավայրում մանուկներն 8 տարեկան հասակից մասնակցում են ծնողների կատարած ամեն. տեսակ աշխատանքին և գիտեն շատ բան: Ուսուցչի աշալը ջությունից և կտիված այդ հանդամանքից ոգտվելը և աշխատանքն ավելի լավ հիմքերի վրա դնելը:

Թեև անտեղի մեղադրողներ շատ ունի մեր ուսուցչությունը, սակայն յես մոտից ճանաչում եմ:

Նրան: Ինձ հայտնի յի նրա աշխատելու տեսչը, ոգտակար լինելու ծարավը և գա շատ մեծ գրավական ե, վոր նա բեղմնավոր կը դարձնի դպրոցի աշխատանքը մեր գյուղական միջավայրի համար, վորում ի սրտե հաջողություն եմ մաղթում նրան:

Յեթե Ամերիկյան Միացյալ-Նահանգները կարիք են համարել յուրյանց զյուղական դպրոցների հիմքն ընդունել գյուղատնտեսական աշխատանքը, վարչափով պետք ե մենք ավելի պարտադիր գարձնենք այն մեր հետամիաց յերկրի և գյուղացիական տնտեսական մտավոր և կուլտուրական վերածնության համար:

Խորհրդային իրավակարգի հնգամյա տեսզության ընթացքում հայ ուսանողությունն ու աշխատավորությունը ցույց տվավ, վոր գիտե աշխատել, վոր նա յուր յերկրի և ժողովրդի զեղծարար զավակ չե, վոր նա սովոր ե դիմանալ ամենադժվարին պայմաններին և զրկանքներին, վոր նա ծարավ ե աշխատանքի, աշխատում ե և ցանկանում ե աշխատել լավագույն ապագայի հուսով, իսկ լավագույն ձեռնարկներ ե ուղեցույցներ ունենալու դեպքում, հավատացած եմ, վոր նրա աշխատանքը կլինի արգասավոր:

Ահա այդ հավատով ե, վոր տպագրության եմ հանձնում այս կարեսը գրքույկը:

Գ. Մուրավյան

## ԸՆԴԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒԽԲՆԵՐ

### ԶԲԱԴՄՈՒՆՅԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԴՐԱԿԱ

Աշխատանքների վողջ նախարդակը հարմարեցրած է.

1. Տարվա յեղանակներին, վորպեղի մանուկներին հնարավորություն տրված լինի համապատասխան զիտողություններ կատարելու և իրենց զիտցածները գործադրելու համար:

2. Տեղական բնույթ ուսեցող նյութին, վորն ընզրկում և տեղական, ըջանի կամ նահանգի կարիքներն ու շահերը:

3. Մանուկների մեջ անձնական հետաքրքրություն զարթեցնելու, վոր նրանք իրենց զիտցածները գործադրեն անային աշխատանքի ժամանակ, ընտանեկան ծրագրների և խնդիրների միջոցին:

Հնատանեկան աշխատանքները ցույց են տրված ամեն տեղ, ուր միայն պահանջվում է համաձայն զամերի բովանդակության: Սույն ձեռնարկը հրատարակվում է ուսուցիչների և վոչ թե աշակերտների համար: Սաների համար նշանակված ցուցումները տրվում են վորպես ձեռնարկ ուսուցիչների համար: Փոքր դպրոցներում գյուղատնտեսական աշխատանքի ժամանակ կարելի յե միացնել յերկու բարձր խմբակները: Մեծ միացյալ դպրոցներում աշխատանքը կարելի յե տառնել յերկու դասարաններում գուցընթացաբար:

Ի՞նչպես ուսուցանել: — Գյուղատնտեսական աշխատանքով ամենայն որ պարապելու գեպում հնարա-

վոր և անցնել ամրող ծրագիրը, բացառությամբ այն մասերի, վորոնք տեղական նշանակություն չունեն: Այդ գեպում ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել այն հարցերի վրա, վորոնք տեղական տնտեսության համար առանձին նշանակություն ունին:

Ցեթեւ ուսուցչի ժամանակը սահմանափակված է, պետք է անցնել միայն այն, ինչ վոր բացառիկ տեղական հետաքրքրություն ունի թե բույսերի և թե տնասնաբուծության վերաբերությամբ: Ուշադրությունը ամենամեծ չափով պետք է կենզրոնացնել այն բանի վրա, ինչ վոր մանուկները կարող են գործադրել իրենց ընտանեկան աշխատանքների և ծրագրումների ժամանակ: Հետեւալ տեղը պետք է գրավի այն ամենը, ինչ վոր առանձարակ տեղական կարիքներին և վերաբերում: Խուսափեցնեք զասավանդությունը ձրգձգելուց, ինկատի առնելով զիտցածների համապատասխան գործնական աշխատանքների գերազանցությունը՝ թե զաշտում և թե տանը: Մի չանաք սովորեցնել ամեն բան: Մի ձգտեք բավարարություն տալ միայն հետաքրքրությանը և մի փոխարինեք մանուկների շահերը ձեր շահերով:

Աղյուրներ յիշ տեղեկատվեր: — Յուրաքանչյուր դասի համար ցույց են տրված համապատասխան դասագրքեր և յերկրագործության վարչության բյուլետենները՝ պարբերական տեղեկատուններ, վորոնք ծառայում են վորպես ուսուցման հիմունք: Այդ աղյուրները պետք է ոժանդակեն ուսուցչին, բայց նրա դեկավարությամբ կարող են ողտագործել նաև աշակերտները: Այս գեպում ուսուցիչը պետք է կանխապես հաշվի առնի աշակերտների կարողությունն ու հասկա-

ցողությունը և ապա ըստ այնմ պետք է նրանց ձեռքը դասագիրք տա՝ անմիջապես ոգովելու։

Դպրոցական լերկագործական գրադարանը.—Լուս-բաժարի և մանուկների ոժանդակությամբ ուսուցիչը պետք է կազմի դպրոցական գյուղատնտեսական գրադարան, Վաշինգտոնից՝ վիճակագրական բյուրոյից, անհրաժեշտ է դուրս գրել վերջին վիճակագրության տվյալները Միացյալ-Նահանգների մասին, վորին պետք է կցված լինեն և ձեր նահանգի մասին տեղեկություններ\*): Յուրաքանչյուր գիրք կամ պարբերական հրատարակություն պետք է լինի համարակալած և գրոշմած։ Մանուկները կարող են ոգնել գրադարաններ կազմելիս։

Գործնական աշխատանքների դասերին կազմել գրադարանի գրքերը կամ պահպանակներ և այլ բաներ պատրաստելը։ Յուրաքանչյուր մանուկ պետք է սովորի յուր իսկ ձեռքով գրել յեղիքագործության գարչաբաժնին և գյուղատնտեսական կոլեջին ուղղած զիմումներ՝ այնտեղից պարբերական հրատարակություններ ստանալու համար։ Դպրոցական միջոցները պետք է ծախսել գրադարանի վրա մեծ զգուշությամբ, գնելով միմիայն ամենալավ ձեռնարկներ, վորոնք անպայման անհրաժեշտ են տեղեկանքների համար։

Յուցադրական նյութեր.—Աշակերտների ոգնությամբ պատրաստեցեք գյուղատնտեսական գանա-

\*) Ներկա գեպօւմ նման տեղեկություններ պետք է պահանջենք Յերևանից, վորոնց պետք և կցված լինին բոլոր կարեռ տեղեկություններ մեր գավառի կամ շրջանի մասին։

գան նյութերի դպրոցական ժողովածուներ։ Ժողովեցիք կենդանիների լուսանկարներ, գյուղատնտեսական ցուցահանդեսների ցուցակներ, մեքենագործարանների աղղանկարներ (պրեյսկուրանաներ) ևայլն Մանուկները կարող են կառուցել տնտեսության զանազան շենքերի կաղապարներ, կազմել սերմերի ժողովածուներ, ժողովել կուլառուրական և մոլարյույների, հոգերի, պարատանյութերի, ծառերի գանազան փայտեղինի ժողովածուներ ևայլն։ Այդ բոլորը խնամքով պետք է հակազրած լինի և պահված։ Անհրաժեշտ է ընդորինակել նահանգի կամ շրջանի քարտեղը զանազան զծաչափերով (մասշտաբներով)։

Զննումներ.—Տեղական տնտեսության հետ ծանոթաւություն լավագույն միջոցն է մանուկների ոգնությամբ կատարած զննությունը լամ ցուցակագրությունը։ Ստացված տեղեկությունները հիմք են դառնում յերկրագործություն ավանդելու, ուղղություն են տալիս նրան և ծառայում են հետագա վիճակագրության հետ համեմատելու, միաժամանակ ցույց տալով թե աված տեղը ինչ չափով ե տնտեսապես զարգացել։ Այսպիսի հետազոտություն կատարելիս անհրաժեշտ է ա.

1. Կանխապնս պարզել ձեզ հետաքրքրով բոլոր հարցերը։

2. Կազմել մանուկների հետ այդ հարցերի ցուցակը և կանխապես արտագրել տալ նրանցից յուրաքանչյուրին։

3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է նկարագրի մի քանի տնտեսություններ և հնարավորության չափ պետք է աշխատի ընդգրկել ամբողջ վայրը։

4. Ուսուցիչը պարտավոր ե նույնպես մասնակցել այդ հետազոտությանը, վորպեսզի ծանոթանա տեղական ազգաբնակության հետ:

5. Բոլոր տեղեկությունները պետք ե ժողովելու վերամշակել ամենահարմար ժամանակ:

6. Դպրոցի շրջակայքի քարտեղը պետք ե դարձնել բազմատեսակ. հետազոտության բոլոր տվյալները պետք ե նշանակվեն նրանց վրա ներկերով կամ նշաններով:

7. Հնարավորության չափ այդ աշխատանքները պետք ե կապվեն թվարանության, աշխարհագրության և լեզվի դասերի հետ:

Յուրաքանչյուր քարտեղին պետք ե կցված լինեն բացատրություններ, հետազոտության ժամանակը և տեղեկանքների համար պետք ե պահպի դպրոցում:


9. Ուսուցիչը պարտավոր ե ոգտագործել այդ տվյալները դասավանդության ժամանակ:

Դպրոցական ցուցանիշներ. — Տարեկան գեթ մի անգամ դպրոցը պետք ե կազմակերպի ցուցանագես, վորը պետք ե հետեւի մանուկների կատարած աշխատանքների ավարտման՝ իրենց ընտանեկան ծրագրաշնուրում: Մանուկները հնարավորության չափով իրենք պետք ե մասնազրին. ցուցադրելի եքսպոնատները, վորոնք պետք ե գաղափար տան մանուկների իրականում կատարած աշխատանքների մասին: Ցուցահանդես կազմակերպելու համար պետք ե գործի հրավիրել դպրոցական աշխատանքների գեկավարին, տեղական գյուղատնտեսին, տեղական գյուղատնտեսական ընկերություններին և կազմակերպություններին: Մանուկներն իրենք կարող են կազմել ծրագրներ

և ցուցահանդեսի հրավիրագրեր: Կարելի յե կազմակերպել մանուկների համար մրցություններ, վորոնք պետք ե կապ ունենան անցած նյութի հետ: Ցուցահանդեսը պետք ե արձարձի այնպիսի հարցեր, վորոնք կապ ունեն տեղական տնտեսական կյանքի դարպացման հետ:

Դյուլատենտեսության խորհրդառու հանձնաժողով.— Տեղական զիտակից և դպրոցի կյանքով հետաքըրքը բնակիչներին պետք ե գործի կանչել խորհրդառու հանձնաժողովի մեջ, վորը պետք ե կազմված լինի դպրոցական խորհրդին կից: Այդպիսի 3 կամ 5 հոգուց կազմված խորհրդը ահագին ոգնություն ցույց կտա ուսուցչին՝ ցույց տալով դպրոցի շրջակայքի լավագույն տնտեսություններ, տեղական տնտեսության գործնական հարցերի վերաբերյալ ցուցումն և այլն. աջակցելով կազմել եքսկուրսիաներ և ոգնելով, վոր մասուկներն իրագործել կարողանան իրենց ընտանեկան աշխատանքների ծրագիրները: Այդ մասնաժողովը կարող է ներկայացնել լինել նաև տեղական գյուղատնտեսական կազմակերպությունների:

Եխկուրսիաներ.— Պարապմունքի ժամերին և յուրաքանչյուր անգամ, յերբ հարկավոր ե վորոշ հարցերի ուսումնասիրություն, դասարանը պետք ե այցելի մերձակա տնտեսություններ: Այդպիսի եքսկուրսիաների ծրագիրը պետք ե առաջնուց մշակվի, վորպես զի անցանկալի պատահականություններից խուսափելու հնարավորություն լինի: Դասարանում կանխապես պետք ե քննության առնել եքսկուրսիայի նպատակները, վորպեսզի նա պարզ լինի բոլոր աշակերտների համար: Ցեղի մտագրություն կա նյութեր հավաքե-



լու, այդ գեղքում առաջուց պետք ե կազմված լինին րանց ցանկը, վորպեսզի ամենքը գիտենան, թե ինչ պետք ե վորոնել:

Ցեթե զիառզություններ են կատարվելու, պետք ե արձանագրել այն, վորպեսզի տպավորությունների խառնաշփոթությունից խուսափենք: Յուրաքանչյուր եքսկուրսիայի բովանդակությունը պետք ե գրության առնվի վորպես մայրենի լեզվի դաս: Եքսկուրսիան պետք ե գործնական բնույթ ունենա:

Ընտանեկան նախագծեր—Նախագծերը պետք ե լինեն ամբողջացած մի աշխատանք և պետք ե ընտպրկեն վորոշ ժամանակաշրջանում կատարվելիք աշխատանքների մի շրջան: Սկզբնական յերկրագործության վերաբերությամբ նախագիծը պետք ե իրենից ներկայացնի:—1) զիտողաբար մշակված աշխատանքների ծրագրեներ, վորոնք պետք ե ունենան վորոշ նպատակ և հաշված լինեն բավականին տեսղական ժամանակվա՝ կես կամ մի տարվա համար, 2) այդ աշխատանքը յուր մեջ պետք ե բովանդակի նաև վորոշ նորություններ աշակերտների համար, 3) նա պետք ե կազմի դպրոցական աշխատանքի մի մասը, վորի ժամանակ պետք ե գործադրվեն դասարանում ձեռք բերած դիտությունները, 4) աշխատանքի լնթացքում անհրաժեշտ ե մանրամասն արձանագրել աշխատանքի մեթոդները, ժամանակի տեսղությունը, աշխատանքի արժեքը, մաքուր վաստակը ևայլն. 5) այդ արձանագրությունների ժողովածուն պետք ե կազմի իրագործած նախագծի մանրամասն հաշիվը: Ցանկալի յե, վոր մանուկներն ամեն տարի իրագործեն այդպիսի մի ամփոփ աշխատանք վորեն բույսի կամ կինդանու վերա-

բերությամբ, բայց միշտ պետք ե ընտրել աշակերտների ուժերին համապատասխան աշխատանք: Այդպիսի աշխատանքը հնարավոր ե միայն (ընտանիքի մերձագորների կամ այլ կազմակերպությունների ուժանդակությամբ: Տեղական գյուղատնտեսական կուլիջներ և Վաշինգտոնի արհեստագիտական կըթության բյուրոները նույնպես աջակցում են նման աշխատանքներին:

Դասերի համար նախապատրաստվելը:—Անկախ այն բանից, թե արդյոք ուսուցիչն ունի հատուկ պատրաստություն, թե՛ վոչ, նրան առաջարկվում ե.

1) Կանխապես ծանոթանալ դասերին կից մատնանշած դասագրքերի հետ: Ծանոթանալ տեղական տնտեսության պայմանների հետ, կանխապես այցելելով և զիտողություններ կատարելով: Պատրաստել ցուցադրական նյութեր:

2) Անմիջապես ամեն մի դասից առաջ, պարզ պատկերացրեք ձեր անելիքը: Աչքի անցրեք աղրյուրները և համակերպվեցրեք աշակերտների նախապատրաստության և անհատական ընդունակություններին: Առաջուց նախապատրաստեցրեք եքսկուրսիաներ: Ըստրեցնք մանուկներին համապատասխան նախագծեր, այնպես վոր նրանցից յուրաքանչյուրը կարողանա պատկերացնել իրեն տված հանձնարարություններն ու կատարելիք աշխատանքը:

3) Դասի նյութն ընտրելիս համակերպվեցրեք դասարանի հասկացողության, ձեր ձեռքի տակ ունեցած նյութերին և տեղական պայմաններին: Ստուգեցրեք մանուկների գիտելու ընդունակությունը: Խրախուսեցեք մանուկների ինքնուրույն հետազոտությունները և պահանջեցրեք փաստերի պարզ, ուժեղ նկարագրու-

թյուն։ Մասուկներին հարցնելիս, ցույց տվեք ձեր ունեցած պատկերները։ Ոգնեցեք նրանց, մասնակի հիշեցրեք և վոչ թե ամբողջ փաստերը հաղորդեցեք։ Յերեսույթներն ուսումնասիրեցեք նրանց հետ։

4) Հնարավորության չափ միացրեք դասավանդությունը մյուս առարկաների հետ։ Ընդգծեցեք տանը լրատարած ինքնուրույն աշխատանքների նշանակությունը։ Կրկնեցեք անցածը՝ նոր տվյալների հետ կապակցելով։

## Ա Շ Ո Ւ Ն

(Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր)

Դ Ա Ս 1-ին

### ԲԱՆՁԱՐԱՆՈՅՑԸ ԱՃՆԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Յուցադրական աշխատանք։ — Բանձարանոցային-բույսեր, Մոլախոտեր, հիվանդ բույսեր (ժանդ, ալյուրանման ցող, թող և այլ հիվանդություններ)։

Բանձարանոցի մօակուրյունը ածնան ժամանակ։ — Աշնան հերկ։ Բույսերի մնացորդների հերկի տակ տառը արգելք և հանդիսանում այն վնասակար միջատների բազմանալուն, վորոնք ձմեռում են բույսերի մնացորդների տակ։ Այրել մոլախոտերը (պատատուկ, ճիշխոտ (սեղը) աղջպանջ, ժանգով և այլ սնկային հիվանդություններով վարակված բույսերը։ Ծածկել մորիկ և այլ ուշ ցանած կանաչեղենի մարգերը (սոխ, կոտեմ, մաղղանող, սալաթ, պըսս ևայլն) ծղնոտով կամ չոր տերեհներով։

Խնդիր։ — Ի՞նչպես պատրաստել բանձարանոցը ձմռան համար։

Աջասատանք։ — Լեզվից կազմեցեք մանրամասն տեղեկագիր բանձարանոցում կատարվող աշնանային բոլոր աշխատանքների մասին։

Նկարչությունից։ — կազմեցեք ձեր բանձարանոցի հատակագիծը։

Աշխարհագրությունից։ — ձեր յերկրի քարտեզի ուրվագծի վրա նշանակեցեք բանձարաբուծական զբւխավոր շրջանները։

Թվաբանությունից։ — կազմեցեք բանձարանոցում բուսագրած բանձարեղենների արժեքների և կատարած աշխատանքների արժեքի նախահաշիվը։

## ԳԱՎ 2-րդ

### ԶՄՈԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՆՁԱՐԵՂԵՆ ԺՈՂՈՎԵԼԸ

Յուցադրական աշխատանք։ — Պատրաստել աղած, թթու զրած ու չորացրած բանձարեղեններ։

Բանջարեղենի պահելու ձեվր։ — Բաց ողում արմատապուղները չորանում ու փշանում են (բազուկը, գաղարը, շաղգամը և այլն), կարտոֆիլ պահելու դիտեցեք, թե ինչպես են ժողովում կարտոֆիլը հարկան տնտեսություններում ձմռան համար և ինչպես են պահում։

Ինչի՞ց ե առաջ գալիս բանձարեղենի փշանալը, Բորբոսի սնկիկներ ու բակտերիաներ։ Բանձարեղեն պահելու ամենահասարակ և լավագույն միջոցն է չորացնելը (արկի տակ, սոսսական վառարանում, մեղմ թոնը վրա)։

Յեփելը, աղելն ու թթու դնելն ել նպաստում են բանջարեղենի լավ պահպանության, յերբ ամանները մաքուր են, իսկ խոռվերը մաքուր ու քիվ:

Խնդիրներ.—Ինչու պետք ե պահպանել բանջարեղենը ձմռան համար: Նրանց մեծ նշանակությունը՝ վորպես սնունդ և փշանալը լավ չծածկված միջոցին, յերբ ազատ մուտք ունի ողբ: Ի՞նչպես եք պահպանում բանջարեղենները ձեր տնտեսության մեջ:

Ածխատանիք.—Լեզվից. գրեցեք մանրամասն տեղեկագիր բանջարեղենների պահպանության ձերի մասին:

Նկարչությունից. նկարեցեք բանջարեղեն չորսցնելու ձերը և զրա համար անհրաժեշտ գործիքները:

Թվաբանությունից. հաշվեցեք վարունք, կազմը և այլ բանջարեղեն աղելու արժեքը և համեմատեցնեք այն շուկայի աճառային և ձմեռային արժեքների հետ:

### ԴԱՍ 3-րդ

#### ԱՅԻՒ ԱՇՆԱՆԸ

Ցուցադրական աշխատանիք.—Դասարան բերեք այն բոլոր խաղողների տեսակները, վորոնք բուսնում են ձեզ մոտ և ցույց տվեք, վորոնք են զինու, վորոնք սեղանի և վորոնք պահունի: Նրանցից վորոնք են պվելի համեղ:

Խնդիր.—Արժեք արդյոք այգի տնկելը: Ի՞նչպիսի խնամք և պահանջում այգին: Այգու հատակագծումը: Հողի նախապատրաստությունը:

Աշխատանիք.—Այգու տեղի ընտրությունը, վորը պետք ե պաշտպանված լինի հյուսիսից: Հող մաքրելը

քարերից, հերկելը, տափանելը: Հրավիրեցեք տեղական այգեգործներից մինին, վոր պատմի աշակերտներին խաղողի այգին տնկելու ձերը: Դիտեցեք մերձակա այգիները, վաղերի տեսակները, հողի վրա մնացած վողկույզների փակելը, հատիկների՝ սունկերից և այլ հիվանդություններից (բլեկբու միլգու, ովիդիում) վնասվելը: Վաղի բժշկությունը, կոխվը վնասատուների դեմ:

Նախագիծ.—Սեփական այգին: Հողամասի գիրքը:

1. Հողը, թեքվածքը, հարավակողը.
2. Մշակությունը.
3. Տնկելը. տեսակների ընտրությունը.
4. Շարքերի հեռավորությունն ու վաղերի միջինարածությունը.
5. Խաղողի այգու մշակության անհրաժեշտությունը, փորելը, ավելորդ բույսերից մաքրելը:

### ԴԱՍ 4-րդ

#### ԳԻՒԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Ցուցադրական նյութ: Այգեկություն, խաղող քամելու գործիքներ, մամուլ կարասներ ու տակառներ. ճաճ, զինետուն:

Դիտողություններ.—Ի՞նչպես են կատարում այգեկութը ձեզ մոտ և պատրաստում, պահում գինիներ, ոգտագործում ճաճը:

Աշխատանիք.—Լեզվից. նկարագրեցեք այգեկությունը ու զինի պատրաստելու, խաղող պահելու ձերը ձեզ մոտ և մեծ քաղաքներում:

տանձի, խնձորի, սերկելիի, դեղձի, ընկուղի ևայլն տեսակներ. վհրոնք են ավելի համեղ և պահունի:

Խնդիր.—Արժեք արդյոք պարտեզ տնկելը: Ի՞նչպիսի խնամք և պահանջում պարտեզը: Պարտեզի հատակագծումը: Նախապատրաստական աշխատանքը: Հոդ պատրաստելը:

Առխատանք.—Պարտեզի տեղի ընտրությունը (վորքան հսար և հյուսիսից պաշտպանված): Հողամասը մաքրել քարերից և փշերից. հերկը, փողխելը, հրավիրեցեք տեղական պարտիզաններից մեկին, վորպատմի դասարանին թե ինչպես պետք և հատակագծել և պարտեզ տնկել: Դիտեցեք հարեան պարտեզները, նշանակեցեք ծառերի և գործիքներ:

Նախագիծ.—Սեփական պարտեզի տեղադրությունը:

1. Հողը, թեքվածքը, հարավակողմը:
2. Մշակությունը:
3. Տեսակների ընտրությունը, ծառեր տնկելը:

4. Պտղատու պարտեզի շարքավորումը (2 սաժենանոց քառակուսիներ). պտղատու պարտեզի մշակության անհրաժեշտությունը և հողի փխրուսացման կարիքը (շարքամիջի բույսերից՝ կարտոֆիլ կամ լոբիաձե բույսեր ցանելով):

### ԴԱՍ 7-ՐԴ

ՊՏՈՒՂՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՄԵՐ ԺԱՄԱՆԱԿ

Յուցադրական նյութ.—Ցույց տվեք չորացրած և այլ տեսակի պտուղների որինակներ: Պտուղներ պա-

Քիմիայից յեվ հ՞նչ և կատարվորմ ճաճի և գինու չետ: Ֆիզիկայից հ՞նչպես են ողի պատրաստում:

Թվաբանությունից. Գնահատեցեք զանազան ձևերով պահված խաղողների արժեքը:

### ԴԱՍ 5-ՐԴ

ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԸ ԱՇՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Յուցադրական նյութ.—Բամբակի բույսը, բացված և չբացված բամբակի կնկուղներ, սերմեր, անձրի տակ մացած բամբակ. կորիզներ, բամբակի հիմքանդություններ, բժշկության միջոցներ և գործիքներ:

Դիտողություններ.—Ի՞նչպես են հավաքում բամբակը. ի՞նչ են անում կորիզը. Դիտել քաղը, ջենը, մանելու և հյուսելու գործիքները:

Հարց.—Արժեք արդյոք պարապել մեզ մոտ բամբակի մշակությամբ:

Առխատանք.—Լեզվից. Նկարագրել բամբակի քաղը (չանակը), մաքրել ու մամլելը:

Նկարչությունից.—Նկարեցեք բամբակի բույսը, դպելու գործիքները:

Թվաբանությունից.—Հաշվեցեք բամբակագործության առավելությունը հացարույսերի մշակության հետ համեմտած:

### ԴԱՍ 6-ՐԴ

ՊՏՂԱՏՈՒ ՊԱՐՏԵԶԸ ԱՇՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Յուցադրական նյութ.—Դասարան բերեք զանազան պտուղներ, վրոնք բուսնում են ձեր պարտիզում:

հելու ձեերը: Զօրացնելը, կոնսերվ պատրաստելը, յիփելը և թեթև աղաջրի մեջ դնելը: Ամանների խիստ մաքրության կարեռությունը պատրաստած մթերքը լավ պահելու համար:

Դիտողություններ.—Ի՞նչպես են պահում զանազան պտուղները ձեզ մոտ:

Աժխատանիք.—Լեզվից—Նկարագրեցեք պտուղներ պահելու գանազան ձեերը:

Քիմիայից. սովորեցեք պտուղներ պահելու ձեերը նշանց միջոցները (գեղատումները):

Թվաբանությունից. գնահատեցեք ձմռան համար զանազան ձեռվ պահված պտուղները:

Բացորյա աժխատանիք.—Կորիզավոր ծառերի տնկարանի մարդերի պատրաստությունն ու կորիզներ ցանելը: Քնքույշ ծառերին ցրտից պաշտպանելը՝ ծղնոտով կամ բաղմով փաթաթելով:

### ԴԱՍ 8-րդ

#### Ա Շ Ն Ա Ն Ա Ց Ա Ն Ը

Յուցադրական նյուր.—Յանելու լավ ու վատ սերմեր: Կեղտոտ և մեքենայով մաքրած: Հիվանդ սերմ մրիկով և սպորներով (ժանգով) վարակված:

Գործնական աժխատանիք.—Մըիկով վարակված ցորենի բժշկությունը ֆորմալինով (<sup>1/4</sup> ֆունտ ֆորմալին չորս վեցրո ջրի հետ): Բժշկված սերմի ծլման ստուգումը: Մըիկ հիվանդության սպորներ: Ֆորմալինով ցողված սերմի քամու տալը (ցամքեցնելը):

Աժխատանիք.—Յանելու լավ սերմի նշանակությու-

նը: Մըիկի սնկիկների տված վնասը և նըա դեմ մաքառելու յեղանակը:

Խնդիրներ-հարցեր. յերբ պետք ե ցանել աշնանացանը: Հողի մշակությունը սերմ ցանելուց առաջ: Միդեսյատինի համար ցանվելիք սերմի քանակն ու ցանքսը: Վնասվում են արդյոք աշնանացանները ձմեռ ժամանակի: Միջատներից ամենավնասակարն ե հեսենի փորբրիկ ճանձը, վորի վորդը ապրում ե նորաթույս ցողունների մեջ: Դրանից կարելի ե ազատվել միայն հերկելով դաշտի խոզաններն ու մոլախոտերը, վորոնցից նաանցնում ե աշնանացանների վրա:

Աժխատանիք.—Լեզվից. Նկարագրեցեք, թե ի՞նչպես եք դուք աշնանացան անում և պատասխանեցեք հետեւյալ հարցերին. 1) Վորքան սերմ եք ցանում մի գեսյատինի վրա. 2) Ի՞նչպես եք պատրաստում ցանքի հողը. 3) Համիմատեցեք ձեռքով և շարքացանով կատարած ցանքը:

Թվաբանությունից. վորոշեցեք ձեր ընտանիքին միտարված ընթացքում անհրաժեշտ հացի քանակն ու արժեքը:

### ԴԱՍ 9-րդ

#### ՍԵՐՄԱՑՈՒ ԿԱՐՏՈՒԹԻՒ ՀՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուցադրական նյուր.—Սերմացու կարտոֆիլի ընտրությունը ցանքի լավագույն թփերից, Յույց տվեք լավագույն բույսերի որինակներ և կարտոֆիլի լավագույն տեսակներ:

Խմկուրսիա.—Մանուկներին տարեք ձեզ հետ զաշտ և ցույց տվեք, թե հավաքելուց առաջ ինչպես պետք ե նշանել սերմացու ամենալավ թփերը:

Հարցիր.—Ի՞նչպէս լավացնենք մեր կարտոֆիլը:  
Ի՞նչպիսի. կարտոֆիլ պետք ե ընտրենք:

Պետք ե ընտրենք ամենապտղատու թփեր, կլորածե  
կարտոֆիլներով։ Սերմի համար չպետք ե վերցնել  
տձեւ անկյունավոր կարտոֆիլները, անմաքուրը, ձա-  
քուտածը և հիվանդը։

Կարտոֆիլի պահպանությունը նկուղներում, հորե-  
րում, վրում հատակին թափված պետք ե լինի ծզնոտ  
կամ գարման և վերելիք ծածկված ծզնոտով և հողով  
(վորոնց մեջ պետք ե թողնել ողանցք)։

Լրացուցիչ տեղեկություններ։—Կարտոֆիլի տե-  
սակները՝ վաղ տեսակներն են ձեզ մոտ պատահում։  
Թող մանուկները համեմատության համար կարտոֆիլ  
բերեն իրենց տներից։ Ի՞նչ հիվանդություններ ունի  
կարտոֆիլը։

Աշխատանք։—Լեզվից՝ «Նկարագրեցիք ընտրու-  
թյան շնորհիվ կարտոֆիլի լավացնելու ձերը»։  
Նկարչությունից՝ «Նկարեցիք լավ և վատ կարտո-  
ֆիլի որինակներ»։

Թվարանությունից՝ «Վարպիսի տարբերություն  
կըստացվի մի գեսատին կարտոֆիլի բերքի մեջ,  
յեթե ամեն մի թփի տակ չ' ի փոխարեն լինի  
վեց հատ  $\frac{1}{8}$  կիլոգրամոց կարտոֆիլ, յեթե մի գես-  
յատինի վրա կտ 12,000 թուփ։

Գործնական աշխատանք։—Կարտոֆիլից ալյուր և  
ոսլա պատրաստելը։

### ԴԱՅ 10-րդ

Ճանապարհեների լավացնելը։—Լավ ճանապարհ-  
ների նշանակությունը։ Ճարապարհ շինելու գործին ա-  
ջակցելը։ Յուրաքանչյուր քաղաքացին՝ վորպես ճանա-  
պարհ կառուցող։

Յուցադրական աշխատանք։—Յուրյո տվեր լավ

և վատ ճանապարհների պատկերները կամ իսկականը  
և ճանապարհներ լավացնելու համար անհրաժեշտ գոր-  
ծիքներ ու մեքենաները։ Համհմատեցեք դպրոցի  
շրջակայքում յեղած ճանապարհներն իրար հետ։

Ես դասի նպատակն ե.՝ 1) Յուրյո տալ աշա-  
կերաներին, թե վորպիսի մեծ նշանակություն ունին  
տավ ճանապարհները գյուղի տնտեսական կյանքի  
դարձացման գործում։ Լավ ճանապարհների առավե-  
լություններն ու նրանց տված ողուտներն ակներե են։  
2) Լավ ճանապարհները թեթևացնում, հեշտացնում և  
եժանացնում են ապրանքների փոխադրությունը; 3)  
Լավ ճանապարհները հնարավորություն են տալիս վա-  
ճառահանել շուտ փշացող մթերքները. ինչպես կաթը,  
ձուն, պտուղները, բանջարեղինները ևայլն, վորոնք  
վատ ճանապարհներով փոխադրելիս վնասվում, փչա-  
նում են հենց ճանապարհներն։ 4) Լավ ճա-  
նապարհները գյուրացնում են հաղորդակցությունը  
դրացիների և քաղաքի հետ, մոտեցնում բժշկական  
ոգնությունը, դպրոցը, զարգացնում և հասարակական  
կյանքը և նպաստում յերկրի բարեկեցության. 1916-ից  
սկսած գյուղական ճանապարհների բարեկարգության  
համար կասավարության հատկացրած գումարներն  
աճում են արագությամբ և 1922 թվին Միացյալ-Նա-  
խանգներում հասել են 200 միլիոն ռուբլու։

Ճանապարհները լավացնելու միջոցները։ Լավա-  
ցնելուց առաջ նախ պետք ե հարթել գյուղական ճա-  
նապարհը, քչացնել դառիվայրերը և անցկացնել վոր-

Գործնական աշխատանք.—Հաղորդակցության ճանապարհներին զիտակցաբար վերաբերվելը մանուկեների մեջ պետք է ցանկություն զարթեցնի ակտիվ կերպով նպաստելու ձանապարհների բարեկարգության։ Կարելի յեւ գործի հրավիրել ծնողներին, վորի կատար ածեն գասարաններում մշակված ծրագրները։ Հաղորդակցության բարելավման գործին աջակցելը պետք է, վորպես որևնք, ընդհանուր կամավոր գործ գոռնաւ։ Դպրոցի աշակերտությունը կարող է մաքրի մերձակա ձանապարհները թափած քարերից՝ գործի հրավիրելով բոլոր կազմակերպության անդամներին։

Չեռարվեստի արհեստանոցներում մանուկները կարող են պատրաստել հաղորդակցությունը լավացնելու անհրաժեշտ գործիքներ—քերիչներ, փոքր կամուրջներ, դպրոցին մոտ կարող են շինել ցեմենտի ոլուզներ ջրի հոսանքի համար։

Թվաբանությունից.—կազմեցեք նախահաշիվ ձեր շրջանի ձանապարհները խճողելու համար, ընդունելով կելումների համար ծախս 600 ռուբլի, իսկ լոկ բարեկարգելու գործիքները մաքրելու և հարթելու համար 100 ռուբլի։

### ԴԱՍ 11-րդ

Խմելու համար աղբյուրի ջրի յեվ վոռոգության համար լավ ջրանցքների նշանակալությունը։ Զրի նշակությունը առողջության, մաքրության և վոռոգման համար։ Վոռոգման ջրի անտեսությունը, խիստ հերթափառությունը։

Այս դասի նպատակը։ Ցույց տալ աշակերտներին լավ ջրի (աղբյուրի) նշանակությունը ժողովրդի

քան կարելի յեւ հարժար։ Ճանապարհը մեջտեղում պետք է լինի ուսուցիվ, վորպեսզի անձրես և ձյունի ջրերը թափեն յերկու կողմի ակոսներում։ Թեք գըրված քերիչով հարթում են շավիղներն ու փոսերը։ Ավագոտ տեղերում ավելացնում են կավահող և խիճ, իսկ ընդհակառակը՝ կավահողին ավելացնում խճ ու ավագ։ Գլորտնով նստեցնում և հարթում են ձանապարհները, թուլ չտուլով գործեն չափում առաջանան անվագուներ և գորդովին ջրերով։ Անհրաժեշտ է մըշտական հսկողություն և խնամք՝ ձանապարհները մըշտապես լավ վիճակում պահպանելու, վոր յերբեմն ավելի շատ արժե, քան նրանց վրա արտած նախնական ծախսները։ Յուրաքանչյուր անձրես հետո, հենց վոր ցեխը փոքր ինչ կըչորանա, հարկավոր է քերիչով մաքրել ձանապարհները։ Չմեռն ել, վորպեսզի ձանապարհներին դար ու փոսեր չգոյանան, պետք է ձյունը մաքրեն ձի լծած փայտու քերիչով։ Յած տեղերում և հեղեղատաների մոտ պետք է շինել կամուրջներ կամ ձանապարհի տակի խողովակներ, վորպեսզի ջուրը տակովն անցնի։ Ճանապարհները կարելի յեւ վրայից ցեմենտել, ասֆալտել, խճուղել և այլն։

Աշխատանք։ — Լեզվից—մանուկները պետք է կազմեն շրջակա ձանապարհների նկարագրությունը, ցույց տան ցանկալի բարեկարգություններ և վորոշ տվյալներ բերեն այդ բարեկարգության ոգտին։

Ենթուրսիա։ — Դիտեցեք ձեզ մոտ բարեկարգած ձանապարհները։

Նկարչությունից—կազմեցեք տեղական ձանապարհների մանրամասն քարտեզը։ Ցույց տվեք ցանկալի փոփոխություններ։

առողջապահության համար։ Պարզել, թե ինչ կը լիներ մեր հակասանիտարական պայմաններում ապրող ժողովրդի վիճակը, յեթե մեր զյուղերը աղբյուրի ջռուր չունենային։ Ի՞նչ նշանակություն ունի վոռոգությունը ցամաքային կլիմա ունեցող յերկրների համար, վորոնցից մեջն և Խորհրդ, Հայաստանի հանրապետությունը։ Վճրքան և ապահովում հողի բերքը և փրկվում ամեն տեսակ պատահարներից արհեստական կանոնավոր վոռոգության շնորհիվ։ Ի՞նչպես են անապատներն ու քարքարուները կյանք ստանում և հարստության աղբյուր դառնում ջրի շնորհիվ։ Զբանցքների կանոնավոր պահպանությունը պետք ե լինի ընդհանրության պարտականություն։ Վճրպիսի պայմաններում ջռուրը դառնում և վնասակար և մահաբեր (հեղեղներ, ճահիճներ)։ Դրանց դեմ կովկելու—ձեռքը։ Չուր հանելու միջոցներն ու յեղանակները, վոռոգման ջրի կանոնավոր չափով գործածությունը։

Եխակուրսիա։—Դիտեցեք ձեր զյուղի մոտի վոռոգման առուն, ջրանցքը և աղբյուրները։

Նկարչությունից։ կազմեցեք ձեր մերձակա ջըռանցքի մահրամատն քարտեզը։

Լեզվից։—Նկարագրեցեք ձեր տեսած ամենալավ ջըռանցքը, նրա տակի զյուղերը և վոռոգության տվածողությունը։

Թվաբանությունից։—Հաշվեցեք, քանի բաժին ջռուր կա ձեր ջըռանցքի մեջ և մինչև աշնան վերջը քանի դեսյատին հող և վոռոգում, յերբ տարեկան ջըռում են յերկու անգամ։

### ԴԱՍ 12-րդ

Հողային աշխատանքները՝ խրամատներ վոչնչացնելու և ճահիճներ չորացնելու համար։

Յուցադրական նյութ։—Յույց տվեք հեղեղներից տուշացած խրամատները, լեռնակողերը, ճահիճներ ցամաքեցնելու յեղանակը բաց առուներով և ստորցներկրյա ջրահավաք անցքերով։

Եխակուրսիա լին հարցե՛ր։ Դիտեցեք. կան արդյոք ձեր շրջանում ճահիճներ, վորովիսիք հարկավոր և չորացնել։ Կան խրամատներ և լեռնակողեր. Ի՞նչպես են ոգտագործված լեռնակողերը։ Ի՞նչպես կարող ենք հավաքել ջրի բերած տիզմը և լցնել տալ խրամատներ՝ առանց մեծ ծախսերի։

Աշխատանք. — Նկարչությունից։ Նշանակեցեք քարտեզի վրա, թե վրատեղ են ողագործված լեռնակողերը. վճրտեղ են չորացվում ճահիճները, վճրտեղ են նրանք տարածում մալարիան. դիտեցեք ձեր շրջանի ճահիճները։ Ծրագրեցեք ձեր լեռնակողերին կատարվելիք աշխատանքները, նրանց մշակելի ու յեկամարեր դարձնելու համար։

Լեզվից։—Նկարագրեցեք. Ի՞նչպես են մշակելի դարձնում շուռաքյաթները։

### ԴԱՍ 13-րդ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՑԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԶՄԵՌ ԺԱՄԱՆԱԿ

Յուցադրական նյութ։—Դիտեցեք մեքենաների մերձավոր վարձակայանում յեղած զյուղատնտեսական մեքենաներն ու դործիքները։ Կազմեցեք հարեսն տընդարձական արտադրության դպրոցում։

Գյուղատնտեսական արտադրության դպրոցում։ 2

տեսություններում յեղած մեքենաների ցուցակը:  
Մելենաների ձմռան պատվանուրյունը. — Դիտեցեք գյուղատնտեսական մեքենաները հարևան տնտեսություններում և թե վարտեղ և բնչպես են դարսում և պաշտպանում: Անձրեց, խոնավությունից և ժանգից մեքենաները յերկու-յերեք անգամ ավելի շուտ են մաշվում ու փչանում, քան աշխատեցնելուց: Այդ պատճառով պարտապիր կերպով անհրաժեշտ և պաշտպանել մեքենաներին անձրեց և վատ յեղանակից՝ հատուկ շենքի մեջ կամ ծածկութիւնից առաջ և մետաղյա մասերը յուղել կանոնավոր կերպով:

Աշխատանք: Լեզվից. — մարդամասն նկարագրեցեք ձեր ունեցած գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները և տարվելիք անհրաժեշտ խնամքը:

Նկարչությունից. Նկարեցեք կամ ժողովեցեք զրւիւավոր մեքենաների նկարները և ձեր ագարակում ունեցածները, քննեցեք մեքենաների կազմությունը և թե բնչպես են աշխատում նրանք:

Թվաբանուրյունից. — Հաշվեցեք, վարքածն և նըստում տարեկան շարքացան, խոտհար ու հնձող մեքենան, ի նկատի ունենալով, վոր նրանք կարող են աշխատել 14 տարի, խոտհար մեքենան՝ որինակի համար հաշվելով 300 ռուբլի, վորի արժեքից պետք է զեղչել քսան (20) ռուբլի մաշվելու հաշվից և 6 տոկոս նրան վճարած արժեքի: Մեքենան կը հանի արդոք իրեն վրա ծախսած գումարը բանվորական ձեռքի ներկա աշխատավարձի պայմաններում: Վճրաբիսի տարածություն պետք է նու կարողանա հարել վորպես պիտի ծածկություն պահպանություն պետք է աշխատավարձի պայմաններում: Վճրաբիսի տարածություն պետք է աշխատավարձի պայմաններում:

Դործնական աւխատանք. — Նորոգեցեք մեքենաներն ու գործիքները տանը կամ դպրոցում, յեթե նրանք նորոգության կարիք ունեն, յուղեցեք և դասավորեցեք սրանի տակ ձմռան համար: Ծրագրեցեք ու կազմակերպեցեք մեքենաների նորոգության արհետանոցը ձեր տանը կամ դպրոցին կեց:

### ԴԱՍ 14-րդ

#### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐ

Ցուցադրական նյութ. — Դիտեցեք դասարանում նախընթաց ցուցահանդեսներից վերցրած լուսանկարները, մրցանակ ստացած կենդանիների և մթերքների պատկերները, կազմեցեք դպրոցի կողմից ցուցադրվելք մթերքների ցուցակը:

Պարզեցեք ցուցահանդեսի նպատակը: Ի՞նչպիսի ոգուտ կարող ենա տալ: Ուսումնասիրեցեք ցուցահանդեսային նյութերը (եքսպոնատները): Արժեք ցուցադրել միմիայն որինակելի եքսպոնատներ: Խակ, չըհասած սերմերն ու պլողները չեն կարող լավ տպագորություն թողնել այդ պատճառով ցուցադրած եքսպոնատները պետք է աչքի ընկնեն իրենց հատկությամբ: Մանուկների հետ միասին կազմեցեք դպրոցի եքսպոնատների ցուցակը: Ընտրեցեք ցուցահանդեսային կրմիտե, Դասավորեցեք եքսպոնատներն (ցուցադրանքներ) ըստ բաժինների:

1. Ստորին և գերի խմբակներին ցուցադրանքներ, (մանկական նախագծեր):

2. Բուսացրած կարտոֆիլի նմուշներ.

3. Պտուղների նմուշներ.

4. Բանջարեղենի նմուշներ.

5. Պատուղների և բանջարեղենի կոնսերվներ և այլն:

Կազմեցեք մանկական բաժնի (գրական) ծրագրը՝ բաղկացած յերգերից, ճառիրից, ղեկուցումներից և այլն:

Եխկուրսիաներ.—Այսելի պյուղական տնտեսական ցուցահանդեսները և դննել ցուցադրած նյութերի խմբավորումները: Թող աշակերտներից յուրաքանչյուրը կազմի մանրամասն հաշիվ ցուցահանդեսի վարել բաժնի մասին, թվելով ցուցադրած նյութերը, ցույց տարով, թե ովքեր են ցուցադրել և կարծիք հայտնելով թե այդ բաժնի և թե ցուցադրած իրերի մասին:

Հարցեր.—Ի՞նչ նշանակություն ունեն ցուցահանդեսները: Ի՞նչ կարող ե տալ ցուցահանդեսի ցուցադրանքների ուսումնասիրությունը: Ի՞նչ ցույց տվեց մեղ այս տարրվա ցուցահանդեսը:

### ԴԱՍ 15. ըդ

#### ՅԵԼԱԿ ՆՍՏԱՑՆԵԼԸ

Ցուցադրական նյութը.—Մանուկների ոգնությամբ ժողովեցեք յելակի զանազան տեսակները: Նստացրեք այն ծաղկամանների մեջ և դիտեցեք դաստիառնում, թե ինչպես են աճում: Սերմարուժարանների պատկերագրությունը կատարել մուտքի տեսակների նկարները: Աշխատեցեք հետաքրքրել յերեխաններին դաստիարական աշխատանքով:

Գասիր նպատակը:—Ցույց տալ մանուկներին, վոր

յելակն ամենաարժեքավոր և համեղ պտուղներ ավող բույս ե, վոր կարելի յե աճեցնել պարեզում կամ բանջարանոցում: Յելակ աճեցնելը համեմատաբար հեշտ է: լավ, թեթև (ավազախառն) հողում նա հիանալի աճում է: Աշնանից հարկավոր և հողը լավ պարաբռացնել այն մասում, վորտեղ պետք ե յելակ տնկեք: Պարաբռանյութը պետք ե լինի այրված փեյիս: Պարաբռանյութը լցնելուց հետո պետք ե քերել, իսկ գարնանը ցաքանել: Յեթե յելակը տնկում եք աշնանը, այդ դեպքում հողամասը պետք ե պատրաստել ամառվանից: Ամեն մի նոր տնկած թփի շուրջը հողը պետք ե հուպտուկ՝ առանց բույսի միջին մասին ձեռք տալու: Թփերը պետք ե տնկել մարգերում իրարից կես արշին հեռավորության վրա, առաջուց լավ խուղելով արմատները: Կարելի յե տնկել շուրջ և ուշ հասնող տեսակներ, վորպեսզի պտուղները համեն զանազան ժամանակ: Համենայն գեպքս յուրաքանչյուր տնտեսության մեջ պետք ե լինի մորի և յելակ:

Եխկուրսիա.—Դիտեցեք յերեխանների հետ մորիի և յելակի տեսակները ձեր շրջանում և հարց ու փորձ արեք տերերից, թե ինչպես են համապում, տնկում և քանի տեսակ մորի և յելակ ունեն:

Աջախատանք:—Լեզվից: Նկարագրեցեք յելակը, նրա ոգուաց և նշանակությունը տնտեսության մեջ, ինչպես են աճեցնում և վորպիսի խնամք և պահանջում: Տեսէլ եք արդյոք մորին ու յելակը վայրի գրությամբ:

Նկարչությունից: Նկարեցեք յելակի և մորութիւնը իրենց պտուղերով:

Նախազիծ:—Մի հողամաս (50—100 սաժեն) յեւ գալ անկել.

1. Յելակ կամ մորի տնկեմ արդյոք.
2. Մեր բանջարանոցում կամ արդյոք հարմար տեղ.
3. Կամ արդյոք հարկավոր պարարտանյութ.
4. Վար տեսակը տնկեմ.
5. Վորտեղից վերցնեմ տնկեր.
6. Կըկարողանամ արդյոք վաճառել պտուղները.
7. Քանի թուփ կըտեղավորվի իմ հողամասի վրա, յեթե շարքերն իրարից ունենան յերեք-քառորդ տրշին, իսկ թփերը կես արշին հետափորություն կամ կես մետր և մեկ-յերրորդական մետր:
8. Գարնանը պետք է փխրունացնել յելակի մարդկերը, յեթե հողը կավային է, նա շուտ կեղեկը բռնի և բույսին վնաս կտա: Զմեռը մարգերը ծածկում են ծղնոտով կամ չոր տերեներով:
- Վերջին աշխատանքներն ավարտելուց հետո, կարելի յե անցնել գասարան և ուսումնասիրել բույսերի աճումը, հողերի ուսումնասիրությունը, պարարտանյութերի ազդեցությունը, սերմափոխության նշանակությունը և թելարույսերի մշակությունն ու վերամշակությունը:

### ԴԱՍ 16-ՐԴ

#### ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՃՈՒՄԾ ԲՈՒՑՄԵՐԸ

Յուցադրական նյութ.—Յուցյ տվեք սիքանի դաշտային բույսեր, վորոնք աճել են նիհար և պարապ հողում, չպարարտացրած և պարարտացրած հողում: Հացարույսերի որինակներ, բանջարեղեններ և լորիաձե բույսեր: Այդ բույսերը կարելի յե ժողովել մա-

նուկների հետ, աշնանային նախընթաց եքսկուրսիաների ժամանակ:

Բույսերի կազմությունը.—1) արմատներ, 2) ցողուններ, ճյուղեր և տերեններ, 3) ծաղիկներ, պտուղներ և սերմեր: Արմատների գերը.—հողից ծծել ջուրը և նրա մեջ լուծված մննդատու աղերը, վորոնք անհրաժեշտ են բույսերի աճման համար: Ցողուններն անց են կացնում դեպի վեր բույսերի ծծած ջուրը, իսկ տերենները՝ 1) գոլորշիացնում են ջուրը և թողնում բույսին սննդաբար աղերը, 2) ողից կլանում են ածխածին, գարձնում մննդանյութ և ամբարում իրենց հյուսվածքներում, հատիկներում և սերմերում՝ վորպիս ոսլա, սպիտակուց, շաքար և յուղեր, վորոնք կազմում են կենդանիների սնունդը:

Բույսերը հողից վերցնում են մոտ 10 տեսակ աղեր, վորոնցից ամենակարևորներն են բորակային, կալիոնի, ֆոսֆորաթթու աղեր և կիր: Վորպեսզի բույսը կարողանա նրանց յուրացնել նրանք պետք և լուծված լինեն ջրի մեջ:

Այն ածխաթթուն, վորից կազմվում է յույսի հյուսվածքը, նա ստանում է ողից վորպես գազ և ծծվում տերեկի տակի կողմում զետեղված անցքերով:

Բորակային աղն ել բույսերի մեծամասնությունը կլանում՝ յուրացնում և հողից, բայց բորակածիններ՝ ածխաթթու գաղի նման գտնվում է ողի մեջ գտագային զրությամբ: Բորակածինն ողից անմիջապես յուրացնում է հասարակ աչքով անտեսանելի մանր կենդանիներ, վորոնք կոչվում են բակտերիաներ: Այդ բակտերիաները զարգանում ու բազմանում են լորիաձե բույսերի արմատների վրա յեղած ուսուցիկ մար-

մինների մեջ (կորնկանի, գյուլուլի, լոբու, յոնջայի և այլց), վորոնք, շնորհիվ այդ բանի, կարող են սընվել ողից և նույն իսկ ամբարել այն հողի մեջ ուրիշ բույսերի համար: Այս պատճառով լորիածե բույսերը մեծ նշանակություն ունեն գյուղատնտեսության համար, վորովճետե վոչ միայն չեն կլանում հողից բորակային նյութերը, այլ ընդհակառակն, հարստացնում են հողը մյուս բույսերի համար հարկավոր բորակային աղերով: Անա այս պատճառով սերմափոխության մեջ լորիածե բույսեր մտցնելը կանոնավոր գյուղատնտեսության հիմքն է կազմում:

Արևատանի.—Լեզվից—Նկարազրեցնք, ի՞նչպես են սնվում բույսերը: Ի՞նչ են վերցնում նրանք հողից և ի՞նչ անհրաժեշտ մասն են վերցնում ողից: Հողից վերցրած աղերելի լուծվածքն ու ողից վերցրած ածխաթթվուն վրանեղ են բույսերի հյուծվածք գառնում: Բույսի վրա մասն են գործազրվում վորպես մարդու և անասունների կեր: Վրա բույսերն են կարողանում յուրացնել ողի բորակածինը և ինչնու:

Նկարչությունից — Նկարեցեք զանազան լորիածե բույսերի արմատներ և ուսուցիկներ: — որ. գյուլուլի, կորնկանի, յոնջայի և այլն: Համեմատեցեք հացաբույսերի արմատների հետ:

### ԴԱՍ 17-րդ

Ի՞նչՊԵՍ են ԿԱԶՄՎՈՒՄ ԲՈՒՑՍԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Յուցադրական նյութ: — Յուց ավել հեղեղատներ և հողի փոխազրությունը ջրից ու քամուց: Դիտեցեք

քարաքսով ծածկված քարեր, մամուռ և այլ բույսեր, վորոնք բունում են քարերի վրա:

Բուսահողերի կազմությունը կատարվում է մի քանի ազդակների շնորհիվ: 1) Ժայռերի հողմահարությամբ: Ժայռերն ու քարերը փշրվում են անձրիկ, քամու, ցրտի և շղու ազդեցությամբ: Այդ ազդակների շնորհիվ քարերը քայլայվում են և փոխազրվում հովիտներ: Անձրիկի կաթիլներն իրանց հետ տանում են փշրված մասերը: Զուրը լցվելով և պաղելով ժայռերի ձեղքերի մեջ, լայնացնում ե այդ ձեղքերը: Ժայռերը ձեղքովում են և կոտրատվում: 2) Բույսերը, փտելով, կազմում են սեանողը (հումուսը) և փշրված լեռնային տեսակները կապակցելով, հետպհետե ավելացնում են կազմված հողի պաղաքերությունը և հնարավորություն տալիս, վոր նրա վրա աճեն բույսերի ավելի բարձր ու պահանջկոտ տեսակներ: Բացառապես բույսերից կազմված հողերի որինակը մենք տեսնում ենք տուրքի տեսակների վրա:

3. Սառուցը նույնպես նպաստում է հողերի կազմության շենքերում և հյուսիսային յերկրներում: Նայուր ծանրությամբ փշրում ու հղկում ե քարերը և աղջալիս և հալոցի ջրերով փոխազրում նրանց իրենց նախկին տեղերից շատ հեռու:

4. Կենդանիները նպաստում են հողի կազմության, վոչ թե միայն իրենց արտաթորություններով, այլ իրենց աշխատանքով, ինչպես մըջուններ, խլուրդներ, վորդեր, բղեղներ, գաշտային մկներ և այլն, վորոնք փորում և ապրում են հողի տակ:

5. Զուրն ու քամին անընդհատ փոխազրում են բուսահողը տեղից տեղ: ամենապաղապես հողերը (սե-

վահողը՝ տիղմի վրա) կաղմվել է ջրի ու քամու աղոցնեցությամբ հովհաններում և գետային ավազաններում:

Եխսկուրսիաներ, Եքսկուրսիաների ժամանակ պետք է դիմել յուրաքանչյուր գործոնի աղոցնեցությամբ առաջացած հողերը: Մանուկները պետք է զրի առնեն և նկարեն բուսահողի կաղմության առանձին-առանձին որինակները:

Աշխատանի: Լեզվից.—Նկարագրեցեք բուսահողի կաղմության պատճառներն ու ընթացքը:

### ԴԱՍ 18-ՐԴ

#### Բ ՈՒ Խ Ա Հ Ո Ղ Ե Ր

Յուցադրական նյութ: Մանուկները կարող են հավաքել բուսահողերի նմուշներ.—Ավազահող, կավահող, սեահող, կրահող ևայլն, վորոնց պետք ե պահել սպիտակ շների կամ բանկաների մեջ, մակագրելով, թե յերբ և վնրտեղ են վերցրած այդ նմուշները:

Դասարանային պարապմունքներ, Վար հողերն են ավելի շուտ չորանում: Վար հողերն են ավելի պազ և յերկար պահում խոնավությունը: Վար հողերի մշակությունն ե ավելի դյուրին:

Ավազահողերն իրենց մեջ պարունակում են 80-տոկոս ավազ և մոտ 10-տոկոս մասեր կավային կամ տղմային մասեր, վորոնք մեծ քանակությամբ ջուր են կլանում, այդ պատճառով ավազահողերը հեշտությամբ լվացվում են ջրով և հեշտ ել չորանում: Ավազոտ և կավոտ հողերն իրենց մեջ բովանդակում են:

30—40-ից մինչև 60—70 տոկոս ավազ և ավելի շատ կամ կամ տիղմ, քան ավազահողերը:

Կավահողերը բաղկացած են 60 տոկոսից ավելի կավից, այդ պատճառով նրանք կլանում են շատ ջուր և գանդաղ չօրանում: տաքանում են ուշ և անձրեկ ժամանակ նրանց ծակոտիները ծածկվում են և կեղեակալում:

Ցեթե վերցնենք հավասար ծանրությամբ զանազած հողեր, չորացնենք նրանց միջև իրենց մշտական կշիռը, կշռենք չորացնելուց հետո, նրա քաշի տարբերությունը կըպարզվի, թե վոր տեսակն ե ավելի շատ ջուր կլանում: Սովորաբար այն հողերն են ավելի պտղաբեր, վորոնք շատ ջուր են ծծում, վորովհետև նրանց մեջ ավելի շատ սննդաբար լուծվացք ե լինում, քան ավազահողերի մեջ:

Ցեթե այդ կշռած հողի մնացորդները շիկացնենք յերկաթե ամանով ուժգին կրակի վրա և կշռենք մնացորդները, կըմնա հողի զուտ հանքային մասը: Համեմատեցնեք, թե վար հողի մեջ ավելի շատ որդանական մնացորդներ կան:

### ԳԼՈՒԽ 19-ՐԴ

#### ՀՈՂԻ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուցադրական նյութ: Դիտեցեք մանուկների հետ ուժապառ և պարարտացրած հողերը, թե ինչով են նրանք իրարից տարբերվում (գույնով, կաղմվածքով) և ինչպես են աղղում բերքի վրա: Վերցրեք հողի նըմուշները գաշտի այն մասերից, վորոնք մանուկներին հայտնի յեն իրենց պտղաբերությամբ, ու համե-

մատության համար՝ նաև չպարաբռտացրած ուժասպառ հողերից, վորոնք բերք են տալիս:

Դասարանական պարապմունք, Դասարանի հետմշակեցիք հողի պաղաքերությունը պահպանելու միջոցները.

1. Պարզեցեք թե ի՞նչ բույսեր պետք են ցանենք միենույն հողամասի վրա հաջորդաբար, վորպեսզի նրանք ամեն տարի նույն սնունդը չփեցնեն հողից և միենույն սննդանյութերով չոպտվեն: (Սերմափոխության անհրաժեշտ բույսերը:

2. Յերեքնուկի, կորնկան, գյուլու, լորին, յոնջան ևալլ լորիածեւ բույսերը, շնորհիք նրանց արմատների վրա աճող բակտերիաների, ողից վերցնում են բուրակածին, վորը հետո մատչելի յեւ դառնում ուրիշ բույսերին: Լորիածեւ բույսերը միենույն հողամասի վրա պետք են ցանվեն 3—4 տարին մի անգամ:

3. Լորիածեւ բույսեր ցանելիս տնտեսության մեջ միշտ լինում են խոտ, վորը հնարավություն և տալիս տնտեսության մեջ հարկավոր չափով կենդանիներ պահելու և նրանցից հարկավոր պարաբռտանյութ ստանանալու, վորով հողին ենք վերադարձնում նրանից վերցրած նյութերը, սննդաբար աղերը:

4. Վորպեսզի այդ աղերը չլվացվեն աղրի միջից և նրա չորանալու ժամանակը չգոլորշիանան, փեյինը պետք են շուտ-շուտ տանել դաշտ կամ ունենալ գոմաղը պահելու հատուկ փոսեր:

5. Շատ հաճախ—չնայած վոր հողի մեջ կան բուլը աղերը, նրան պակասում են կերը: Այդպիսի հողերը կոչվում են «թթու», վորովհետեւ նրանց մեջ կարող են լինել ազատ թթվութաներ, վորոնք կապված չեն կրի-

և յուրացվող աղերի ուրիշ հիմունքների հետ և վորոնք կարող են վնասել բույսերին:

Փորձեցեք վորոշել՝ տալիք ե արգյոք ձեր հողը թթվութային աղղեցություն լակմուսյան թղթի վրա: Ճահճային հողերը հաճախ տալիս են թթու ռեակցիան: Թթու հողերը պահանջում են կրով և գիլով պարապացում:

6. Պատրաստվել ցանքի համար նշանակում ե մանրել և խառնել հողը (հերկել կամ փորել և տափանել), վորպեսզի մատղաշ բույսերի արմատներին հնարավորություն տանք թափանցելու և հասնելու հողի մեջ յեղած սննդաբար աղերին:

7. Լորիածեւ բույսերի և հացարույսերի արմատների ձեռ (սիստեմը) միանգամացն տարբեր եւ: Այդ պատճառով նրանք իրար չեն խանգարում և հողից բուրովին տարբեր բան են պահանջում:

8. Խոտերի և հացարույսերի ցանքսափոխությունը նպաստում ե մոլախոտերի և վնասակար միջատների վոչնչացման:

9. Կանոնավոր ցանքսափոխությունը (սերմափոխությունը) կարգավորում ե աշխատանքը տնտեսության մեջ և հնարավորություն և տալիս ավելի լավ ոգտագործելու ընտանիքի աշխատող ուժերը:

Հարցեր: Ինչու լորիածեւ բույսերն առանձին նշանակություն ունին: Լորիածեւ բույսերի սերմափոխությունն ինչպես ե աղղում հողի վրա: Կանոնավոր սերմափոխությունը ինչպէ և տարբերվում յենագաշտյան յեղանակից: Ցույց տվեք ձեր տեղին հարմար ամենալավ սերմափոխությունը:

Եմսկուրսիա: Դիտեցեք կանոնավոր սերմափոխու-

թյուն մտցրած դաշտերը: Հարցրեք տերերից, թե ի՞նչ-  
պես են ազգում յոնջայի և յերեքնուուկի ցանքերը բեր-  
քի և տնտեսության վրա:

### ԴԱՍ 20-ՐԴ

#### ՀՈՂԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Յուցադրական նյուր: Գտեք զանազան աղերի և  
պարարտանյութերի նմուշներ.—կալիոնի, բորակային  
(սելֆարա) և լուսաճնաթթվուտային (վոսկորի փոշի  
և սուպերֆոսֆատ): (Տեղական պարարտանյութեր՝  
գոմազը, մոխիր, տորփ, գիլ և այլն):

Դասարանական պարտավմունք: Տեղավորեցեք պա-  
րարտանյութերը բանկաների կամ արկղների մեջ և  
մակագրեցեք անունները: Այդ բոլոր արկղները գըտ-  
նվում են և թաց՝ չչորացած գոմազը մեջ, յերբ նա  
լվացված չե անձրևաջրով: Ցերկու սայլ գոմազը (60 գիլի) մեջ գտնվում են տասը—տասնեհինգ ուռիլու  
պարարտանյութեր (շուկայում վաճառվող): Գոմազըն  
անփոխարինելի յէ, վորովհետև նրա մեջ պարունակ-  
վող որգանական նյութերը կապակցում են փխրուն  
հողերը. իսկ բուսական մնացորդները՝ փտելով փխրու-  
նացնում են ծանր, կավային հողերը: Գոմազը, բացի  
դրանից, տաքացնում ե հողը չնորհիվ իրեն մեջ բո-  
վանդակող բակտերիանների և բարձրացնում (ավե-  
լացնում նրա խոնավություն ծծելու ընդունակու-  
թյունը (խոնավականությունը): Այս բոլոր պատճառ-  
ներով գոմազը համարվում ե անփոխարինելի պա-  
րարտանյութ: Ապա ուրեմն մեծ նշանակություն ունի  
պահպանել գոմազը մեջ նրա ըոլոր սննդարար աղերը

և պաշտպանել լվացվելուց և չորանալուց: Կանոնա-  
գոր պահպանելու դեպքում, յերբ չի կորչում գոմազը,  
միջի բորակածինը, կալիոնն ու լուսածինը, գոմազըն  
ընդունակ և վերադարձնել հողին բույսերի վերցրած  
աննպանյութի 80%/<sub>o</sub>-ը:

Հարցեր. Սովորաբար ի՞նչպես ե պահպում գոմ-  
ազը տնտեսության մեջ: Ի՞նչպես կարող ենք պաշտ-  
պանել գոմազը անձրևաջրով լվացվելուց: Ի՞նչ են  
անում մեզ մոտ գոմազը, ի՞նչու յեն սակավաբեր դար-  
ձել մեր հողերը: Ի՞նչո՞վ կարող ենք փոխարինել ցա-  
նով գառելիքը, վորպեսզի պարարտանյութ ունենանք:  
Տան զլուխ քանի ուռիւնի պետք ե ունենանք, վոր  
ամեն տարի նրանց ճյուղերը կարատելով, այլևս գոմ-  
ազը չիչացնենք և պարարտացնենք մեր գաշտերը:  
Գտեք գոմազը պահելու և դաշտը փոխադրելու լավա-  
գույն միջոցներ: Ճույց տվեք գոմազը պահելու զա-  
նազան ձեռի առավելություններն ու պակասություն-  
ները:

Վերպիսի առավելություններ ե ներկայացնութ  
դաշտում մեքենայով գոմազը ցրվելը: Մեքենայով աշ-  
խատանքը ծածկում է իրեն ծախսերը և ի՞նչ պայ-  
մաններում:

Ենթադրության: Դիտեցեք այն տնտեսությունները,  
վորտեղ աշխատում են կանոնավոր պահպանել գոմ-  
ազը: Նկարագրեցեք այդ ձեռները և ցույց տվեք նրանց  
առավելություններն ու թերությունները:

### ԴԱՍ 21-ՐԴ

#### ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ ՀՈՂԻ ՄԵԶ

Յուցադրական նյուր: Ժողովեցեք մանուկների  
ոգնությամբ լորիաձե բույսեր, վորոնք զետնից հան-

ված պետք ե լինին մեծ խնամքով: Կազմեցեք բոլոր  
լորիածն բույների ցանկը: Դիտեցեք նրանց և ուսում-  
նասիրեք նրանց ծաղիկների, տերեների և պառզների  
կազմությունը, վորպեսզի կարողանաք անսխալ կեր-  
պով վորոշել նրանց:

Պարապմունք դասարանում.—Հողի մեջ գտնվող բակ-  
տերիաները ուժեղ կերպով ազգում են հողի պաղա-  
բերության վրա: Ողի մեջ բորակածին շատ կա, բայց  
շատ քիչ բույսերն են կարող յուրացնել այն ողից: Այդ  
բույսերը պատկանում են լորիածների ընտանիքին:  
Մարդկանց ձեռքով ցանվող մյուս բույսերը սնվում են  
միայն այն բորակածնով, վորը գտնվում է հողի մեջ:  
Բույսի կազմության մեջ գտնվող բորակածինը հողի  
մեջ մնում է այն ժամանակ, յերբ այդ բույսը փառում  
է հողի մեջ, բայց այդ բորակածինը բույսերի սնունդ  
գառնալուց առաջ նախ պետք է յենթարկվի բորակա-  
ծին յուրացնող բակտերիաների ազգեցության: Պաղա-  
տու հողերի մեջ այդ բակտերիաները շատ շատ են:  
Հողի մշակությունը նրանց համար ստեղծում է բարե-  
նպաստ պայմաններ: Բայց այդ ոգտակար բակտերիա-  
ների շարքին կան և վնասակարներ. նրանք ավելի հա-  
ճախ պատահում են ձահճացած (ձիմճիմա) տեղերում:  
Այդ պատճառով չորացնելով նրան և հողմահարության  
յենթարկելով հերկի շնորհիվ, մենք յուրացվող բորա-  
կածին կուտակող բակտերիաների համար ստեղծում ենք  
բարենպաստ պայմաններ և վոչնչացնում վնասակար՝  
այդ բորակածինը վոչնչացնող բակտերիաների գործու-  
նելությունը:

Հարցեք.—Ի՞նչ լորիածն բույսեր են մշակում ձեզ  
մոտ: Ի՞նչ պետք ե անել հողի մեջ ոգտակար գործու-

ներությունը պահպանելու համար: Լորիածն բույսերն  
բնչ ձեռվ են յուրացնում մթնոլորտի (ազոտը) բորա-  
կածինը:

Եվսկուրսիա.—Դիտեցեք յոնջա կամ յերեքնուկ  
ցանած հողամասերը: Համեմատեցեք լավ մշակած և  
ձահճացած թթու հողերը և նրանց վրա յեղած բուսա-  
կանության բնույթը: Ի՞նչ տարբերություն կայ յոնջա-  
յի և ֆալախ խոտերի մեջ: Հավաքեցեք ձեր գաշտե-  
րում անջրդի բուսնող լորիածն բույսերի բոլոր տեսակ-  
ները:

## ԴԱՍ 22-ՐԴ

ՅԵՐԵՔՆՈՒԿ, ՅՈՆՉԱ, ԳՅՈՒԼՈՒԿ.

Յուցագրական նյութ:—Համեմատեցեք յերեքնուկի,  
յոնջայի (առվույտի) և զյուլուկի ամբողջական բույ-  
սերն իրար հետ: Ուշազրություն գարձրեք նրանց ար-  
մատների յերկարության և այդ արմատների վրա յե-  
ղած ուսուցիկաձև մարմինների վրա (պալարիկների վրա):  
Համեմատեցեք յերեքնուկատեղի կամ յոնջատեղի ցան-  
քըն ու բերքը այն հողերի բերքի հետ, վորոնց վրայեր  
բեք լորիածն բույսեր չեն ցանվել: Համեմատեցեք առ-  
վույտի, յերեքնուկի և մարգագետնի խոտի սննդառու-  
նյութերի բովանդակությունը: (Տեսախտակ 28-ՐԴ  
գասի)

Պարապմունք դասարանում.—Առվույտի (յոնջայի)  
արմատներն ավելի յերկար են, քան յերեքնուկի: Առ-  
վույտը կարող է խոտի ավելի մեծ բերք տալ: Քան  
յերեքնուկը և նա կարող է հնձվել 6—7 տարի, տարե-  
կան 3—4 անգամ: Բայց նա ավելի շատ է ցրտատար  
մինում, քան յերեքնուկը: Այդ պատճառով լեռնային

ցուրտ տեղերում պետք ե ցանել յերեքնուկի և մտցնել սերմափոխության մեջ այնտեղ, ուր հողը յերեքնուկի տակ ե մնում 2—3 տարի:

Ուր չկան բնական մարգագետիններ և արոտատեղեր, առվույտ և յերեքնուկ ցանելն անհրաժեշտ է, վորովհետև նրանք տալիս են լավ արոտ, վոր զգույշ ոգտագործելու դեպքում, կարող ե ծառայել մի քանի տարի։ Առվույտի և յերեքնուկի հետ սովորաբար ցանում են վարսակ, սեղ, վորովհետև յեղջուրավոր անասունների համար այդպիսի խոտի խառնուրդն ավելի ոգտակար է, քան մաքուր յոնջան։

Եքսկուրսիա։ Դիտեցեք առվույտի և յերեքնուկի ցանքեր, Հարցրեք տերերից, թե ի՞նչ համեմատական առավելություն ունի առվույտի, յերեքնուկի և մարգագետնի խոտը։ Փողովեցեք ձեր տեղերում անջրդիքունող և ցրտին դիմացող առվույտի, կորնկանի և գյուլուի բույսերն ու սերմերը։ Պահեցեք այն առանձին և մակագրեցեք անունները։

Նախազիծ։ — Փորձեցեք ցանել մի փոքրիկ անջրդիք և ջրով հողամաս առվույտի, յերեքնուկի կամ գյուլուի սերմով՝ վարսակի կամ սեղի հետ խառը։

Հարցեր։ — Ի՞նչ նշանակություն ունի լորիաձեռույսերի մշակությունը անառնապահության և մեղվարության համար, հարցրեք մեղվարույժներից և տալրատերերից։

Աջանականի։ — Լեզվից։ — Նկարագրեցեք, թե ի՞նչպես ե կատարվում ձեզ մոտ առվույտի կամ յերեքնուկի ցանքը։

## Դ Ա Ս 23-րդ

ՅՈՐԵՆ, ԳԱՐԻ ՅԵՎ ՏԱՐԵԿԱՆ

Յուցադրական նյութ. — Դասարան բերեք ցորենի, գարու և տարեկանի բոլոր նմուշները։ Համեմատեցեք ցորենի, տարեկանի և գարու հատիկներն ու ալյուրն իրար հետ։ Համեմատեցեք զաշտի այն հողերը, վորտեղ ցանվում ե ցորեն, տարեկան և գարի։ Նշանակեցեք Հայաստանի քարտեզի նախագծի վրա այն շրջանները, վորտեղ մշակում են ցորեն, գարի և տարեկան։

Պարապիտնել դասարանում. — Ցորենն ավելի պահանջկոտ և դեպի հողը, քան տարեկանը։ Վատ, ուժապառ և չպարարտացրած հողերում ցորենը վատ և աճում։ Այդ պլատամասով ցորենը գլխավորապես ցանվում է արգավանդ և հողերում։ Հայաստանի միմիայն լեռնային բարձր տեղերում յերբեմն մրսում է ցորենի ուշացած ցանքը։ Տարեկանն ու գարին՝ իրենց բոլոր անակներով բուսնում են հաջող։

Սերմափոխուրյան նեանակուրյանը. — Ցորենի մշակության համար առանձին նշանակություն ունի ցանքափոխությունը։ Լորիաձեռույսերից հետո ցորենը կարող է առաջին տեղը բռնել սերմափոխության կամ ցանքսափոխության մեջ։

Մշակեցեք ձեր տեղի համապատասխան ցանքսափոխություն, վորտեղ կորնկանից կամ առավույտից հետո առաջին տեղ բռնի ցորենը։

Կրկնահերկի, քաղճանի և փոցխելու նշանակությունը, Ցորենի մշակության համար մեծ նշանակություն ունի ցելը. աշնանացանի համար ցել պետք ե

անել ապրիլից մինչև մայիսի 15-ը, ապա սեպտեմբերին կրկին թեթև հերկել, տափանել և ցանել շարքացանով, գարնանացանի համար հողը պետք է հերկել աշնանը։ Գարնան սկզբին նորից հերկել տափանել, ցանել շարքացանով, հողը նստացնել գլորանով և ապա յերեսը նորից փոցինել. մոլախոտերը քաղհանել. անձրևներից հետո թեթև փռվել՝ հողի կեղմը քանդելու։

Եխկուրսիա — Դիտեցեք աշնանացանը ցորենի դաշտերը ձեր միջավայրում։ Իմացեք, թե ինչ տեղ երունել ցորենը ցանքսափոխության մեջ։ Իմացեք, թե վժրքան պարարտանյութ եւ տրվել հողին։ Իմացեք, թե յերբ և վժրքան պարարտանյութ են մտցնում ցորենն արտերում։ Գործ են ածում բորակային կամ լուսածնաթթվուտային պարարտանյութեր։

Նախագիծ. — Յանել 800 ք. սաժեն հողամաս ցորենով։

1. Վհրպիսի կլիմա յե պահանջում ցորենը։
2. Վորպիսի հողեր են հարկավոր ցորենի համար։
3. Հարմար ե արդյոք հողարաժինը ցորենի համար։
4. Ի՞նչպիսի պարարտանյութ ե հարկավոր ցորենի համար։
5. Վհրպիսի ցանքսափոխությունն ե հարկավոր ցորենի հաջող ցանքի համար։
6. Յեթե զնովի պարարտանյութով պարարտացընենք հողը, կը ծածկվի արդյոք ծախսը։
7. Վհրպիսի մշակույթ ե հարկավոր նախքան ցանքով։

Այցելեցեք մերձակա ջրաղացը։ Դիտեցեք աղա-

լու վողջ գործողությունը, վերցրեք ալյուրի, թեփի բոլոր տեսակի նմուշները, տեղափոխեցեք ապակու ամանների մեջ և մակագրեցեք անունները։

Աջասանի լեզվից. — Նկարագրեցեք, թե ինչ նշանակություն ունեն հացարույսերը մարդկության համար։ Ի՞նչ են պատրաստում հացարույսերից և ի՞նչ ձեհրով են դուծաղըում։

## Դ Ա Ս 24-րդ

### ՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՑՍԵՐ ՅԵՎ ԹԵԱԲՈՒՑՍԵՐ

Յուցադրական աջասանի. — Ժողովեցեք այն բուլոր սերմերը, փորոնցից մարդիկ յուղ են ստանում. զետեղեցեք առանձին ամանների մեջ և մակագրեցեք անունները. Փողովեցեք ձեր շրջանի բուլոր թելաբույսերը՝ բամբակ, կտավհատ, կանեփ և յեղինջ. Զեռքովկ պատրաստեցեք բաղմ կտավհատից, յեղնջից և կանեփից, Նկարեցեք կամ պատրաստեցեք այդ բույսերից բաղմ ստանալու սղմիչը, փայտե սանրը կամ սանղերքը, իլիկը, մեր և մալականի ձեփ ճախարակը, ջով մանելու կարթը թոկ վոլորելու անիվը։ Փորձեցեք փոքրիկ պարան վոլորել։

Դասարանական աջասանի. — Բամբակը, կտավհատն ու կանեփը թելաբույսեր են, կտավհատն ու կանեփը բուսնում են և մեր լինադաշտերում, կտավհատը սիրում ե սեանող, կանեփը պահանջուս չե բուսնում և նույն իսկ վայրի ձեռվի Յեղինջը մեզ մոտ չի մշակում. Նա բուսնում և պարարտ հողերի, քարքարուտների և նույնիսկ մացանների մեջ, կտավհատի, կանեփի և բամբակի սերմից պատրաստում են

յուղ։ Նույնպիսի յուղ են պատրաստում ուրուկից, արևածաղկից, գերչակից և քնջութից, բայց սրանց բույսերը թել չունեն, գերչակի յուղը դեղ է։ Նա գործադրվում և վորպես լուծողական։ Յեղինջը շատ ոգտակար բույս է։ Արտասահմանում յեղինջը ցանում են՝ թե վորպես թելաբույս և թե սերմ ստանալու, վորն ընտիր կերակուր և կաթնատուների համար։ Բամբակի և արևածաղկի բույսերը արևասեր են, նրանք իրենց տերևները և ծաղիկները միշտ գեղի արեն են դարձնում, այդ պատճառով մինչ կոչվում և արեւորդի, մյուսը արևածաղկի։ Կտավհատը պատկանում է խաչածաղկիների ընտանիքին, բամբակը ձագարածաղկիների։ Կանեփն ու յեղինջը ծաղիկ չունին։ Գերչակը ցանում են բանջարանոցների և բամբակի ցանքերի շուրջը և ճանապարհի կողքերին, վորպեսզի ցանքերը պաշտպանեն անասուններից, վորոնք բուրովին չեն մռածենում նրան։

Եխկուրսիա։ — Այցելել ձիթհանքը, մանածագործարնը, ջուհականոցը և թելաբույսերի ցանքերը։ Դիտել պարան պատրաստելու, կտավհատից ու կանեփից բաղմ ստանալու և մանելու աշխատանքը մալակաների մոտ։ Գիտել կտավհատ փռած դաշտերը կամ թըռչելու ավագաները։

Նյուրի վերաբերյալ աշխատանքը։ — Լեղից։ — Նկարսկրեցեք ձեզ ծանոթ թելաբույսերի մշակությունն ու վերամշակությունը։

Նկարչությունից՝ Նկարեցեք թելաբույսերը և անթել յուղատու բույսերը։ Կազմել թելաբույսերի, բազմի, գործվածքների և յուղերի ժողովածու<sup>\*)</sup>։

\*) Այս դասը կարելի յե անցնել բուսահողի ուսումնասիրությունից առաջ։

## Չ Մ Ե Ռ

(Իեկոսեմբեր, Հունվար, Փետրվար)

ԴԱՍ 25-ՐԴ

ԳՈՄԱՂԲԻ ՅԵՎ ԱՅԼ ՊԱՐԱՐՏԱՅՑՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆԻԹՅՈՒՆԸ

Ցուցադրական նյուրեր, կազմեցեք այն սննդարարադերի և պարարտանյութերի ցուցակը, վորոնք բույսերի համար անհրաժեշտ են, Գտեք կամ կազմեցեք գոմաղբ պահելու այն ավաղաների հատակագիծը, վորոնք շինված են որինակելի տնտեսություններին կից։

Պարարտանյուր անունը կարելի յե տալ բուսական և կենդրոնական այլ մնացորդներին, վորոնք պարունակում են իրանց մեջ բույսերի մնացորդները, ինչպես տերևներ, կարտոֆիլի չոփեր, խոհանոցային մնացորդներ և այլն դառնում են ընտիր պարարտանյութ, յերբ կիտում, նստացնում և յերբեմն հող ենք լցնում վրան։

Կենդանիների մնացորդները, որինակ գոմաղբն, իր մեջ պարունակում ե սննդարար նյութերի զանագան քանակություն, վորը կախված է կենդանիների տված կերի քանակից և հատկությունից, և գոմաղբ պահպանելու յեղանակից։ Ամենաարժեքավոր պարարտանյութն ե վոչխարի և թռչունների աղբը, վորովհետեւ նա յուր մեջ բովանդակում ե բազմատեսակ միացած աղեր։ Աղբը պահելու ժամանակ կարող ե կորցնել յուր սննդարար աղերի մեծ մասը կամ տաքանալուց (յերբ բակտերիաներն ոգտագործում են այն)։

կամ թոշվելուց: Այդ պատճառով նպատակահարձար և փորքան կարելի յե շուտ-շուտ կրել աղբը դեպի գաշտ, վորպեսզի բակում յերկար չմնա: Գոմազը ցրվող մեքենան մեծ ծառայություն կըմատուցանի տիրոջը:

Յերբ գոմախըն ուզում ենք պահել բակում, պետք և շինենք հատակը ցեմենտած փոս և հատուկ ծածկութով պաշտպանենք անձրից:

Հարցեր: Ի՞նչ և պարարտանյութը և ինչու պետք և պարարտացնել հողերը: Ի՞նչ պարարտանյութեր կան և ի՞նչ աղեր են պարունակում իրենց մեջ:

Գոմազըն ի՞նչպես կարող ե կորցնել յուր պարտացնող արժեքավոր հատկությունները.—1) Լվացվելով և 2) տաքանալով: Ի՞նչպես կարող ենք պաշտպանել գոմազըն այդ կորսարից: Աղմ լցնելու և անթափանց հատակի նշանակությունը: Գոմազը ցրվելու համար մեքենաների նշանակությունը: Ի՞նչու չի կարելի գոմազը փոխարինել գնովի պարարտանյութով (փոշիացած):

Գործնական աշխատանք: Կազմեցեք ձեր տնտեսության գոմազի ավագանների հատակագիծը: Աշխատեցեք ձեր տան գոմազը լով վիճակում պահելու վորեւները:

Դասի մշակույթ:—Լեզվից: Կազմեցեք տեղեկագիր թե ի՞նչպես են պահում գոմազը հարեւն տնտեսություններում (ձեր հարեանները) և ցույց տվեք նրանց թերություններն ու առավելությունները:

Թվաբանությունից: Յեթե 60 փութ գոմազի մեջ կա  $\frac{1}{2}^{\circ}/_0$  բորակածին,  $0,3^{\circ}/_0$  ֆոսֆոր և  $0,4^{\circ}/_0$  կալիոն, վարքան ֆունտ ենք մտցրել այդ աղերից 5 գեսատին:

Հողամասի վրա, վորտեղ ցրվել ենք 500 փութ գոմազը:

Ծանոթաբայուն. Աղբը յերբեք չի կարելի գոմում թողնել յերկար ժամանակ: Յեթե ցեմենտ չեք զլունում, ամրացրեք գոմազի համար շինած փոսի հատակն ու պատերը գեղին կավով:

### ԴԱՍ 26-ՐԴ

ԳՈՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:—ԱՆԱՍՈՒԽՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ

Ցուցադրական նյութ: Հարկավոր ե ցույց տալ որինակելի գոմերի նկարներ կամ մոդելներ: Պետք ե կաղմիկ զանազան կերակրանյութերի սննդարարության չափի տախտակ և ցույց տալ զանազան կիրերից կազմված որապաշարի չուփը:

Դասարանական պարագմոններ: Աշխատավոր և կաթնատու անասունների խնամքը, կանոնավոր կերակրելու ձեր և մաքուր ու տաք շինքը, մանավանդ ձեռը, կարող են յերկարացնել անասունների կյանքն ու նրանց աշխատունակությունը: Այս պատճառով անասունների խնամատարությունը միշտ ծածկում ե արած ծախսերը: Կաթնատու կոփերը շատ զգայուն են գեպի իրենց ցույց տված խնամքը: Շատ կարենոր ե, վոր անասուններին կիրը տրվի միշտ վորոշ ժամանակ և վոր կոփերն ու յեղները միշտ ունենան խմելու մաքուր ջուր: Կաթը հեշտությամբ փշանում և թողից և բակտերիաներից, այդ պատճառով կաթնատունների խնամքի ամենակարենը մասն և մաքրությունը՝ սակայն մյուս անասուններն ել՝ ձիաններ, եղեր և նույնիսկ խոզեր պահանջում են մաքուր պահել ախոռներն ու խոզանցները: Գոմից և ախոռից աղբը պետք

և մաքրել որական 2 անգամ և անպատճառ փոխել ողը (բանալ ողանցքներ) մանավանդ ամառը: Ի՞նչպես գոմը, այնպիս ել ձիանների տիտոն ու այլ անսառւնների շենքերը պետք է լինեն չոր և առանց միջանցք քամիների:

Հավաբուները: Յեթե միայն կան տնտեսության մեջ, պետք է լինին կանոնավոր շինված՝ կրկնակի պատերով: Յեթե պատերը շինված են տախտակից, նրանց դրազները պետք է լինեն լավ ձյութած, իսկ տախտակների արանքում պետք է մոխիր լցնել: Միջատներից ազատ պահելու համար հարկավոր է կրով սպիտակացնել և յերբեմն ել ախտահանել՝ կամ ծծումք ծիրելով, կամ նավթի եմուլսիայով: Վերջինս պատրաստվում է հետեւյալ կերպով: — պետք է լուծել  $\frac{1}{4}$  ֆունտ սովորական սապոն 5—6 շիշ յեռացող ջրի մեջ, յերբ սապոնը կըլուծվի, ավելացնել 10 շիշ նավթ, ապա լավ խառնել և գործածելու մի մասին ավելացնել 8 մաս տաք ջուր:

Հարցեր: Ի՞նչպիս պետք է խնամիլ անսառւններին. 1) շենքը, 2) կերպակրելը, 3) ջուրը, 4) մարմիքաքրությունը, 6) արոտը: Ի՞նչպիս պետք է պահել գոմը: Ի՞նչոր պետք է առանձին խնամք տանել կաթնատունների մաքրության համար: Խելու ջրի մաքրության անհրաժեշտությունը: Արոտատեղիների կարիքը: Ի՞նչպիսի հավաքուն և հարկավոր հավերի համար: Ի՞նչոր է ձեռնտու կաթնատունների լավ խնամքը:

Գործնական գրադարձնելու: Նկարագրեցեք, թե ի՞նչ պիս եք խնամում ձեր անսառւններին: Համեմատեցեք այն ուրիշ տնտեսություններում տարած խնամքի հետ: Վերցրեք ձեր պատասխանատվության տակ գոնե

անսառւններից մինի խնամքը: Մրագրեցեք անսառւնների կանոնավոր խնամատարությունն ու պահպանությունը:

Աշխատանիք: Նկարչությունից. Փորձեցեք նկարել ձեր գոմը, նկարեցեց խողանոցը, հավաքունն իրենց ներքին բոլոր հարմարություններով: Կազմեցեց ձեր բակի բոլոր շենքերի և գոմի հատակագիծը:

Թվաբանությունից.—Հաշվեցեք, թե ի՞նչ մեծության հավանոց կարելի յե շինել 50 սուրլիով:

Լեզվից՝ Նկարագրեցեք անսառւնների խնամքը ու բինակելի տնտեսություններում:

Զեռքի աշխատանք. կառուցեք կանոնավոր հավաքունի և խողանոցի մոդելը:

## ԴԱՍ 27-ՐԴ

### ԿԱԹՆԱՏԵՍԵՍՈՒԹՅՈՒՆ

Ցուցադրական նյուր: Ցույց տվեք կաթնառատլավ կովերի լուսանկարները կամ պատկերները: Որինակելի գոմերի պատկերներ կամ մոգելներ՝ կանոնավոր հատակով, առաստաղով, ողանցքով և մսուրներով: Գոմի կեց գոմաղը պահելու հատուկ փոսով (աղբափոսով):

### ԿԱԹՆԱՏԵՍԵՇԵՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ցուրաքանչյուր ընտանիք և քաղաքի յուրաքանչյուր տնտեսություն համարյա ամեն որ կաթ և գնում: Յերեխանների համար կաթը չի կարելի փոխարինել այլ վորեկ մթերքներով: Կաթն անհրաժեշտ է կանոնավոր կերպակրելու ժամանակ: Այս պատճառով թարմ և լավ կաթի պահանջը միշտ մեծ և արժեքն

ել բովականին բարձր։ Հոգատար տհուես մարդուն կաթնատնտեսությունը կարող է կանոնավոր յեկամուտ բերել։

Կաքնածեսեաւրյան առավելությունները։ Կաթնատնտեսությունը տալիս է ձմռան վաստակ (յեկամուտ), յերբ տնտեսության մեջ համարյա թե այլ աշխատանք չկա։ Յեթե տնտեսության մեջ կա մի քանի կով, կաթնատնտեսությունը ամբողջ տարի՝ անընդհատ հասույթ և բերում, օանքսափոխության մեջ մտնելով հողը պարարտացնող լորիաձև բույսերի մշակությունը, տնտեսությունը ստանում է կաթնատուների համար կեր, վոր յուր կողմից տալիս է հողագործության համար անհրաժեշտ և արժեքավոր պարարտանյութ։

Հարցեր։ Ազգարակատերերը (հողագործները) ինչու յեն հետաքրքրում կաթնատնտեսությամբ։ Կաթնատնտեսությունն ինչու մեզ հնարավորություն է տալիս կանոնավոր յերկրագործություն ունենալու։ Ի՞նչ առավելություններ ունի լորիաձև բույսերով սերմափոխությունը, ի՞նչ լորիաձև բույսեր գիտեք։ Աշխատավոր ընտանիքի համար ինչու մեծ արժեքը ունի կաթնատնտեսության հասույթը։ Մանուկները սեփական անձնական վաստակ պետք է ունենան, թե վոչ Դասարանում քննության առեք այդ հարցը։ Ամեն մեկ ընտանիքին քանի կով և ընկնում մեր գյուղում, քաղաքում, գավառում, յերկրում։

Եվկուրովիս։ Այցելեցեք հարեան կաթնատնտեսությունները, գերմաները։ Առաջուց հոգ տարեք և համաձայնության յեկեք փորձած կախնատնտեսների հետ, վոր նրանք զրուցեն դասարանի հետ կաթնատնտեսության մասին։ Մանուկներին տրամադրեք և

խրախուսեցեք, վոր հարցեր տան։ Թող գրի առնեն ստացած բոլոր տպագորությունները։

Աժիատանի։ Լեզվից կազմեցեք մանուկների հետ տեղեկագիր ձեր տեսակների մասին, ցույց տալով կաթնատնտեսության առավելությունները և ձեր շըրջանում կաթնատնտեսություն զարգացնելու համար գոյություն ունեցող պայմանները։ Վորքան նպաստավոր են նրանք։

Թվաբանությունից։ Հաշվեցեք ձեր մի կողի տարեկան յեկամուտը։

## ԴԱՍ 28-րդ

### ԱՆԱՍՈՒԽՆԵՐ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Յուցադրական նյութ. — Մանուկների հետ կանխապես պատրաստեցեք զանազան կերերի նմուշներ, վարոնք հարուստ են. 1) սպիտակուցով, 2) յուղով և 3) սոլայով։ Մանուկները պետք է ծանոթանան այն բոլոր կերերի արժանիքների հետ, վորոնք գործ են ածվում իրենց շրջանում։

Դասարանական պարապմունի։ Կենդանիներին իրենց մարմնի պահպանության, տաքացնելու, միս և ճարպ, կաթ, բուրդ և այլն պատրաստելու համար պահանջում են զանազան քանակությամբ սպիտակուց, սոլա և յուղեր։

Պահանջվող կերակրի քանակը կախված է. — 1, այն աշխատանքից, վոր կատարում են կենդանիները, 2) արտաքին պայմաններից (ցրախց ու տաքությունից և մարմնի մաքրությունից) և 3) բնավորությունից։ Արդյունարեց կոչվում է կերերի այն մասը,

Վորը մենք տալիս ենք կենդանիներին, վորպես հավելված իրենց մարմինի պահպանության համար անհրաժեշտ կերի, և գործադրվում ե կաթ, բուրդ և այլ մասեր պատրաստելու համար:

Սպիտակուցը.—Կենդանիներին հարկավոր ե մըկանունքների, կաշիի, յեղջուրների, բրդի և կաթի կազմության համար:

Ածխաջրային բաղադրություններ հարկավոր են կենդանու մարմինը տաքացնելու, մկանունքային աշխատանքի և եներգիան պահպանելու համար: Ածխածնային կերերի ափեցուկը կենդանու մարմին մեջ ամբարվում ե վորպես ճարպ:

Յուղեր.—Վորպես ածխածնային կերեր, պահպանում են կենդանու մարմինի տաքությունը և ծառայում են վորպես մկանունքային եներգիայի աղբյուր: Յուղերի մի ֆունտը հավասար ե 2,25 ֆունտ ածխածընային՝ ոսլային և ճյուղավճարյին մասերի: Յուղերը պարունակում են զլխավորապես յուղատու բույսերի սերմերի մեջ՝ կտավհատի, բամբակի, արևածաղկի, սորուկի, կանեփի, աճարի և այլն կտղմեցեք մանուկների հետ այն կերերի մեջ յեղած յուրացվող նյութերի տախտակը, վորպիսիք դուք ժողովել եք մանուկների հետ: Պարզեցեք մանուկների հետ ձեր շրջանում անասուններին տրվող որական կերի չափը և վորոշեցեք, թե վիրք ան ֆունտ սպիտակուց, ոսլա ու յուղ և ստանում յուրաքանչյուր կենդանին:

Կերակրելու բաղմաթիվ փորձերից պարզվել ե, վոր կենդանին իրեն քաշը պահպանելու համար պետք է ուտի ըստ յուր կենդանի կշռի 6—8 ֆունտ կերակրային միություն (հատիկով) կամ նրանց՝ իրեն

աննդարաբությամբ համապատասխանող մեծածավալ կերերով կենդանի քաշի ամեն մի Յ փթին անհրաժեշտ է մի ֆունտ ուժեղ կեր: Կաթնատու կովին բացի այդ կերից հարկավոր ե տալ մի ֆունտ հատիկով կեր Յ ֆունտ կաթի համար:

Այդ չափանիշին հետևելով, մանուկների հետ կարելի յե կազմել կաթնատու կովիրի որական կերերի չափը: Թույլ կերերն անհրաժեշտ են անասուններ՝ մանավանդ կովիրի կերակրման համար, վորպես զի ստամոքսը լցվի: Մի որում տված կերի մեջ որական 20 ֆունտից պակաս թույլ կեր չպետք ե մտնի:

Որական կերի չափը վորպես որինակ.

հատիկ. միութ.

մարդագետնի խոտ	20	ֆունտ	5
----------------	----	-------	---

կորնկանի խոտ	10	ֆ.	5
--------------	----	----	---

թեփ	4	ֆ.	4
-----	---	----	---

քուսպ	2	ֆ.	2
-------	---	----	---

36	ֆ.	16
----	----	----

Ահա այս չափով կեր պետք ե ստանա 25 փութ կշռվող կովը, յերբ նա որական 24 ֆունտ կաթ ե տալիս: Այստեղ 8 ֆունտը մարմինի պահպանության կեր ե, 8 ֆունտը արտադրական (կաթ տվող): Կազմած տախտակի ոգնությամբ հաշվեցեք, թե այդ մի որվա կերերի մեջ վրբան սպիտակուցային մասեր կան, վրբան ածխածնային նյութեր: Կերի մեջ յերբ սպիտակուցային մի մասին համապատասխանում ե վեց ածխածնային (ոսլային) մասը, դա համարվում ե ամենալավ հարաբերություն: \*)

\*) Յիթե 24 փութ կշռվող կովը որական տալիս ե վոչ թե 24 ֆ. այլ 12 ֆ. կաթ, վրբականի կեր պետք ե տանը նրան: (Պակասացրեք ուժեղ կերը):

ԶԱՆԱԳԱՆ ԿԵՐԵՐԻ ՄԵՋ ՔՏՆՎԱԾ ՄԱՐՄՎՈՂ ՄԱՍԵՐԻ ՏԱԽ

ՏԱԿ

Ա. Հատիկով հերեր (մէծեղ)	100 քռնար միջ պարունակ-		Պահանջական գլուխութեան վեց կամ եւ <sup>ա</sup> կուսական մասնական գույք	
	Սակառա- կուց	Ածիածն- ութան	Յուղեր	
Պոչուկ . . . . .	8,0	45,8	4,0	1,0
Գարիկ . . . . .	6,6	62,4	1,9	1,0
Կորիկ . . . . .	8,0	45,8	3,1	1,0
Տարեկան . . . . .	9,6	63,9	1,1	1,0
Տարեկանի ալյուր . . .	11,0	61,6	2,0	1,0
Տարեկանի թեփ . . .	12,5	42,9	2,4	1,0
Ալիածաղկի քռասպ .	35,5	14,7	11,1	1,0
Կատալհատի քռասպ .	28,8	25,4	7,9	1,0
Կանեփի կամ սորութիւն	23,9	10,3	9,0	1,0

Տ Ա Խ Տ Ա Կ Բ

$\beta.$ $\rho_{\text{ուժ}}$ կերեւ (մէծածավառ)	100 քռնար միջ բարանդաւ-		Պահանջական գլուխութեան վեց կամ եւ <sup>ա</sup> կուսական մասնական գույք	
	Սակառա- կուց	Ածիածն- ութան	Յուղեր	
Մարդագանի խոս	3,4	19,3	—	4
Կորնկանի . . . . .	6,8	25,0	—	2
Տարեկանի դարձան	1,1	11,3	—	4
Պոչուկի ծղոն . . .	1,3	16,5	—	3
Գարօս . . . . .	1,3	16,5	—	3
Զըստ կերեր	—	—	—	—
Կարստիթիլ . . . . .	1,1	1,9	—	4
Կերի բարդուկ . . .	0,8	8,3	—	12*
Շաղկամ . . . . .	0,8	5,4	—	15
Բազուկի միացորդ	0,5	5,4	—	11

Ծանոթություն.

1-ին տախտակից յերեսում ե, վոր կարտոֆիլը 3 անգամ ավելի սննդարար և բացուկից: Բացի զրանից կարտոֆիլն ավելի լավ և սպատգործում գետնի խոնավությունը, այդ պատճառով բազուկն ու շաղկամը Ամերիկայում քիչ են տարածված:

Գյուղատան, առաղուր, ամերիկյան դպրոցում: 3

Մենք տալիս ենք ամենագործածական կերերի բովանդակած ոննդանյութերի տախտակը. թեև դա դուքս և մեթոդական ձեռնարկի սահմաններից, բայց և այնպէս կարող է հշշացնել ձեռնարկից ոգտվելու ձեր: Այդ տախտակից ոգտվելիս կարելի յե զե՞ն ձգել Փունտի տասերորդ մասերը կամ պահպանել հաշիվներ անելու ժամանակ:

Հարցեր.—Ինչո՞ւ ե կայանում կանոնավոր կերակրելը: Մարմին պահպանության համար վճրքան կեր և պահանջում կովը: Վճրքան արտադրական ոընունդ պետք ե տանք կիթվող կովին: Բանի ֆունտ ծավալով կեր պետք ե տանք կովին որական: Վճրպիսի հարաբերություն պետք ե պահպանել ոպիտակուցային և ոսլային մասերի մեջ: Մինիմալ (1:6), մաքսիմալ (1:8) հարաբերությունը սպիտակուցի և ոսլայի մեջ վճրպիսի կերեր են հարկավոր կենդանու մկանունքային աշխատանքի ժամանակ (ձիուն, յեղան): Վճր կերերն են ավելի ձեռնառու մսացու կենդանիներին կերակրելիս: Յույց տվեք զանտղան կենդանիներին տալիք կերերի չափը:

Եվկուրոփա.—Կազմեցեք հարեան տնտեսություններ ուսումնասիրելու ծրագրերը. այցելեցեք և տեսեք ինչպիս են կերտկրութ կտթնասու կովերին լավ տնտեսություններում: Ի՞նչ կերեր ունեն նրանք:

Նախագիծ.—Կազմեցեք ձեր տնտեսության համապատասխան կերերի որական չափը և սկսեցեք ձեր կաթնասու կովերի կերտկրութն:

Հետևեցեք ու պարզեցեք, կավելացնեն արդյոք կովերն իրենց կաթը և վճրքան:

Գործնական աշխատանք.—Արհեստի դասերին շինցեք կովերի վանդակավոր մուտքը:

## ԴԱՍ 29-րդ

### ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցուցադրական նյութ. — Տեղական կովերի հետ համամտելու համար ցույց տվեք ավելի կաթնառատ կովերի պատկերները: Հոլանդական, շվիցի, սին-մինտալի, Յարոսլավի, Խոլմոգորի: Ցույց տվեք տեղական լավագույն կովերը: Ցույց տվեք կաթնառատուների համար լավագույն արոտատեղեր և ըլջակայքի արոտներից հնաձած լավագույն խոտերի նմուշներ:

Գասարանական աշխատանք. — Կաթնառատունության հաջողության անհրաժեշտ պայմաններից մեկն է կաթնառատ կովերի հմուտ ընտրությունը: Յերկրորդ պայման պետք է համարել լավ արոտատեղերի և ուրիշ կերերի ներկայությունը, իսկ յերրորդ տեղը պետք է գնել կաթն արտահանելու շուկայի մերձավորությունը և փոխադրության հարմար պայմանները (հաթորդակցության ճանապարհները):

Ծնդհանուր տեսք. — Կաթնառատ կովի գլուխը պետք է լինի չոր (սիհար), փոքր ինչ յերկարավոն, պետք և հանդարտ (մեղմ) աչքերով: Ականջները պետք լինի միջակ մհծության, բարակ կաշիով: Վեզը պետք և լինի յերկար, բարակ, բայց չլուս, ծածկված մանր և թավշանման ծալբերով: Կուրծքը պետք է լինի շատ խորը, թեկրը, պետք և լինին զուրս ցցված: Կողերը պետք և լինին իրարից հեռու և լայն: Մեջքը պետք և լինի ուղիղ և ամուր, բավականաչափ լայն: Աղցրերը չլուս և լայն դրված: Կուրծքը մեծ, լայն և կապղպերը չլուս և լայն դրված: Կուրծքը մեծ, լայն և կապղպերը մեծ ու չլիթված ժամանակ գեալի գուրս կուղ, ծծերը մեծ ու չլիթված ժամանակ գեալի գուրս կուղ, կաթնառատության յերակները պետք և լինին ցցված: Կաթնառատության յերակները պետք և լինին ցցված: Կաթնառատության յերակները պետք և լինին ցցված:

և վերջանան խորը փոսերով (կաթնատվության հորեր):  
Կազմվածք.—Կաթնատու կովի կազմվածքից նը-  
շանավոր տեղ է բնում լայն ու խոր կուրծքը, մեծ  
թոքերով, վորոնք կարողանան մաքրել շատ արյուն և  
մեծ, ուժեղ սիրտ արյան կանոնավոր շրջանառության  
համար:

Բնուրը (խառնվածքը).—Կաթնատու կովը սովո-  
րաբար լինում է կայտառ, յերբեմն ջղային, այդ պատ-  
ճառով շատ կարենոր է, վոր սնունդը միշտ լավ վիճա-  
կում պահպանի նրան:

Հարցեր.—Ինչով են տարբերվում յեղջյուրավոր  
անառունիերի կաթնառատ տեսակները մասցւ տե-  
սակներից: Կաթնառատ կովերն ինչպես են փոխարկում  
արտադրական կերը, ոգտագործում են մսի ու ճարպի հա-  
մար, նկարագրեցիք կաթնառատ կովի ընդհանուր տեսքը:

Գործնական տեխնալիք.—Մանուկները պետք ե-  
նանոթանան կաթնառատ կովերի զնահատական տախ-  
տակների (կարտոչկաների) հետ և յուրացնեն այդ տախ-  
տակների մեջ ցույց տված կովի մարմնի մասերի ա-  
նունները: Պատկերների ու կենդանի կովերի ողնությամբ  
մանուկները պետք ե պարզ գտադարձ կազմեն կաթ-  
նառատ իդեալական կովի մասին:

Ենթարկության մեջ կազմակերպեցիք  
դեպի լավագույն կովեր ունեցող տնտեսությունները:  
Համաձայնության յեկեք կաթնառատ կովեր ճանաչող  
հմուտ անձանց հետ, վոր համաձայնվեն ցույց տալ դա-  
սարանին հենց կենդանիների վրա, թե նրանք ինչ ար-  
ժանիքներ ունեն կաթնառավորթյան տեսակներից: Ցույց  
տվեք լավ հորթեր ու նրանց խնամատարությունը ո-  
րինակելի տնտեսություններում: Խողոքեցիք բացատրե՛  
գասարանին, թե ինչպես են խնամում նրանք հզի կովերը:

ԿԱԹՆԱՏՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿԱԼ  
(Ուսումնական համար)

Ն Ե Ա Ն Ն Ե Ր	ԹՎԱՅՆԵՐՆԵՐ	
	ՄԻՒՋ	ՄԻՋԱԿ
Ընդհանուր տեսքը		
Պոսկրակազմը բարակ, չլուս, կաշին բարակ ու ճկուն . . . . .	7	
Բնալորությամբ խելոք . . . . .	6	
Գլուխը		
Աչքերը մեծ, պայծառ և արտահայ- տիչ . . . . .	3	
Գլխի ձեւը յերկար . . . . .	3	
Ականջները միջակ մեծության և բա- րակ . . . . .	2	
Մարմին		
Կուրծքը խոր, մեծածավալ . . . . .	6	
Վիզը յերկար, բարակ չլուս . . . . .	4	
Կողերը հեռու-հեռու, զուրուց ցցված	14	
Ազդրերը լայն զրված, ամուր . . . . .	10	
Մեջքը ուղիղ, պինդ . . . . .	8	
Կուրծքը		
Մեծ, կակուղ, ծալքավոր . . . . .	20	
Ծծերը խոշոր և զեպի զուրս ցցված	6	
Կաթնառատ յերակներ, խոշոր, տե- սանելի, բավական առաջ տարածվող .	8	
Կաթնառավորթյան հորեր՝ մեծ . . . . .	3	
Ընդամենը	100	

Աշակերտի աղջանունը,  
Գնահատության ժամանակը:

ԴԱՍ 30-րդ.

ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ.

Յուցադրական Յյուր. — Կաթնատնտեսության զուգընթաց պետք և ցույց տալ անասոնապահության մյուս ձյուղերի նշանակությունը տնտեսության մեջ։ Ցույց տվեք խոզերի և վոչխարների ամենաարդյունավետ տեսակների պատկերները։ յեթե մոտակայքում գտնվում են վողջ կենդանիներ, բացատրեցեք, թե ինչու տապել շահավետ և լավացրած ցեղերի անասուններ պահելը (քաշը, քանակը՝ բազմանալու ընդունակությունը, բրդի հատկությունը):

Խոզաբուծության յեվ վոչխարաբուծության Եւանակուրութեր. — 1) մանր անասուններ պահելը հնարավոռություն և տալիս լրիվ ոգտագործելու տնտեսության մեջ ունեցած սակավարժեք կերերն ու մնացորդները. Վոչխարներն այնպիսի խոտ են ուտում և արոտներում այնպիսի խոտ են արածում, վորպեսիք թողնում են կովերն ու ձիաները։ Խոզերին կարելի յե կերակրել տնտեսության մեջ ունեցած կերերի մնացորդներով, և շնորհիք արագ աճման, խոզերն ուրիշ անասուններից ավելի շուտ են արգարացնում իրենց վրա յեղած ծախսերը (բացառությամբ միայն գուցե հավերի), Յեղական խոճկորները կահոնավոր կերակրելիս որպես կան աճում են կեսից — 1 ֆունտ. 2) Խոզ և վոչխար կարելի յե պահել առանց մեծ ծախսեր անելու նրանց շինության վրա։ Տված ամեն մի 100 ֆ. կերի դիմաց խոզն ավելի շուտ և արդյունք տալիս, քան ուրիշ կենդանիները։

Հաշվված ե, վոր մի ֆունտ միս ստանալու համար խոշոր յեղջուրավոր անասուններին պետք ե մինչև 10 ֆ. խոտ և 10 ֆ. հատիկ։ Մի ֆունտ վոչխարի միսը կարելի յե ստանալ ավելի եժանագին կերերով. գրա համար բավական է 5 ֆ. խոտ և 3 ու կես ֆունտի չափ հատիկ։ Մսացու վոչխար կարելի յե պահել այնպիսի տեղերում, վորտեղ կան վատ արոտներ, մյուս կենդանիների համար բոլորովին անպետք։ Բացի դորանից՝ հյուսիսային յերկրներում վոչխարն անփոխարինելի յե, վորովհետեւ տալիս ե քուրքացու մորթիներ, բուրդ ևայլն։ Ավելի աղվածաղ և գանգրամորթ վոչխարները ցուրտ լեռնամասերում լավ չեն դիմանում. նրանք համեմատաբար տաք յերկրի կենդանիներ են և մեր լեռնակողերին ու գաշտերում հիանալի դիմանում են։ Համեմատեցեք, թե վրբան բուրդ ե ստացվում հուսարակ վոչխարից (մանուկների տեղեկության համաձայն) և աղնվացեղ վոչխարներից, վորոնք առնվազն տալիս են 8 ֆ. բուրդ։

Խոզաբուծությամբ զբաղվելը շատ արդյունավետ և անտառոտ և այն բոլոր տեղերում, ուր ձմեռը կարճ և խոզերին յերկար ժամանակ փակ գոմի մեջ պահելը խոզաբուծության վրա աննպաստ աղղեցություն ունի գլխավորապես մեծ չափերով խոզաբուծության ժամանակ։

Եյուրի մօակուրյուն. — Լեզվից՝ մանրամասն նկարագրեցեք վոչխարաբուծության և խոզաբուծության ոգուտները։ Վորտեղ ավելի նպաստավոր և ոգտակար է վոչխար և խոզ պահելը։ Քանի վոչխար և խոզ ունեք ձեր անտեսության մեջ։ Ի՞նչ ցեղի վոչխարներ և խոզեր գիտեք։ Ի՞նչով են նրանք տարբերվում իրարից։

Թվաբանությունից.—Համեմատեցեք ազնվացեղ և հասարակ վոչխալների ու խոզերի արդյունավտությունը Վարքան ավելորդ միս և բուրդ են տալիս ազնվացեղ վոչխալները:

Նկարչությունից.—Կազմեցեք զանազան ցեղերի խոզերի նկարների ժողովածուները (ալբոմներ) հարկավոր նկարագրությամբ:

Եխվուրսիա: Յեթե հնարավորություն կա, ցույց տվեք մանուկներին որինակելի՝ ազնվացեղ կենդանիներ. զիտեցեք այն աճ տեսությունները, փորտեղ նըստանք կան, թող մանուկները գրի առնեն նրանց պահպանության, բազմացնելու և ոգտագործելու պայմանները:

### ԴԱՍ 31-ՐԴ

ԹԻՉՈՒՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ. (ՀԱՎԱԲՈՒԽՈՒԹՅՈՒՆԻՑ)

Յուցադրական նյուր: Կանխալեն՝ մանուկների ոգնությամբ ժողովհեցեք զանազան ցեղի հավերի նըսկարները: Յույց տվեք նաև որինակելի հավարներ, յեթե շրջակայրում կան, հակառակ դեպքում ցույց տվեք նկարը կամ մոդելը:

Պարաբրում դասարանում: Մանուկների հետ միասին պարզեցեք թուչնաբուծության ոգուանները տնտեսության մեջ: Գյուղատնտեսության մյուս ճյուղերի նման, թուչնաբուծությունն ել պահանջում է վորոշ գիտություն ու փորձառություն, վորպեսզի շոշափելի հաջողություն ունենա և զդալի արդյունք տա: 1) Թուչնաբուծության շնորհիվ անկորուստ սպառագործում են տնտեսության մեջ յեղած բոլոր կերպի զա-

նազան մնացորդներ ճիշտ նույն ձևով, ինչպես մանր անասնապահության՝ այն և վոչխարաբուծության և ճագարիաբուծության ժամանակի: 2) Թուչնաբուծության համար վոչ մեծ տարածություն և հարկավոր և վոչ մեծ դրամագլուխ: 3) Թուչնաբուծությունը յեկամուտ և տալիս զանազան նյութերով և շուտով վերադարձնում և կատարած ծախսները: 4) Թուչնունների խնամքը մատչելի յե նույնիսկ ընտանիքի թույլ անդամներին և մանուկներին:

Ի՞նչպես սկսել: Առանց մեծ ծախսերի սկսեցեք մի քանի հավերից և աստիճանաբար. առաջին փորձի հաջողությունից հետո ավելացրեք հավերի թիվը և մացրեք նորանոր բարեփոխություններ: Արժե միայն պահել յեղական լավ հավեր, գորովհետեւ միենայն պահել յեղական հավերն ավելի մեծ ոխնամքով ու ծախսով յեղական հավերն ավելի մեծ ոխնամքով ու ծախսով յեղական հավերի թույլ ավաներով և թե խոշոր գործիք ավաներով:

Յերբ հնար չի լինում գործը սկսելիս յեղական հավերի ձվաներ գտնել կարելի յե ընտրել ամենախոռնավերի ձվաներ գտնել կարելի ձվաներ և գարսել թիստի շուրջ և շատ ածող հավերի ձվաներ և գարսել թիստի տակ: Դա կը լինի տեղական հավերի յեղն ազնվացներու գործիք սկիզբը:

Գործնական աճխատանք: Թող մանուկները սկսեն դրավոր կանոնավոր հաշվառք իրենց տան հավերի առջական ձվաների քանակի մասին, հենց վոլ հավելը կը սկսեն ձու ածել գարունքից:

Եխվուրսիա: Մանուկների հետ դիտեցեք այն տնտեսությունները, վորտեղ կանոնավոր թուչնաբուծություն են տանում:

Աճխատանք նյուրի շուրջը: Կազմեցեք մանրամասն

տեղեկագիր ձեր տեսածնիրի մասին և բերեք համեմատական տվյալներ, թե ինչ յեկամուտ և ստացվում ցեղական և հասարակ հավերից:

Ձեռարվեսից: Արհեստանոցում մանուկները կարող են շինել թոշուններին կերակրելու կերակրամաններ և մտցնել իրենց հավանոցներում անհրաժեշտ բարեկարգություններ:

### ԴԱԱ 32-րդ

#### ՀԱՎԱԲՈՒԽ ԿԱՌՈՒՑԵԼԸ

Յուցադրական եյութ: Զանազան ձեր հավաքներ հատակագծեր և նկարներ մանուկները պետք են բերն իրենց հավաքների տեղադրության հատակագիծը:

Դասարանական պարագմաների թոշնարության համար մեծ և կարեոր նշանակություն ունի չոր և տաք հավաքունը, վորը պետք են կառուցված լինի բարձր, չոր և արևոտ տեղ, Հավաքնի մոտ ջուրը չպետք են լճանա, լավ են, յեթե նա դարձրած են դեպի հարավ և լավ տաքանում են արեի ջերմությամբ,

Հավաքնի մեծուրյանք, Ամեն մի հավի համար պահանջում են 2—3 քառակուսի փուտ հատակ, Հավաքունը պետք են ունենա գավիթ՝ ցուրտ ու խառն են լինել ցուրտ տեղերում կիսագետնափոր, թեք տանիքով, կրկնափեղկ լուսամուտներով:

Եխսկուրսիա: Դիտեցեք մանուկների հետ հարհանմամատցեք իրար հետ:

Աշխատանք: Հավաքած բոլոր նյութը՝ հատակա-

գծեր, նկարներ, լուսանկարներ ևայլն, պետք են քննության առնվի և պետք են պարզվեն բոլոր առավելություններն ու թերությունները: Պետք են շեշտել տաք, մաքուր և չոր հավաքնի կարեորությունը: Այս և նման նյութերի մասին զեկուցումներ կարդալիս են քննագատություններ կատարելիս մանուկներին պետք են հսարավորություն տալ արտահայտվելու, և խրախուսել նրանց գործունեյությունը (ակտիվությունը), թիճության առեք, թե մեր լեռնային ցուրտ տեղերում ինչպես կըհարմարեցնեք հավաքունը գոմին կից, վորովհետև առանձին շինած հավաքունը մեզանից վառելիքի ծախս կըպահանջեր:

Աշխատանք արհեստանոցում: Մանուկներն իրենց ունեցած հատակագծերի և նկարների համեմատ կարող են կառուցել որինակելի հավաքուն: Հատակը սովորաբար շինվում է ցեմենտից, վորպեսզի մկներից կարողանանք խուսափել: Խճի կամ մոխրի վրա շինվում է մի վերշող հաստությամբ ցեմենտի սվաղ: Կարելի յե շինել մաքուր սալահատակ:

Ծանօթություն: Խոնավությունից թոշունները հիգիանգանում են և վոչլուսում. բայց վոչիներ, պարագիտներն ու տիզը յերբեմն լինում են և լավ հավանոցներում: Դրանց առաջն առնելու համար պետք են գործածել նավթի եմուլսիա:

Թոշնաբուծական ցուցանանդես: — Վորովինեակ բոլոր տներումներ, կը թոշուն են ոլահում և նա ընդհանուր հետաքրքրության առարկա յե, այդ պատճառով դըպուցին կից կարելի յե կազմել թոշնաբուծական ցուցանդես: Ուսուցիչը կլինի միմիայն խորհրդատուաշակերտական ցուցանդեսային մասնաժողովի: Աշաշկերտական ցուցանանդեսային մասնաժողովի:

շակերաները ցուցահանդեսի համար պետք է պատրաստեն թուչունների կերակրամաններ և ձու ածելու բների որինակներ։ Այս բոլոր մանուկները, վորոնք տանը կատարում են թուչնաբուծական աշխատանք, պետք և մանակցեն ցուցահանդեսին և բերեն, ցուցադրեն իրենց հավերը։ Ցուցադրածների գնահատատականը պետք է տան իրենք, նրանց տված գնահատականը համեմատեցեք հրավիրված եքսպերտի գնահատականի հետ։

Հավելված։—Դասարանական աշխատանքի ժամանակ կարելի յէ հաղորդել իսկ յեթե հնար և, ցուցաւ վոր հավերը մեծ ախոքժակով ուսում են ծեծած խոզկաղին, կիր և ավագ, և մեծ քանակությամբ ձու ածում, իսկ ապրիլ մայիս ամսից նրանց կարելի յետալ մսեղեն կերակուր բոլորովին ձրի։ Հարկավոր և հավանոցի բակում ունենալ տափարի այրված աղրի (սեացած) յերեք կույտ, վորոնք պետք և ջրվեն, միշտ խոնավ պահպեն և ծածկվեն ձկան մաշված թոռի կտորով, վոր հավերն անժամանակ չքջըջեն։ Այդ կույտերի մեջ բազմանում են անթիվ անձրեային վորդեր։ Հերթով բանալով նրանցից յուրաքանչյուրը, հավերը քջում և կերակրվում են անձրեային վորդերով։ Հինգ, վեց որից ծածկում են առաջինը, ջրում, և ըաց են անում յերկրորդը։ 5—6 որից հավաքում, ջրում և ծածկում են յերկրորդը և բաց անում յերրորդը, և այսպես ամբողջ վեց ամիս Հարկավոր և միայն միշտ խոնավ պահել այդ կիտուկները։

Նկարչությունից։—Մանուկները պետք է կազմեն թուչնաբուծական ալբոմներ։

### ԴԱՍ 33-ՐԴ

#### ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ցուցադրական նյութ։—Պատրաստեցեք բաժանվող փեթակի մողել, դասարան բերեք բջիջով մեղր, շրջանակներ մոմահատով և մոմաթերթ։ Ցույց տվեք մեղուների և յեթե կան, մեղվաբուծական գործիքների պատկերներ։

Դասարանական պարապմունք։—Մեղուների նշանակությունը, նրանց զերը տնտեսության մեջ, նրանց նշանակությունը պաղաքուծության համար, յօնջայի, կորնկանի, յերեքնուեկի, ուս կորեկի (գրեշեխայի) նշանակությունը մեղվաբուծության համար։ Մեղուները վորդես բույսերի և ծաղկիների բեղմանվորիներ։ Մանուկները թող զեկուցեն զասարանին մեղուների կյանքի և ձագ տալու մասին։ Տեսէլ են արդյոք մեղիքի ձագ տալը, յերը և վնրտեղ։ Մանուկները կարող են կազմել մեղուների և նրանց կյանքի մասին զեկուցումներ՝ մեղուների տեսակների, փեթակների և այլ կարևոր գործիքների նկարներով կամ մողելներով այնպես, վոր վերջը կազմեն մեղվաբուծական ալբոմներ և ժողովածուներ։

Հարցեր։—Ի՞նչպես են կոչվում մեղուների զանազան տեսակները փեթակում։ Ի՞նչ կը նշանակի ձագ տալ։ Վճրքան մեղր կարող ենք ստանալ մի փեթակից, Ի՞նչպես կարող ենք ուժեղացնել փեթակը։ Ի՞նչ կը նշանակի արհեստական կերակրում։ Ի՞նչպես կարող ենք շատացնել և յերկարացնել մեղվաբերքի տեղովթյունը։

### ԴԱՍ 34-ՐԴ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԶՄԵԽԱՆՑՀ

Եխվուրսիա.—Դիտեցեք, թե ի՞նչպես են մեղուներն անցկացնում ձմեռը շրջակայքում։ Մնում են բացովիա մեղվանոցնեմ, թէ պահպում հատուկ շենքի կամ նկուղի մեջ։ Ի՞նչպես են պաշտպանում փեթակները ցրտից։ Գրի առեք ձմեռելու պայմաններն ամբողջ մանրամասնությամբ, նրանց սննդառությունն ու գործունեությունը այդ շրջանում։

Հարցեր.—Մեղուներն ի՞նչպես են կերակրվում ձմեռ ժամանակի՝ Վորքան մեղու յել լինում փեթակում ձմեռը և վորքան ամառ ժամանակի, հունիսին։ Ի՞նչ ջերմություն և հարկավոր մեղուներին ձմեռ ժամանակի։ Յուցց տվեք, թե ինչ վնաս կարող է տալ բարձր ջերմությունը ձմեռ ժամանակ։

Նյուրի մեակորմն։—Լեզզից։ Նկարագրեցեք մեղվարուծության կացությունը շրջակա տնտեսություններում։ Վորքան նորաձեւ փեթակներ կան այդ անտեսություններում։ Վորքան մեղը և ստացվում մի փեթակից։ Մեր շրջակայքում պահվել են արդյոք հին ձեր փեթակներով մեղվանոցներ։ Ի՞նչ առավելություններ և տալիս մեղվարուծության բաժանվող փեթակը։ Նկատվում և արդյոք ժողովրդի մեջ հետաքրքրություն դեպի մեղվարուծությունը ձեր շրջանում։

Նկարչուրունից։—Նկարեցեք բաժանվող փեթակի մասերն առանձին-առանձին և միացած։

Զեռարվեստից։—Փորձեցեք շինել բաժանվող փեթակը։

Զեզ վրա փերցը մեղուների խնամքը և յեթե չունեք, ձեռք լերեք մի կամ յերկու փեթակ։

### ԴԱՍ 35-ՐԴ

ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Յուցադրական նյութ։—Յուցց տվեք պատկերներով կամ իրականում, թե ի՞նչպես են պահում հորթերին բարեկարգ տնտեսության մեջ։

Դասարանական պարապերնեմ։—Հորթերին կարելի յել կերակրել առանց ծեցնելու և վորոշ ժամանակից հետո (40 որ) կարելի յել հետզհետե տալ սերզատից անցկացրած կաթ, վորի մեջ պարունակում են միայն յուղային մասերը և վորոնց փոխարեն կարելի յել ալյուր ավելացնել։ Ավելի լավ և ճնելուց անմիջապես հեռացնել հորթին և սովորեցնել նրանց կաթ խըմել ամանից։ Պետք ե վիզը բռնել ձախ ձեռքին և աջ ձեռքի մատը կոխելով կաթի մեջ, ծծել տալ հորթուկին։ Հորթի գլուխը փոքր առ փոքր կուացնելով գեղի ցած և մոտեցնելով վեղրոյին, նրան շատ շուտ կարելի յել խմել սովորեցնել։ Կաթը պետք ե լինի տաքուկ, մաքուր ու թարմ։ Առաջին յերկու շաբաթը՝ ուրական ըավական և 4—6 լիդր (կրուժկա), Մինչեւ 4 շաբաթ տալիք կաթին ավելացնում են միայն ալյուր, իսկ յերկրորդ ամսվանից հորթին կարելի յել տալ կովերին տված կերից։ Հորթերին խոտ պետք ե տալ յերկրորդ ամսից, աստիճանաբար սովորեցնելով խոտ ուտել։

Հորթերի տակ պետք ե լինի միշտ չոր և դարձան կամ ձղնոտ փումած։ Հորթերին պետք ե տալ մաքուր, պարզ զուր և քիչ-քիչ ել տղ։

Աշնան և ձմռան հորթերը համարվում են ավելի լավ, քան գարնան ծնվածները, վորովհետե ձմռան յե-

Քեզ ամիսները նրանք ստունում են կաթ և լոփ, չեն ոգտվում արոտից և յերբ գարուն և գալիս, ավելի լավ են արածում և ոգտագործում թարմ՝ հյութալի կերը։ Հորթին պետք է շաբաթը մի անգամ լողացնել։

Եխկուրսիա։ — Դիտեցեք այն տնտեսությունները, վոր կանոնավոր խնամում և կերակրում են կաթնառատ կովերի հորթերին։ Ուշագրություն դարձրեք խնամքի վրա, կերակրելու յեղանակի վրա, կերի հատկության ու տեսակների վրա հայլն։ Համաձայնության յեկեք տիրոջ հետ, վոր նա դասարանի հետ խոսմի գործնական անասնապահության մասին։ Գրի առեք գոմերի ներքին տեսքը և հորթերի բաժանմունքը։

Նախազիծ։ — Զեզ վրա վերցրեք հորթի խնամքը ծնվելու հենց առաջին օրերից։ Խմել սովորեցրեք, այնուհետև կերակրեցրեք քաշած կաթի և ալյուրի լափերով։ Աստիճանաբար՝ ըստ հասակի, տվեք նրան խոռ և հատիկային կեր։

Չերքի աշխատանք։ — Շինեցեք ձեր արհեստանոցում հորթանոցի վանդակապատը։

### ԴԱՍ 36-րդ

#### ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԹՅՑՈՒՆ

Ցուցադրական նյութ։ — Ցույց ավեք շոշափելի որենակներով մաքրության անհրաժեշտությունը կաթնատնտեսության մեջ։ (Ամաններ, սերպատ, խնոցի հայլն պահանջված մաքրությամբ)։

Քբաղմունեներ դասաւոնում։ — Մատնանշեցեք կաթի բարձր սննդաբարությունը և բակտերիաների հեշտ բազմանալը նրա մեջ։ Ցեթե հնարավորություն

ունեք ծանոթացրեք մանուկներին կաթի վերլուծության հետ կենդրոնախույս գործիքի շնորհիվ (յուղային մասեր վորոշելը) և սերպատի աշխատանքի հետ (սերպատելու հետ)։ Կաթի բաղադրիչ մասերը տարբեր չափունեն, վորը կախված է կաթնատու կովերի ցեղից և հատկությունից, կթելու ժամանակից, կերից ևայլն բայց կաթի բաղադրիչ մասերը միջին չափով հետևյալն են։

Զուր	.	.	.	87,2	տոկոս
Յուղ	.	.	.	3,8	»
Կաթի շաքար	.	.	.	4,9	»
Կաղեյին	.	.	.	2,8	»
Սպիտակուց	.	.	.	0,6	»
Մոխիր	.	.	.	0,7	»

Այս բոլոր նյութերը կաթի մեջ լինում են հեշտ յուրացվող վիճակում և այդ պատճառով կաթն ուղղակի անփոխարինելի յեւ։

Վորպեսպի կաթը հեռու տեղ փոխադրելիս չփչանա, պետք է պաշտպանել վոչ միայն թողից, կեղուից և փոշու ողի բակտերիաներից, այլ ուղարկելուց առաջ պետք է պալեցնել մինչև 5°—6° Ռեումյուրի։

Եխկուրսիա։ — Ցեթե հնար կա մոտակայքում տեսնելու յուղապահրազործաբան, կատարեցեք այդ վիտողությունը, վորպեսպի մանուկները ծանոթանան սերպատի և խնոցու գործունեության և սեր ու կարագ ստանալու աշխատանքների հետ։ Ցույց տվեք կարագի տեսակները և նրանց բարձր արժեքը՝ վորպեսպանդանյութի։

Հարցեր։ — Ինչի՞ց ե կաղմված կաթը։ Մշտակման և արդյոք նրա բաղադրությունը։ Բացատրեցեք։ Ի՞նչ բան և առկոսը։

կաթի վոր մասերն են բորակածնով հարուստ Անդարար նյութերի վոր տեսակին և պատկօնում կաթը, շաքարը, կաթի վոր նյութիցն և կազմվում յուղը: Ի՞նչպես և փոփոխվում միենույն կովի յուղի քառակը, ի՞նչպես են վորոշում կաթի յուղի քառակը: Վորքան կաթ և հարկավոր մի փունտ յուղ ստանալու համար: Յուց տվեք կաթի և յուղի նշանակությունը մարդուս մննդառության համար: Կաթն ինչո՞ւ յե շուտ փշանում: Մաքրությունն ինչո՞ւ յե հարկավոր կաթնատնտեսության մեջ:

Գործնական աշխատանք, Ցեթե հնարավորություն կա, թող մանուկներն իրենք աշխատեն կաթնատան մեջ սերգատով, ինոցիով և կարագ հարեն:

Մանուկները կարող են նկարագրել, թե իրենց կովերից վորքան կաթ են ստանում, ի՞նչպես են պահում այդ կաթը, ի՞նչ են վերամշակում (պատրաստում) նրանից: Պարզեցեք, թե քանի ընտանիք կով չունեն:

## Դ Ա Ս 37-րդ

### ՏԵՂԱԿԱՆ ՑՈՒԼ ՊԱՀՈՂ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Bull Associations)

Ցուցալրական նյութ.—Ճարեցեք ցեղական ցուլերի պատկերները, Համեմատեցեք նրանց նախրի սովորական յեզների հետ: (Պետք է ճարել և որինակելիրլանկներ՝ ցեղական հորթեր և կովեր ցուցակագրելու համար):

Դասարանական պարագմունք.—Պարզեցեք ցեղական ցուլ պահող կոռպերատիվ ընկերություն նպատակը: Ընկերության ցանկությունն և յուր անդամներին

հնարավորություն տալ լավացնելու իրենց կաթնատու անատունները: Այդպիսի ընկերակցության անդամներն աշխատում են միացած ուժերով լավացնելու կաթնատնտեսությունը և կաթնատու կովերի ցեղն իրենց շրջանում: Այդպիսի միացած ուժերով նրանք կարող են միջոցների ձեռնարկել վարակիչ հիվանդությունների գեմ, լավացնել մարդագետիններն ու արոտատեղերը և այլն: Ի՞նչպես կազմել ընկերությունները: Տըրքած վայրից շահագրգոված զյուղացիները, վորոնք ցանկանում են լավացնել իրենց կաթնատուների սերունդը, հավաքվում են խորհրդի և քննում մշտական կազմակերպություն ունենալու ցանկալիությունը:

Ցուլի բներությունը.—Ընկերակցություն կազմակերպելուց հետո՝ զլիսավոր խնդիրն և ցուլի ընտրությունը: Ընկերության անդամները ցուլ գնելու առթիվ պիտի խորհրդակցեն զյուղատնտեսի հետ: Պետք է գնել մաքրայուն ցուլ այնպիսի կովի սերնդից, վորը հայտնի յե յուր կաթնատությամբ և տված կաթի լավ հատկությամբ (յուղությամբ):

Պետք է հետեւ առանձին կովերի կթին ու նշանակել նրանց տված կաթի քանակը: Այդպիսի ցուցակագրությունները հնարավորություն են տալիս վորոշելու: 1) Կովերի ստացած կերի կանոնավոր ողտագործելու ընդունակությունը, 2) Վոր կովերն են ոգուտ բերում և վորոնք վնաս: Հոտի մեջ պիտք է թողնել միմիայն ամենալավ կովերը:

Հարցեր.—Նկարագրեցեք ընկերակցության նպատակը ցեղական ցուլ գնելիք: Ո՞վ կարող է ոգնել ընկերության անդամներին ցուլ ընտրելիք: Ի՞նչո՞ւ պիտք է ցուցակ պահել յուրաքանչյուր կովի տված կաթի

համար առանձին: Վորոնց և վորպիսի կիթը կարելի յէ համարել բավարար: Ի՞նչպես տանել այդ ցուցակները: Գոյություն ունի արդյոք մեր դպրոցի շրջակայրում այդպիսի ընկերություն: Ինչնումն և կայանում կոռպելացիայի առավելությունը մասնավոր տընտեսության համար:

Գործնական արխատանիք: — Պարզեցեք կոռպերատիվ ընկերության աշխատանքն ու հետևանքները տված շըրջանում անտառնապահություն լավացնելու գործում, յեթե այդպիսի ընկերություն գոյություն ունի (յիթե գոյություն չունի պետք և ծանոթացնել արտասահմանյան նման ընկերությունների գործունեության հետ և պահանջել նկարագրել այն): Նկարագրեցեք ընկերակցություն չեղած տեղերի անասնապահության դրությունը:

Նախագիծ: — Կազմակերպեցեք ցեղական ցուլ գընելու ընկերակցություն:

### ԴԱՍ 38. ՐԴ

#### ԽՈԶԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՄԱՆԱԿ

Ցուցադրական նյութ: — Դիտեցեք այն անտեսությունը, փորտեղ կանոնավոր խոզ են պահում կամ ցույց տվեք ձմռան խոզանոցների պատկերներ:

Դասարանական պարապմունիք: — Վարակիչ հիվանդություններից խուսափելու համար խոզերին պետք է պահել ցամաք շենքի մեջ, փոփոխել նրանց տակին փռոված ծղնուան ու դարմանը: Վորտեղ միայն հնարավոր կա խոզերին լավ և արոտով պահել արած տեղերում: Խոզերն առաջն առանձին տեղերում, տակի գործադրությունը կա առաջն առանձին տեղերում:

Կացնում ե նրանց պահպանության ծախսը և գիրացնելու գործը: Այդ պատճառով մեզ մոտ՝ հարավում, խոզ պահելն ոգտակար է, վորովհետև նրանք համարյա ամբողջ տարի ոգտվում են արոտով: Վորովհովի արածացնելը ոգուտ ըերի, հարկավոր և կերերի հատուկ ցանք ունենալ: Սովորաբար կերակրում են յեղիպտացորենի չհնձած չոփերով, առվույտով կամ յերեքնուց միայն ձմեռները խիստ չեն, խոզերին կակով: Ուր միայն ձմեռները խիստ չեն, խոզերին կարելի յե պահել շարժական խոզանոցներում, վորոնք շատ պարզ են և Ա տարի ձև ունեն: Այդպիսի տնակշեր մասնուկները կարող են շինել և իրենց արհեստանոցներում:

Վորտեղ միայն խոզաբուծությունը լավ արդյունք և բերում և զրված և կանոնավոր, այնուզ խոզերի համար շինում են ցեմենտած ավագաններ, վորոնց միջ խոզերը լողանում են: Մաքուր ջրի և խնամքի բացակայության դեպքում կարող են աեղի ունենալ հիվանդություններ, վորոնցից կարելի յե պատվիր հիվանդությունների, վորոնցից կարելի յե պատվիր միայն նախազգուշական միջոցներով: Հիվանդությունների առաջն առնելը ավելի հժան և նստում, քան հիվանդացած անստունների բժշկությունը:

Հիվանդություններ: — Խոզաբուծության ամենավառակար հիվանդությունն ե խոզերի խոլերան: Նրանով հիվանդացած կենդանիներին այլևս փրկելու հնարջկա: Կարելի յե միայն առողջներին բաժանել հիվանդություն: Այդ հիվանդությունը տարածում են մի վանդներից: Այդ հիվանդությունը առածում են մոտեսակ բակտերիաներ, վորոնք կարող են վարակել հողը, ջուրը, փոխադրվել շների միջոցով, կերակրով, տաղը, ջուրը, փոխադրվել շների միջոցով, կերակրով, տակի փոփածքով ևայլն: Սատկած կենդանիների տեսակներն անպատճառ պետք է վառել:

Ախտահանուրյուն. — Տարափոխիկ հիվանդությունների տռաջ կաբելի յև առնել մաքուր պահելով խոզանոցներն ու ցանկապատերին սրսկելով հատուկ խառնուրդ, վորը պատրաստվում և 1 փունտ չհանգըրած կրից, մի շիշ կարբույան թթվուտից և մի վեղրո ջրից, և հաճախ կրով սպիտակացնել պատերը:

Խոզանոցի բակում կիր ցանելը նույնպես շատ ոգտակար և, իսկ կեղտոտ փովածքն ու մյուս մնացորդները պետք ե վառել:

Վորպես ախտահանության միջոց կարող ե ծառայել նաև կարբույան թթվուտի 5 տոկոս խառնուրդը (5 տոկոս կարբ. թթվուտ, 95 տոկոս ջուր) կամ քլորային կրի մի մսխալը շիշ ջրի մեջ:

Հարցեր. — Ինչու պետք ե խոզերին չոր տեղ պահել. Ինչու նրանց համար պետք ե ունենալ հատուկ արոտներ, խմելու մաքուր ջուր, լողալու ավազան հոսող ջրով և արեի լույս: Ի՞նչպես են վարակիչ հիվանդությունների առաջն առնում:

Դործնական աշխատանք. — Դիտեցեք և մանրամասն նկարագրեցեք խոզեր մեծացնելու ձեւը լավագույն տնտեսությանց մեջ: Թող մանուկները տեղեկագիր պատրաստեն, թե ի՞նչպիս են խող պահում իրենք կամ իրենց դրացիները:

Ատաղձագործական արհեստանոցում. — Կառուցեք շարժական խոզանոցներ՝ բացվող տանիքով, շինեցեք խոզերի ավտոմատ կերակրամաններ, շինեցեք ցեմենտյա ավազան կամ տախտակյա տաշտակներ խոզերին լողացնելու համար:

Նախագիծ. — Մաքուր պահեցեք խոզանոցները:

Հսկեցեք անասունների շենքերի և բակերի առողջապահության կացության վրա \*):

### ԴԱՍ 39-ՐԴ

#### ԱՅԾԵՐ ՑԵՎ ՃԱՐԱՐՆԵՐ

Դիտողական նյութ. — Ցույց տալ այծերի և ճագարների գանգան տեսակներ և պատկերներ, ճագարների բներ՝ թե հողի և թե վանդակների մեջ. ճագարների մորթիներ, այծի մազից պատրաստած ճապան, աղվամազից պատրաստած ձեռնոցներ կամ գուլպաներ, կաշվից պատրաստած տկեր, տկճորներ և այլն:

Դասարանական պարագաներ. — Վոր կենդանիների նման են ճագարները: Վորտեղ են բուն շինում: Քանի ձագ կարող են բերել և տարեկան քանի անգամ: Ինչու յենք ճագարներ պահում, ի՞նչպիսի միս ունեն և վորտեղ սննդարար ե միսը: Ի՞նչ են ուտում ճագարները: Ի՞նչն ե նրանց գլխավորապես վնասում: Խոնավությունը, ճագարներն ոգտագործում են տնտեսության մեջ յեղած կերերի բոլոր մնացորդները և չոր տերենները, ճագարներին չի կարելի բանջարանոցում աղատ պահել, վորովհետև ամեն ինչ կըկրծեն: Վորձ ճագարներին պետք ե ճագերի մոտ չթողնել ճագար-

\*) Ամառվա ընթացքում, փակելով ավազանի հոսանքը, շատ ոգտակար ե ավելացնել ջրին մի քիչ նավթ կամ 2 տոկոս կրեոլին, վորոնք խոզերին աղատում են միջատաներից: Յեթե մերձակայքում կա հանասնաբուժական կայան, վորտեղ կատարվում են հակախոլերային պատվաստ, խնդրեցեք անասնաբուժից, վոր աշակերտներին ծանոթացնի այդպիսի պատվաստի հետևանքների հետ:

Ներին սանրում են և ստանում ամենամաքուր քընքույշ բուրդ, վորը մանում և զործվածքներ են պատրաստում: Այծերը նույնպես ոգտակար են, մանավանդ Անգորայի աղվամազ, սպիտակ ու գանգուր այծերը: Նրանց կաթը շատ լավ և հիգանդների համար: Այծի մորթուց կարում են քուրք կամ պատրաստում կոչիկների կաշի:

Եխակուրսիա.—Այցելեցեք այծ ու ճագար պահող տնտեսությունները և հարցուփորձ արեք նրանց պահպանության պայմանների, շենքի, կերակրի ու տված արդյունքների մասին: Պահանջեցեք վոր աշակերտները զրի առնեն ստացած տեղեկությունները:

Ա. Յատանեֆ.—Լեզվից—Նկարագրեցեք ճագարաբուծության և այծ պահելու ոգուանները և նրանց վընասը բանջարանոցներին և մատադ տնկարաններին, յերբ նրանց թողնում ենք այնաեղ:

Գործնական.—Զեռք բերեք ճագարներ և պահեցեք վանդակներում:

### ԴԱՍ 40-րդ

ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՅԵՂԻ ՅԵՎ ՄՈՒՏԲԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԳՈՒՅՑԻ ԳՈՒՅՑԱՅԻՆ ՅՈՒՅՆԵՐ

Յուղադրական նյուր: Ծանոթացրեք մանուկներին յելք ու մուտքի զրանցման հասարակ ձևերի հետ: Յույց տվեք յել ու մտից մատյաններ, շարաթական, ամսական ստուգումներ և այլն:

Հաւիքեառման նեանակուրյունը: Մեզ մոտ, տնտեսության մեջ կատարված ծախսերը սովորաբար վոչ մի զրանցման չեն յենթարկվում, զրի չեն առնվում,

այդ պատճառով անհարին և հաշվել թե մեր տնտեսության վոր ճյուղերն են ոգուտ բերում և վորոնք վնաս: Այս ինչ տնտեսության տերը պետք է զիտենա, թե վոր մթերքներն են ոգուտով ծախված և վորոնք վնասով, և թե նրա տնտեսության յել ու մուտքի գումարը ինչ տարբերություն է տվել: Այդ կարելի կլինի իմանալ համեմատելով մեր ներկա տնտեսությունը տարեկերծին ունեցածի հետ: Դրա համար տարեկերծին կազմվում է «Գույքի ցուցակ», վորի մեջ մտնում են՝ բոլոր շենքերի արժեքը, բոլոր գործիքների, անսառնակների, հացի և կերի մթերքների արժեքը և կանխիկդրամը: Յեթի մի տարուց հետո մենք նորից այլպիսի ցուցակ կազմենք և համեմատենք այդ յերկու ցուցակները, կըկարողանանք նկատել, թե ինչ և ավելացրել մեր տնտեսությանը: Բացի գրանից տնտեսության տիրոջ համար շատ ոգտակար է զիտենալ յուր տնտեսության ամեն մի ճյուղի տված ոգուտի կամ վնասի չափը և այդ պատճառով նա պետք է ունենա պահանջանել զաշտային և անասնապահական բաժինները: Ամենից ազրա համար հաշվի առանձին բաժինները Ամենից առաջ մուգում կատարված զանազան աշխատանքների արժեքի և ծախսված մթերքների արժեքը:

Պիտք է առած, վոր տնտեսության մի քանի ճյուղերի արդյունավետությունը մեզ մոտ այնքան ճեղս և յեղել վոր նրանք հեշտությամբ մուտք են գործել և ընդառնակ չափերով տարածվել (այդպես են մերիկայից բերած նոր բույսերը), գետնախնձոր, տմերիկայից բերած նոր բույսերը), գետնախնձոր, տոմաթի և յեգիպտացորեն, բայց կանոնարկածաղիկ, տոմաթի և յեգիպտացորեն, ամբողի հաշվաղանությամբ ավելի շուտ կարելի յեւալուր

պարզել այդ ոկուտը և ավելի լավ կազմակերպել տընտեսությունը:

Հարցեր.—Ինչումն եւ կայանում հաշվեառման ոգուտը: Ի՞նչ են տալիս տնտեսություն վարողներին գույքի ցուցակները:

Գործնական աշխատանք.—Կազմեցեք տնտեսության վորոշ ճյուղի հաշվապահությունները: Գրի առեք բոլորը ձեր կազմած ձևերով: Կազմեցեք ձեր տընտեսության գույքի ցուցակը:

Ծանորություն:—Վորովհետեւ ամեն տեսակ ցուցակագրության վերաբերմամբ մեր ժողովրդի մեջ գոյություն ունի վորոշ նախապաշարմունք և թերուավատություն, այդ պատճառով դպրոցի վարչությունն այս աշխատանքը պետք է կատարի զգուշորեն: Այսպիսի աշխատանքին միմիայն գիտակցական վերաբերմունքը կարող է զգալի ոգուտ տալ և աշակերտների աշխատանքները կարող են հիմք ծառայել կանոնավոր հաշվապահության:

### ԴԱՍ 41-րդ

ՍԵՐՄԵՐԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ

Ցուցադրական նյութ:—Ժողովեցեք մեր շրջանում ցանքող ամեն տեսակ սերմերի տեսակները: Մանուկներն իրենց տներից կարող են բերել ունեցած սերմեր: Աշխատեցեք ձեռք բերել ափելի լավացրած սերմեր փորձակալտերից և սերմարուծարաններից:

Դասարանական պարապմունք:—Նախ դիտեցեք փորձադաշտից կամ սերմարուծարանից ձեռք բերած

սերմերը և համեմատեցեք տեղական տնտեսություններից բերած սերմերի հետ: Վորոշեցեք մոլախոտերի սերմերն ու նրանց չափը՝ քանակը: Նման են արդյոք նրանք այն սերմերին, վորոնց աղբոտել են: Պարզեցեք, թե ել ուրիշ բնչ աղը կա սերմերի հետ: Մասնակները պետք են սովորեն ձանաչել այն բոլոր սերմերը, վորոնք ցանվում են իրենց շրջանում: պիտք են սովորեն ձանաչել նրանցից լավն ու վատը և համեմատեն հարեան գավառի սերմերի հետ:

Գործնական աշխատանք:—Ցուցակագրեցեք կարգով մեր շրջանի ցանքսերի տեսակները և համեմատեցեք հարեան շրջանի ցանքների հետ: Զոկցեցեք ձեր ուսուցած սերմերի ամենաառողջ և ուժեղները: մաքրեցեք ձեր սերմերը աղբից, մոլախոտերից և վտիս ու անպետք սերմերից:

Նյութի մօակույթ:—Լեզվից: Նկարագրեցեք ձեր ընտրած սերմի ծլումը, մշակությունը, աճումն ու ոգտակուրծելու ձևերը:

Նկարչությունից:—Նկարեցեք սերմեր մաքրելու մեր գործիքները:

Եվակուրսիա:—Տարեք և ցույց տվեք աշակերտներին սերմ ընտրող «տրիյեր» մեքենան և նրա աշխատանքը, ջրաղացը և տեսակարարը (сартировка):

### ԴԱՍ 42-րդ

ԱՅԻԲՆԵՐ ԲԱՆԱԼԻ ՅԵՎ ՎԱԶԻ ՈՒ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԱՎԵԼԱՐԴԻ ՃՅՈՒՂԵՐՆ ԵՑԵԼԻ (ԿՏՐԱՏԵԼԻ)

Ցուցադրական նյութ:—Պատկերների վրա ցույց տվեց կանոնավոր խուզած ծառերն ու ետած վազերը

իրենց տարբեր ձևերով՝ ըստ տեղական պայմանների և սովորության։ Համեմատեցեք չխռովատ ծառերի և վաղերի պատկերների հետ։ Ծանոթացրեք, թե ինչ վնաս և տալիս խիտ ու խուլ ճյուղավորությունը, վարոնց մեջ կան և չորացած ճյուղեր, վորոնք խանգարում են պատրաների հասունանալուն, խելով վազի և ծառի սննդանյութերը բոլորավին ապարդյուն կերպով։ Դիտեցեք խաղողի և պտղատու այգին, վորտեղ կատարվում ե ետելու և ծառեր խռովելու, այգին ու ծառերի տակը փորելու աշխատանքը։

Դաստանական աշխատանք։ — Բացատրեցեք վաղերն ետելու և ծառերը խռովելու աշխատանքի կարեւ վրությունը լավ և առատ պտղաբերության համար։ Խուզելու ամրացնում և ծառը և առաջ բերում պտղատու կոկոնների զարգացումն, հեշտացնում և պտռուների հասունանալը։ Խուսափեցեք հաստ ճյուղեր կը տրելը, վորովհետեւ նրանց վերքերն ուշ են ծածկվում։ Կարվածքները պետք լինեն վողորկ և տակից կարքած, հակառակ դեպքում դանակով հարթելով։ Կարքած տեղերը պետք ե քսել հատուկ մահլամ, վորը պատրաստում են 1 ֆ. ճյութից, կես ֆ. մեղրամոմից և 2 մախալ ճարպից։ Այս բոլորը պետք ե հալել ու խառնել իրար և առա լցնել մի վեղբու սառը ջրի մեջ։ Յերբ խառնութելը կը պաղի, պետք ե լավ խառնել վոր բոլորովին հարթ ու կակուղ գտոնա և քսել ծառերի վերքերն։

Նույնիսկ հասակավոր պատղատու ծառերը, յիթե ճյուղերը կտրում ենք մաքուր, կանոնավոր և ծածկում մահլամով, հեշտությամբ ծածկում են իրենց վերքերը։ Ճյուղերը պետք ե կտրել մաքուր և սուր գործիքնե-

րով։ Մատղաշ շիվերը պետք ե կտրել կոկոններին մոտ, վորպեսդի այն տեղից նոր ճյուղն աճի։ Խուզելը սովորաբար կատարվում է ձմռան վերջը՝ փեարվար ամսին կամ մարտի սկզբին, տաք յեղանակի և հյութերի շարժման ժամանակ։

Գործնական աշխատանք։ — Վաղերն ետելու և ծառելու խռովելու աշխատանքները տեսնելուց հետո, ինքներգ խռովեցեք ձեր ծառերից մի քանիսը։ Աշխատեցեք հետացնել բոլոր չոր ու ավելորդ ճյուղերը և կանոնավոր ձեւ տվիք ծառելին։ Առանց կանխապես չափելու և քննելու վոչ մի ճյուղ չկտրեք։

Նյուրի մօսկովան։ Լեզվից։ — Նկարագրեցեք խաղողի վաղերը ետելու և ծառելը խռովելու գործիքներն ու գործողությունը նրանց ձևերն ու աված սովորությունների մասնաւորագույն մասնաւորագույնից։

Նկարչություններ։ — Նկարեցեք մանրամասն և ծիշտ կերպով այն ծառը, վորը ցանկանում եք խռովել և պատկերի վրա ցույց տվեք այն ճյուղերը, վոր գուք կարել եք։

Թվաբանություններ։ — Համեմատեցեք, թե վարքան պտռուղ և տալիս այգին ձմռան վերջին կանոնավոր մաքրել խռովելուց հետո և առանց խռովելու։

## ԳԱՐՈՒՆ

Մարտ, Ապրիլ, Մայիս

Գարնան արիմեստրից սկսած յերկրագործական բոլոր աշխատանքները կտարվում են զալլոցական հոգամասում և տանը՝ իրենց աշխատանքների համար հատկացրած հողի վրա։

## ԴԱՍ 43-րդ

### ԶԵՐՄԱՆՈՑՆԵՐ ՇԻՆԵԼԸ

Ցուցադրական նյութ: Հավաքեցեք զանագան ջերմանոցների պատկերներ. դիտեցեք մերձակայքում գտնվող ջերմանոցը և ինքներդ կազմեցեք ջերմանոցների ծրագիր և նկարներ:

Դասարանուկան պարագմունք: Բացատրեցեք ջերմանոցների նշանակությունը բանջարաբուծության և ծաղկաբուծության համար մի քանի բանջարեղենների և ծաղկեների շիթիլ պատրաստելու համար (տոմաթես, պորինջան, բիբար, վարունգ, կազամբ և այլն):

Պորճնական աշխատանք: Մեզ մոտ ջերմանոցները կարելի յե պատրաստել աշնանը՝ կաղամբի շիթիլի համար, բայց կարելի յե շինել և վաղ գարնանը՝ Դրա համար փորում են (2—3 ֆուտ)  $\frac{2}{3}$ —1 մետր խորությամբ և (5—6 ֆուտ) և  $1\frac{1}{3}$  մետր լայնությամբ մի փոս ամեն մի ջերմանոցի համար, փորի յերկարությունը կախված է մեր ցանկությունից: Հյուսիսային կողմից ամրացնում ենք վերշոկանոց կամ 2 դյուիմանոց—6—8 դյում լայնություն ունեցող մի տախտակ: Հարավային կողմից զրվում է 2—3 վերշոկ լայնություն ունեցող նեղ տախտակ, ծայրերն իրար հատ մեխվում են նույնական 2 դյուիմանոց տախտակով: Տախտակների ներսի կողմից կողքը մի փոքր քաղվում է շրջանակների տախտակների հաստությամբ և ջերմանոցը վերելից ծածկվում է ապակի զցած և իրար հետ սեղմ միացած շրջանակներով: Ջերմանոցից կրղմը պետք է դարձրած լինի դեպի հարավ, շրջանակների լայնությունը կարող է լինել մի մետր:

և ավելի: Յերբեմն ապակիների փոխարեն շրջանակների վրա ձգում են հասար պարուսին: Շիթիլը բաց տնկելու ժամանակից 2 ամիս կամ 10 շաբաթ տուաջ փոսերը լցնում են ձիռ այլվող-տաքացած փեյինով և չափ տրորում: Փեյինը վերելից ծածկում են  $\frac{1}{4}$  արշին լավ սկ հողով: Փեյինը տաքացնում և հողի այդ շերտը, վորը պետք է միշտ պահել խոնավ: Ջերմանոցում ունենալ ջերմաչափի և սերմերը պետք է ցանել այն ժամանակ, յերբ ջերմությունը կըրարձրանա 18°—20° աստիճան թիումյուրի:

Աստիճանաբար, վորքան որերը տաքանում են, այնքան ցերեկները շրջանակների հարավային կողմը բարձրացնում է բաց ենք թողնում յերկար ժամանակ՝ կանոնակոր ողափոխության համար, իսկ յեթե գիշերները ցորս և լինում, շրջանակները վրայից ծածկում ենք խսիրով կամ թաղիքով (բեչայով):

Բացովթյա շիթիլ անելիս հարկավոր է զգույշ կարել շիթիլի մայր արմատը և ապա փոխադրել հատուկ պատրաստած պաղ մարգեր, վորոնք միայն վերելից ծածկվում են գիշերները յեղյամից պաշտպանելու համար:

Նախագիծ: Տանը պատրաստեցեք ջերմանոց և պաղ՝ շրջանակավոր մարգեր:

Նյութի մեակումն: Լեզվից.— Նկարագրեցեք ջերմանոցի կառուցվածքն ու նրա նշանակությունը:

Նկարչությունից.— Նկարեցեք ջերմանոցի հատուկագիծն ու պատկերը:

Թվարանությունից.— Կազմեցեք միջակ ջերմանոցի նախահաշիվը: (Զափերը տրվում են կամ իրենք են ընտրում):

## ԴԱՍ 44-րդ

### ՎԱՐՈՒՆԳ ՅԵՎ ՏՈՄՍԹ ՑԱՆԵԼԸ

Պարապմունք արհեստանոցում: Վարունգի համար շինում են 3—4 վերշնկանոց կողեր ունեցող քառակուսի արկղներ, զորոնց մի կողմը շարժական է. հատակը 4 ք. վերշոկ, բարձրությունը՝ 3—3<sup>1</sup>/<sub>2</sub> վերշոկ: Նման առանձներ կարող են պատրաստել կավից:

Դասարանական պարապմունք: Մանուկներն իրենք պետք են ցուցակ կազմեն և գուրս գրեն ցանկացած սերմերը: Վարունգի սերմերից յուրաքանչյուր արկղում ցանում են յերեք հատ և արկղները շարում չերմանոցի փեյինի վրա, իսկ տոմաթը ցանում են կանոնավոր շարքերով՝ իրարից 1<sup>1</sup>/<sub>2</sub> վերշոկ հեռավորության վրա և վոչ խիտ: 3—4 շաբաթ հետո ծլած բույսերը շիթիլում են իրարից 1<sup>1</sup>/<sub>2</sub> վերշոկ հեռու: Վարունգները մնում են իրենց արկղներում:

Վարունգի, տոմարի յեկ մյուս օբյեկտի փոխադրույթի բաց հոդում:—Շիթիլը պետք են փոխադրել աշունքից մշակած, լավ պարարտացրած և մարգերի բաժանած հողում: Փոխադրելուց առաջ շիթիլը պետք են լավ ջրել և յերբ արգեն ջուրը փոքր ինչ կծծվի, ոլետք եւ շիթիլը հաճել զգուշությամբ՝ իրեն տակի հողով և նստացնել առանձին զորոշած տեղում, հուստալով բույսի շրջակա հողը, զորից հետո բույսի շուրջը պետք եւ լցնել փխրուն հողը զոր շիթիլի մոտի հողը չցամաքի: Մինչեւ կազդուրվելը լավ կըլինի բույսը ցնցուղով ջրել ամեն որ, արեի մայր մասնելուց հետո: Շիթիլը պետք են փոխադրել ամպամած յեղանակին կամ ուշ յերեկոյան: Տոմաթի բողադ տալը նպաստում է

բույսի ուժեղանալուն և առատ պատղարերության: Բույսիների ծոցաշխվերը պետք են հեռացնել տակը ցից տընկել և թուփը ցցին կապել խսիրով: Այս գեպքում պըտուղները շուտ են հասնում և լինում են ավելի խոշոր: Նույն ձեռվ են փոխադրում պորնջանի, կազմքի, բիբարի և բամիայի շիթիլը, յեթե միայն պատրաստել ենք ջերմանոցում: Վարունգի շիթիլը փոխադրելու համար՝ արկղիկները լավ ջրում ենք, մարգերի ափերում պատրաստում փոսեր իրարից 1 արշին հեռու և բարձրացնելով արկղիկի շարժական կողքը, շիթիլը նստացնում ենք հողով և կողքերից հող լցնում ու հուպ տալիս: Այնուհետև ջրում ենք յերեկոյան հովին մինչև բույսի կազդուրվելը:

Եվսկուրսիայ:—Մանուկների հետ գիտեցեք բանջարանոցները հիշյալ շիթիլները փոխադրելիս և խնամմելիս. մանուկները պետք են զրի առնեն այն բոլորը, ինչ զոր կարող են գործադրել իրենց բանջարանոցում և լրացնել իրենց նախագիծը:

Դաստիարակի:—Շիթիլել 600 բառակուսի սաժեն տոմաթով:

- 1) յերբ են շիթիլում տոմաթը բաց հողում.
- 2) ի՞նչպիս պետք են պատրաստել հողը տոմաթ շիթիլելուց առաջ.
- 3) ի՞նչպիս են շիթիլում տոմաթեալ.
- 4) Շիթիլելուց հետ հարկավոր են փափկացնել տակի հողը.
- 5) ի՞նչպիս կապել տոմաթեալ թփերը.
- 6) ի՞նչպիս պետք են մարերել ավելորդ հյուղերը:

Գյուղատես: արտադրուր, ամերիկան բարցում: 4

## ԴԱՍ 45-րդ

ԱՅՉԻ ՅԵՎ ՊՏՂԱՏՈՒ ՊԱՐՏԵԶ ՏՆԿԵԼԸ

Ցուցադրական նյութ.—Պատրաստել կանոնավոր պարտեզ տնկելու պատկերներ։ Ցույց տալ կանոնավոր անկած պարտեզ և այզի, յեթե հնար և՝ նախապատրաստական բոլոր աշխատանքներով։

Կազմել տալ նախագիծ խաղողի և պտղատու այգու համար՝ ըստ վորոշված տարածության, ցույց տալ վազերի և պաղատու ծառերի հեռավորությունն ըստ ծառերի մեծության։ Կատարել տալ խաղողի այգու համար պլանտաժ և տնկել տալ վազերի մատները, ուղիղ շարքերով արեելքից արեմուտք կես արշին իրարից հեռու և 2 արշին շարքից շարք։ Ծառելը տնկել տալու համար ընտրել յերկու ձև՝ քառակուսի կամ շեղանկյուն (ռումբ) 5—9 արշին իրարից հեռու ըստ ծառերի մեծանալու ընդունակության, նորատունկ ծառերի կողքին տնկել հենարան—ցից, վոր քամիները շատ չշարժեն նրանց։ Տնկելուց առաջ արմատների վնասված և յերկար մասերը կտրել մազմզուկները խնայել։ Տնկած ծառերի բներին քսել կրածուր, վորի հետ պետք ե լուծված լինի կավ և յեթե հնար և, Փարիզյան կանաչ (վեդրոյին և մախալ)։ Նորատունկ ծառերի տակ պետք ե հողը միշտ պահել փափուկ և մաքրել խոռերից։

Լիոնյային տեղերում պետք և տնկել պտղատու ծառեր և հատապտուղներ՝ հաղարձ, մալինա և յլն՝ վերջիններս վազերի ձևով։

Դանարանական պարապմունք։ Ծանոթացնել աշակերտներին Հայաստանի խաղողի տեսակների հետ

Շուտ հասնող, սեղանի, գինու, պահունի։ Ծանոթացնել յեղոպական լավագույն տեսակների՝ մուսկատ, սողերն, շատա, պիզրո, ալիգոտե, մուսկատ Ալեքսանդրիայի և այլն։ Բերրի տեսակներ՝ արամոն, կատալուն, վրաստանի՝ մցվանի, սափրվանի և լքա ծիթելի։ Վազի հիվանդությունները՝ սիրղում, ոյիղում, ըլիկու և կովելու միջոցները։ Ֆիլոքսերա միջատը և նրա վնասները։ Ամերիկական վազը, նրա նշանակությունը վորպես պատվաստակալ վազի պատվաստ։

Եվկուրսիա։ Յեթե մերձակայքում կան խաղողի զանազան տեսակներ՝ լարավոր, ցցերով, ծառաբազ և այլն, ցանկալի յե ցույց տալ և ծանոթացնել նրանց առավելությունների և թերությունների հետ։ Ցույց տալ ծծմբափոշու փուքս և վերմորել գործիքները, և տոցը, ցանակը, ողոցը, սղոցը, սղոցարերան դանակը, այգեցը գործական մկրատը և նրանց գործածությունը։

## ԴԱՍ 46-րդ

ՀԱՂԱՐՃ ՅԵՎ ՄՈՐԻ ՆՍՏԱՑՆԵԼԸ

Հարցեր։ Տիուել եք դուք հաղարձի և մորիի—մալինայի թուփի վորպիսի տեղերում են նրանք բուսնում։ Մեր քարակույտերի շուրջը, լեռներում բնիչ կարմիր պտղուղներ եք կերել հուլիսի վերջերին և ուղուասուին։

Դասարանական պարապմունք։ Դիրիջանի անտառների բարձր մասերում և նոր-Բայազիզի հրաբխային քարակույտերի մեջ բուսնում են մեծ քանակությունը հաղարձի և մալինայի թփեր, վորոնց պտղուղները շատ համել են և չյութալի շյուսիսային

յերկրներում այդ թփերը բերում, խնամքով տնկում են պարտեզներում և աների բակերում և ստանում են ընտիր պտուղներ: Նրանք շատ պահանջկուտ չեն և հեշտ բազմանում են: Մալիսան աճում և նաև շիվերով: Նրա պտուղները չորացնում և դեղատներում ծախում են, վորովհետև քրանցնելու լավ միջոց ե, մեր լեռնաշխարհի ամեն մի բակում, ամեն մի ուսումնարանին կից պետք ե լինի մալիսայի պարուղը: Մալիսայի պարտեղ տնկելու համար պետք ե փորել 10—12 վերշոկ խորությամբ և լայնությամբ ակոսներ տնկել խնամքով հանած և փոխադրած թփերը և տակը պահել միշտ խոնավ, վորովհետև նրանք խոնավություն են սիրում:

Աջասանք.—Պատրաստեցեք ակոսներ ձեր բակերում և տնկեցեք քսանական թուփ մալիսան և հաղարձ: Աշխատեցեք միշտ խոնավ պահել նրանց տակի հողը:

### ԴԱՍ 47-րդ

#### ԿՐԻՎ ՎՆԱՍՍԱԿԱՐ ՄԻՋԱԾՆԵՐԻ ԴԵՄ

Յուզադրական նյութ:—Անխնամ թողած այգիները սովորաբար ավերածության են յենթարկվում զանազան միջատների, վորդերի և թիթեռների թթվուսների շնորհիվ, վորոնց այնտեղ կարելի յե գտնել թե գարնանը և թե աշնանը: Ժողովեցեք նրանց և դիտեցեք դասարանում: Միջատները սովորաբար ուսնենում 3 զույգ վոտներ, գլուխ, կուրծք և փոր, վորոնք բաղկացած են հողերից, վորից և ստացել են միջատ անունը:

Միջատները սովորաբար կերպարանափոխվում

են: Նրանց ձվերից գուրս են գալիս վորդեր, վորոնք չափազանց շատակեր են: Մի քանի շաբաթ անդադար ուտելուց հետո, վորդերը դառնում են հարսնյակ վորից վորոշ ժամանակ անցնելուց հետո, գուրս և գալիս ձեւվորված միջատ:

Գարնանն ու աշնանը պետք ե ժողովել ծառերի վրայի վոստայնները, վորոնց միջ նրանք խճճված են լինում, և այրել: Զափահաս միջատներ վորսալու համար սովորաբար գործ են ածում «Պաշտպանողական կամ վորսացող զոտիներ»: Ծառերի բներին կավախառն կիր քսելուց հետո, մի մետր բարձրության վրա շինում են մածուցիկ ձյութի գոտի, ուրիշ խոսքով ժառի բնի շուրջը մատանու ձևով  $1-1\frac{1}{2}$  վերշոք լայնությամբ քսում են այդ մածուցիկ թանձր ձյութը, ձյութից վերև կապում բելմից կամ կակուղ խոտից գոտի, վորի վերևից կապելով մոմած թուղթ, ծալում են զեղի ցած, վոր ծածկի այդ կակուղ գոտին և պաշտպանի անձրելից: Այդ խոտի մեջ են հավաքվում և ձու դնում միջատները: Տարեկան 2 անգամ յետ անելով այդ զոտիներն ու թափ տալով, իսկ աշնանը կրակի միջ այրելով, մենք վոչնչացնում ենք նրանց և հնարավորություն չենք տալիս միջատների: Բազմանալու ծառերի վրա յեղած վորդերը վոչնչացնում են առանձին զեղով, վորը պատրաստում են 2 ֆ. պղնձի արջասպից, վորը պետք ե լուծել 4 վեզրո ջրի միջ, և 4—6 ֆ. չմարած կիր՝ նույնպիս 4 վեզրո ջրի միջ լուծված: Գործածելուց առաջ յերկուսը պետք ե խառնել միասին և սրակել ծաղերը վերմորելի գործիքով: Գարնան սկզբին յերը ծառերը ծաղկում, կանաչում են, արևածագից առաջ ծառերը թափ են տալիս սպիտակ

սավանի վրա և թափված միջատներն այրում են կրակով: Կարելի յե միջատներին ժողովի շների մեջ հենց ձեռքով, վրապիսի աշխատանքը կատարում են մանուկ ները, և վոչնչացնել:

Գործնական աժամատանք: Զեր ծառերի վրա շինեցեք պաշտպանողական գոտիներ և փորձեցեք կովկել սովորած բոլոր միջոցներով վնասակար միջատների դեմ:

### ԴԱՍ 48-ՐԴ

#### ԹԻՉՈՒՆԵՐԸ ՊԱՐՏԻՉՈՒՄ ՅԵՎ ԱՆՏԱՌՈՒՄ

Ցուցադրական նյութ: Ժողովեցեք զյուղատնտեսության ոգտակար և վնասատու թոչունների նկարներ: Առաջարկեցեք աշակերտներին, վոր կատարեն զիտողություններ և պարզեն, թե ինչո՞վ ե ապրում այս կամ այն թոչունը:

Ոգտակար բարուններ: (Գուղացու բարեկամներ) կոչվում են այն թոչունները, վորոնք վոչնչացնում են միջատներ, վորդեր և մկներ: Այդ պատճառով պետք է ուրախ լինել յերբ այդիներում, պարտեզներում և բանջարանոցներին մոտ լինում են թոչուններ: Այդպիսի թոչուններն են սարեկներ, ծիծունակներ, մըշահավեր (սև անտառի սարեկներ զեղին կառւցներով), և Հակովիս թոչուններ, կկուն, քոռ բուն և այլն:

Շատ թոչուններ կերակրվում են մոլախոտերի սերմերով, մանր պտուղներով և նույնպիս ոգուստ են բերում, վորովհետև նրանք ուտում են միջատներ, այդպիսիք են թուխկատար, յեզնակ և սերինոս թըռչունները: Բացի դրանից կան թոչուններ, վորոնք գերադասում են հատիկներ, այդ թոչունների կտուցը

կարծ ու հաստ, ձագերին կերակրում են միջատներով: Կլուն սիրում ե կաղամբի թըռթուրը:

Վնասակար թոչուն կարող ե համարվել բազին:

Գործնական աժամատանք: Նկարագրեցեք ձեր տան շրջակայքում պատահող թոչունները, յերբ և վժրտեղ եք տեսել նրանց և ինչո՞վ են նրանք կերակրվում: Պատրաստեցեք սարեկների և այլ թոչունների բներ:

Աժամատանք: Թվաբանությունից.—յեթե յերկու սարեկները մի բոպեյում գտնում և վոչնչացնում են (ուտում են) մի վորդ, վորքան վորդ կուտեն նրանք իրանց տասնամյա կյանքի ընթացքում, յեթե աշխատում են առավոտյան 5 ժամից մինչև յերեկոյան 5 ժամը և մեր պարտեզում ապրում են չորս ամիս տարեկան:

### ԴԱՍ 49-ՐԴ

#### Չ Ա Գ Հ Ա Ն Ե Լ Բ

Նախազիծ: Զվաների վրա թուխս նստացրեք, նրա համար բուն պատրաստեցեք: Հետեւցեք, վոր նամիշտ ունենա մաքուր ջուր և կերակրեցեք ժամանակին: Վոչիներից պաշտպաններու համար կարելի յե մոխրագույն մաշաւմ (մաղ) քսել կամ բվածաղկի փուշ ցանել վըան:

Դուքս յեկած ձագերի համար շինեցեք վանդակ կամ արկղ, վորտեղ պետք ե լինի ավագ, վոր նրանք քջել սկսեն: Առաջին որը կամ 30 ժամ նրանց կերակուր չեն տալիս: Յերկրորդ որվանից, մի ամրող շարաթ նրանց պետք ե տալ շատ պինդ խաշած ձու, որական 5 անգամ. Նրանց տալիս են թեփի փթռուկ, ծեծած հատիկներ կամ մաքրած կորեկ:

Ոգտակար են նաև թարմ կանաչ տալը, վորը չպետք են թաց լինի:

Ճռւտերը պետք են բավարար տեղ ունենան շարժումների համար: Այդ պատճառով ձագերի համար ոգտակար են ունենալ ցանցով պատաժ հատուկ բակ կամ շարժական փոքրիկ հրապարակ (coops broders):

Յերբ նրանք փոքր ինչ կը մեծանան, իհարկե, կսկսեն թուխախ հետ ման գալ ու արածել, բայց շարունակեցեք կերպերի նրանց: Մի մոռացեք նրանց, վոր չկոտորվեն, այլ լավ ձու ածող հավեր դառնան: Դպրոցական աշխատանքային ցուցահանդեսին նրանք պետք են պացուցանեն, վոր դուք աշխատել և հոգատար եք յեղել:

## ԴԱՍ 50-ՐԴ

### ԿԱՐՏՈՓԻԼ ՆԱՏԱՑՆԵԼԸ

Յուզակրական նյութ: Բերեք կարտոֆիլի զանազան տեսակների նմուշները: Դիտեցեք նրանց կաշին առողջությունը, գույնը, աչքերի խորությունը և ձեր: Շուտ ծլեցնելու համար գասարանում արկղների մեջ կարտոֆիլ տնկեցեք մի վերշոկ իրարից հեռու: Վրայից պարարտ հող լցրեք և խոնավ պահեցեք, վոր ծլի: Այսպիսով դուք կարող եք մի տմիս արագացնել կարտոֆիլի բերքը, վորովհետեւ ցրտերն անցնելուց հետո կանխապես պատրաստած հողում շիթիլ կանհք ձած ու արմատակալած կարտոֆիլը: Յեթե ընարեք 40 որում հասնող տեսակը, մայիսի սկզբին արանում և հունիսի 15—20-ին մեր լեռաշխարհում դուք կունենաք ուտելու թարմ կարտոֆիլ:

Դասարանական պարապմունք: Վորոշեցիք, թե ի՞նչ տեղ պետք են տրվի կարտոֆիլին սերմափոխության մեջ: Յեթե յերկնուուկի տեղը աշխանացան ցորեն են ցանվում, ապա այդ ցորենից հետո կարելի յի կարտոֆիլ նստացնել: Կարտոֆիլից հետո կարելի յի գարբին ու յերեքնուուկը ցանել բառը: Դա կը ինինի 5 դաշտյան ցանքսափոխություն: Ի՞նչպիսի ցանքսափոխություն են ընդունված ձեզ մոտ: Վորպիսի բերք եք ստանում 6 չվան տեղից—մի գեսատինից: Կարտոֆիլի ամենամեծ բերքը ստացվում են թիթեւ և փիրուն հողից, վորը արգելք չի հանդիսանում պալարների աղատ զարգանալուն:

Կարտոֆիլի ցանքի տեղը տվելի նպատակահարմար են հերկել և տափանել աշնանից:

Ցույց ափեք կարտոֆիլի նշանակությունը մարդկանց սննդի համար: Հազիվ թե գտնվի մի մարդ, վոր կարտոֆիլ չսիրի և ամեն որ չգործածի առանձին կամ այլ սննդանյութերի հետ:

Գործնական աջանածանք: Այն աշակերտները, վորոնք նպատակ են գրել կարտոֆիլի մշակությունը, պետք և դասարանին զեկուցանեն հող պատրաստելու, կարտոֆիլ նստացնելու, նրա խորության, պալարները ծածկելու, ծլածը 2 անգամ տափանելու, բազմաշիվ թփերը շիթիլ անելու, 2—3 անգամ բողազ տալու, բժշկելու և այլն աշխատանքների մասին: Պարզեցեք հետեւյալ հարցերը. ընդունված են արդյոք կարատել կարտոֆիլը տնկելուց առաջ և ինչ ձեռվ: Ոգտական բարդյոք մանր կարտոֆիլ տնկելը:

Նախապիծ: Կարտոֆիլ տնկել 600 քառակուսի սաժեն տարածության վրա:

1. Յեթիւ և Ի՞նչպես պետք ե մշակել կարտոֆիլի տակի հողը:

2. Ի՞նչ տեղ պետք ե բանի կարտոֆիլը ցանքսափոխության մեջ:

3. Ի՞նչումն և կայանում կարտոֆիլի նշանակությունը:

4. Սաղ կարտոֆիլ տնկեմ, թէ կտրատած:

5. Ի՞նչպես ե մշակվում կարտոֆիլը: (Անձրեց հետո հողը փիլունացնել և շաբաթը մի անգամ կրկնել նույնը):

6. Ի՞նչու պետք ե կարտոֆիլի բողադները լցնել:

7. Վ՞ր տեսակ կարտոֆիլ պետք ե տնկել, վոր լավ լինի:

8. Ի՞նչ պետք ե անեմ ծաղիկները:

### ԴԱՍ 51-ՐԴ

#### ԾԱՌԵՐԻ ՅԵՎ ՎԱԶԻ ՊԱՏՎԱՍՏԸ

Ցուցադրական նյութ: Յեթե ձեր տեղում կան խողի այգիներ և պտղատու պարտեզներ, ցույց տվեք աշակերտաներին բոլոր տեսակ պատվաստներին կարները և գործնական պատվաստը,

Եխիւրսիա: Յեթե մերձակայքում կան խաղողի և պտղատու այգիներ, վորտեղ պատվաստ և կատարվում վայրի տեսակների վրա, կամ վատ տեսած խողի վազի վրա պատվաստում են լավ տեսակները, առելի լավ և գնալ ամբողջ գասարանով և տեղնուածեղը դիտել այդ աշխատանքները:

Ցույց տվեք մանուկներին պտուկով պատվաստե-

լու ձիւ, թամբածի պատվաստը, շիվով պատվաստ և այլն:

Հարցեր: Սերմերից ինչու միշտ լավ պտղատու ծառեր չեն բուսնում (խաչաձև բեղմնավորում), Պատվաստի միջոցով լավագույն տեսակների տարածումը: Նկարագրեցեք պատվաստելու յեղանակները: Ի՞նչպես ե պատրաստվում պատվաստի մահլամը. (Տես դաս № 42) Ի՞նչպես ե կոչվում կեղեկի տակի այն շերտը, վորը սննդանյութեր և անցկացնում (կամբիյ):

Նկարչությունից: Նկարեցիք, թե ինչպես պետք ե կտրել ծառը շիվով և պտուկով պատվաստելիս:

Գործնական աշխատանք: Փորձեցեք անձամբ պատվաստել ձեր պարտեզի ծառերի վրա ավելի աղնիվ տեսակները: Կորիզավորներ՝ կորիզավորների և սերմավորներ՝ սերմավորների վրա:

### ԴԱՍ 52-ՐԴ

#### ԲԱՄԲԱԿ ՅԱՆԵԼԻ

Ցուցադրական նյութ: Ցույց տվեք բամբակի սերմի զանազան տեսակները և նրանց բույսերի պատկերները: Ցույց տվեք բամբակը, բամբակի բույսերի ժողովածուն աշունքից հավաքած: Ծլեցրեք բամբակի սերմը դասարանում՝ ցանելուց առաջ ջրած և 1) մի փոքր ցամաքելուց հետո փիլույնացրած հողում, 2) փիլունացրած և թեթև նստացրած հողում, 3) ցանած և հետո ջրած հողում: Յերկու տերեւ դասնալուց հետո հանցեք և դիտեցեք յուրաքանչյուրի արմատների, չափը, քանակը, ցաղունի հատկությունը և տերեների չափն ու ձեւը:

(Նույն փորձը ցանկալի յե գանազան պարարտանյութերով),

Դասարանական պարապմութեա: Բամբակը մեր յերկի ամենազդակար բույսերից մեկն ե: Նրա չոփերից թուղթ են շինուած կամ վառում վորպես վառելք, կորիզներից շինուած են ընտիր յուզ և քուսպը տալիս անասուններին, իսկ բամբակից պատրաստում են թել և բազմատեսակ զործվածքներ: Յեթե բամբակը լավ մշակենք, մի գեսատինից կարելի և ստանալ 4—6 հարյուր սուրբի: Բամբակի ծիլը սկզբում շատ քնքուշ և և այդ պատճառով նա մեծ հաջողությամբ բուսնում է թեթև, պարաբռ հողերում: Բամբակի համար հողը պետք է հերկել աշնանը կամ վաղ գարունքին: Հերկը կուշտ ջրել (արաթ անել) և յերբ այնքան կը ցամաքի, վոր այլևս չի կպչիլ գութանին կամ արորին վորպես ցիխ, թաց արտը պետք և կրկին հերկել, լավ մանկուել և իսկույն բամբակը ցանել շարքացանով: Ցանելն ու հետո ջրելը վնասակար և, վորովհետեւ հողը գեղնակալում և և ծիլը արագ չի զարդանում: Բամբակը սիրում է ող և արե, այդ պատճառով նրա տակի հողը միշտ պետք է լինի կակուղ և մոլախոտերից ազատ: Արաթ անելն այն ոգուտն ունի, վոր ջրելուց մինչև կրկնաներկն ու տափանը մոլախոտերի սերմերը ծլում են, իսկ կրկնաներկի ժամանակ վոչնչանում:

Բամբակը սլետք և ամառվա ընթացքում յերկու, յերեք անգամ քաղինանել կուլտիվատորով (քաղինի գործիքով և ջրել, վորից հետո հողի բոնած կեղել փոցինել):

Մեզ մոտ բամբակը հաճախ վարակվում և չոռ

հիվանդությամբ, վորը բժշկում են ծծմբափոշի փշելով, Դրա համար կան հատուկ փուքսեր, վորոնք շատ եժան են (արդեն տեսել ենք):

Եխակուրսիա: Այցելել մերձակա փորձադաշտը կամ վորեն որինակի տնահասություն, վորտեղ բամբակի մշակությունը կատարվում և նորագույն ձեերով: Դիտել գործիքները, աշխատանքը, խնդրել զեկավարից, վոր հարկավոր բացատրություններ տա:

Նախագիծ: Զեր հողերից ազատեցեք փոքրիկ հողամաս և ցանեցեք բամբակ կանխապես ընտրելով սերմը: Փորձեցեք շինել մի քանի բարձր մարգեր մի մետր լայնությամբ և բամբակ ցանեցեք շարքով մարգի կողքերից 3—4 վերշոկ դեպի ներսը: Մարգերի մեջ պետք և շինել ակոսներ 12 վերշոկ լայնությամբ և 8—10 վերշոկ խորությամբ և ջրելիս լցնել միայն ակոսները:

Չթողներ վոր մարգերի վրա ջուր բարձրանա:

Նյուրի մեակումը: Լեզվից.—Նկարագրեցեք բամբակի նշանակությունը ձեր շրջանի համար ու նրա տված ոգուտները:

Նկարչությունից.—Նկարեցեք բամբակի բույսը և մշակության զործիքները:

Թվաբանությունից.—Հաշվեցեք ձեր զյուղի բամբակի ցանքերը և վորոշեցեք, թե նրանք վորքան արդյունք կըտան, յեթե դեսյատինից ստացվի 120 ֆութ և ֆութը վաճառվի 4<sup>1/2</sup> սուրլիով:

### ԴԱՍ 53-ՐԴ

#### ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ ՑԱՆԵԼԸ

Յաւցալրական նյուր: Գտեք յեկիպտացորենի բա-

զուկները, իսկ յեթե չեք գտնիլ, բերեք յեզիպացռ-  
լինի տեսակների հատիկներ: Դիտեցեք նրանց տար-  
բերությունը գույնով և հատիկների ձևով:

Յեզիպացռենը մեծ նշանակություն ունի ան-  
ջողի շնչանների համար: Նա շարքով ցանք և պահան-  
ջում և կանոնավոր քաղան՝ հողի փիսրունացնելը:  
Այդ պատճառով յեզիպացռենի ցանքերը նպաստում  
են մոլախոտերի վոչնչացման և այգպիսով խնայում  
ու տնտեսում հողի խոնավությունը: Յեզիպացռենը  
մյուս հացահատիկների հետ համեմատած, կրկնակի-  
բերք և տալիս: Ամերիկայում լավացնելով յեզիպաց-  
ռենի տեսակները, սաեղծել են նրա յուղատու տե-  
սակը և 20% յուր են ստանում: Յեզիպացռենը՝  
յուր այս հատկությունների շնորհիվ այնտեղ զբակել  
և առաջին տեղը: Յեզիպացռենը ունի և շուտ հաս-  
նող տեսակները (չիկվանդինո): Քառասնորյա և սպա-  
սովի, վորոնք կարող են հասնել և շիրակում: Յեզիպ-  
ացռենի բույսը կանաչ զբությամբ ընաիր կեր և  
կաթնատուների համար, յերբ նրանց արոտ չենք ու-  
ղարկում և տանն ենք կերակրում:

Գործնական աւխատանիք: Մանուկները կարող են  
սկսել յեզիպացռենի մշակությունը դպրոցական հո-  
ղամասերում և իրենց տանը: Լավ բույս ստանալու  
համար պետք է ընտրել առողջ և ուժեղ սերմ և ցանե-  
լուց մի որ առաջ գույնը թրչել:

Ծանոթ: Տեղերում մշակվող և հատուկ նշանաւ-  
կություն ունեցող բույսերը մանուկների հետ պետք  
են սկսել մշակել նույն ձևով:

## ԴԱՍ 54-րդ

### ԾԱԲԱՑՈՒՆԿԻ ՏՈՒԵԼ

Տան մոտ, դպրոցի շուրջը և հասարակական վայ-  
րերում ծառ տնկելու և խնամելու հոգսը:

Դասարանական պարագմունիք: Յերկար քնից հե-  
տո, գարնան սկզբից, ընությունը զարգարվում և  
փափուկ հագուստով: Այդ պատճառով գարնանը պետք  
է մատածենք զարգարել մեր տունն ու գյուղը: Մեր  
գյուղերից շատերում և զպրոցների մեծամասնության  
շուրջը չկա վոչ մի թուփ, վոչ մի ծառ: Մարդուս աչքը  
բան չի գտնում հանգստանալու, վոչ մի բան չունի  
հիանալու և զվարթանալու, բայց վորքան հեշտ և փո-  
խել այդ տխուր պատկերը, յեթե միայն ցանկանանք:

Յեթե մենք փողոցների յերկարությամբ ծառեր  
տնկենք, իսկ տների մոտ նաև թփեր և ծաղկիներ,  
միանգամայն կը փոխենք ամբողջ գյուղի և բնակա-  
րանների տեսքն ու բնույթը:

Ի հարկե մի տարում չի կարելի կատարել այդ  
փոփոխությունը, բայց կարելի յե կազմել ծառ տըն-  
կելու մի քանի տարվա ծրագիր և աստիճանաբար  
իրագործել այն:

Ծառատունգի նախագիծը: Ծառատունկի տոնի  
ծրագրի մեջ կարելի յե մացնել. 1) Հասարակական  
վայրերում, ճանապարհների և փողոցների յերկու կող-  
մում ծառեր և թփեր տնկելը, զպրոցի և գյուղխոր-  
հրզի բակերում ծառեր և թփեր տնկելը. 2) պալա-  
տու և այլ ծառեր ու թփեր տնկելը տներին մոտ և  
3) ծաղկամաններում և փայտե փոքր արկղներում  
ծաղիկներ տնկելը՝ լուսամուտների համար. այդպիսի

ծաղիկներն են՝ շաբոն, հերանը, ամսական վարդը,  
փռկսինը, կակտուսները և այլն:

Մանուկների հետ աշխատեցեք աճեցնել՝ հերան,  
շաբոն, պորտուլակ, պատատուկներ և այլն:

Լավ, ծաղկանոց ունենալը դժվար չե և նրանք  
հրաշալի զարդ կլինեն դպրոցի և աների համար: Լավ,  
ծաղկազարդ տուն, գլուզ և գյուղ ունենալը պետք ե  
յուրաքանչյուր քաղաքացու պարծանքի առարկա լինի:  
Մեղ վրա վերցնենք այդ հոգս ու պարծանքը:

Ծանօթություն.—Ռուսերեն գիտցողների համար  
կարող ենք մատնանշել.

Վ. ինների.—«Удущенное полеводечво, ч. 1 и  
II 1924թ.»:

Ֆրիզովին յել կալուզին.—По животноводству.

Ուլուվ յել Կեշինով, Լուիսիմոկիր.—По садо-  
водству и огородничеству.

Դյավինկո.—Մեղվարուծություն:

Հայերեն.—Բանջարաբուծություն:  
Վաղի խնամքը. կ. Ե.՝ Շահնազարյանի:

Մեղվարուծություն Բարիսուղարյանի:

Կաթնատու կովի խնամքը. } Յուրմալիսի:  
Հորթի խնամքը. }

Բամբակի մշակությունը. Տարատինովի հայլն:



48. 956

ԳԻՆԸ 35 ԿՈՂ.

